Շաբաթօրյա դպրոցում Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ

ՀԱԿՈԲՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ

Քլինթոն Վոլեն

Բովանդակություն

Դաս 1. ՀԱԿՈԲՈՍԸ՝ ՏԻՐՈՋ ԵՂԲԱՅՐԸ 7
Դաս 2. ՄԵՐ ՀԱՎԱՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ 16
Դաս 3. ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆԸ 25
Դաս 4. ԼՍՈՂՆԵՐ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ 34
Դաս 5. ՍԵՐ ԵՎ ՕՐԵՆՔ 43
Դաս 6. ԳՈՐԾՈՒՆ ՀԱՎԱՏԸ 53
Դաս 7. ԼԵՋՎԻ ՍԱՆՁԱՀԱՐՈՒՄԸ 62
Դաս 8. ԵՐԿՆԱՅԻՆ ԻՄԱՍՏՆՈՒԹՅԱՆ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ 71
Դաս 9. ՄԵԿ ՕՐԵՆՍԴԻՐ ՈՒ ԴԱՏԱՎՈՐ 80
Դաս 10. ԼԱՑԵ՛Ք ԵՎ Ո՞ՂԲ ԱՐԵՔ 89
Դաս 11. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՆՁԻՆ 98
Դաս 12. ԱՂՈԹՔԸ, ԱՊԱՔԻՆՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 108
Դաս 13. ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԸ 117

ԱՂՈԹՔԻ ՇԱԲԱԹ

2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-27

Տարեվերջյան աղոթքի շաբաթը Աստծո ժողովրդի միավորված աղոթքն է: Դրանք կանգառի օրեր են ժամանակի արագընթաց հոսքի մեջ, սեփական հոգևոր վիճակը, Տիրոջ հետ հանդիպմանը սեփական պատրաստվածությունը ստուգելու օրեր:

Ներկայումս տարեվերջյան աղոթքի օրերը կապակցվում են Իսրայելի դատաստանի օրերի հետ (Ղևտացոց 23.23-28), որոնցով ավարտվում էր կրոնական տարին, և սկսվում էր նորը: Սա Տիրոջ հետ հանդիպման յուրօրինակ քննություն է: Որպեսզի լինենք երջանիկ, նվիրված, հույսով առլեցուն, զգոն՝ Տիրոջ գալստյան հարցում և պատրաստ լինենք այդ վիթխարի իրադարձությանը, պետք է արթուն լինենք և աղոթք անենք:

«Այսօր մենք ապրում ենք քավության մեծ օրը: Նախակերպարային ծառայության մեջ, այն ժամանակ, երբ քահանայապետը քավություն էր կատարում ողջ Իսրայելի համար, ամենքը պետք է խոնարհեցնեին իրենց հոգիները ապաշխարելու և Աստծո առջև իրենց մեղքերը խոստովանելու համար, որպեսզի չմեկուսացվեին հասարակությունից: Նույն կերպ էլ յուրաքանչյուրը, ով ցանկանում է, որ իր անունը պահպանվի կյանքի գրքում, պետք է այժմ, փորձությունների այս մնացած քիչ օրերի ընթացքում իր հոգին խոնարհեցնի Աստծո առջև՝ զղջալով իր մեղքերի համար և անկեղծորեն ապաշխարելով: Անհրաժեշտ է խորապես հետազոտել սեփական սիրտը: Թեթևամտությունն ու անլրջությունը, որ հատուկ են իրենց քրիստոնյա անվանող այդքա՜ն շատ մարդկանց, պետք է հաղթահարվեն: Ծանր պայքար է սպասվում բոլորին, ովքեր ցանկանում են իշխել սեփական մեղսավոր հակումներին: Մենք չենք կարող փրկվել ողջ կոլեկտիվով: Մեկի ազնվությունն ու նվիրվածությունը չեն կարող մեկ ուրիշի մեջ փոխհատուցել այդ հատկանիշների բացակայությունը: Թեև բոլոր մարդիկ կկանգնեն Աստծո դատաստանի առջև, սակայն Նա այնքան մանրակրկիտ է վերաբերվում յուրաքանչյուրի գործի քննությանը, ասես ողջ աշխարհում ուրիշ ոչ ոք չկա: Յուրաքանչյուրը պետք է փորձվի և առանց որևէ բծի ու արատի կամ ինչ-որ նման բանի գտնվի» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 489, 490):

«Աստված իսրայելացիներին հրամայել էր հավաքվել Իր առջև՝ սահմանված ժամանակին և Իր ընտրած վայրում, ինչպես նաև որոշակի օրեր պահել, երբ հարկավոր է ձեռնպահ մնալ ոչ անհրաժեշտ աշխատանքից, որովհետև այդ ժամանակը հարկավոր է նվիրաբերել այն օրհնությունների մասին մտորելուն, որոնք Նա պարգևել էր նրանց: Այդ սահմանված ժամկետներում հրեաները պետք է ընծաներ, կամավոր նվիրատվություններ և շնորհակալական զոհեր բերեին Տիրոջը՝ Նրա օրհնություններին համապատասխան» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 2, 574):

Որպեսզի աղոթքի օրերն օրհնություն բերեն մեզանից յուրաքանչյուրին, անհրաժեշտ է համապատասխան նախապատրաստություն.

Անհրաժեշտ է ճշտել Աստծո և միմյանց հետ մեր փոխհարաբերությունները:

Նախքան այդ աղոթքի օրերը՝ պետք է վերացվի ցանկացած օտարացում, և կատարյալ հաշտություն ձեռք բերվի:

«Եվ որ ժամանակ կանգնեք աղոթք անելու, ներեցեք, եթե մեկի դեմ բան ունենաք, որպեսզի ձեր Հայրն էլ, որ երկնքում է, ձեր հանցանքը ների» (Մարկոս 11.25):

«Ոչ ոքի ոչինչ պարտական չմնաք՝ բացի իրար սիրելուց, որովհետև ընկերոջը սիրելը օրենքը կատարել է» (Հռոմեացիս 13.8):

Ձեզ և ձեր տունը նախապատրաստե՛ք Տիրոջ հետ հանդիպմանը:

Աղոթքի շաբաթն սկսվելուց առաջ հիմնավոր մաքրեք տունը:

Աստծո ներկայացուցիչների տանը պետք է մաքրություն, կոկիկություն և կարգուկանոն լինի:

«Մեծ և սուրբ Աստծո ներկայացուցիչները պետք է իրենց հոգիները անարատ ու մաքուր պահեն, ինչը դրսևորվում է և՛ նրանց հագուստի, և՛ տան կահավորանքի մեջ, որպեսզի ծառայող հրեշտակները կարողանան ապացույց ունենալ, որ ճշմարտությունն իսկապես վերափոխում է կյանքը՝ մաքրելով հոգին և առավել նրբին դարձնելով ճաշակը...» (Է. Ուայթ, Քրիստոնեական տուն, գլուխ 2):

«Բայց դուք ընտիր ազգ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ, որ քարոզեք Նրա առաքինությունները, որ ձեզ խավարից կանչեց Իր զարմանալի լույսի մեջ» (Ա Պետրոս 2.9):

Ընծա նախապատրաստեք Տիրոջ համար:

«Ձեր ընծաներով եկե՛ք՝ Աստծո օրհնության չափով: Երախտագիտություն հայտնե՛ք ձեր Արարչին՝ բոլոր բարիքները Տվողին՝ բարեհաճ ընծաների տեսքով: Թող աշխատունակ մարդկանցից ոչ ոք չգա դատարկաձեռն: «Բոլոր տասանորդը տարեք գանձատունը, որ Իմ տանը պաշար լինի, և Ինձ մեկ փորձեցե՛ք սրանով, ասում է Զորաց Տերը, թե արդյոք չե՞մ բանա ձեզ համար երկնքի պատուհանները և օրհնություն թափի ձեզ համար՝ մինչև որ նրա համար տեղ չլինի» (Մաղաքիա 3.10)» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 2, 576):

Աղոթքի շաբավա ընթացքում խոշոր միջոցառումներ մի՛ նախատեսեք, ջանացե՛ք հեռանալ սովորական առօրյա ունայնությունից և ավելի շատ ժամանակ անցկացրեք Աստծո Խոսքի մասին մտորելով ու աղոթքով:

Տարվա վերջին շաբաթվա ժամանակն օգտագործե՛ք միմյանց այցելելու համար՝ միմյանց սատարելով հավատով ու հույսով:

«Ամենքը, ովքեր կարող են, թո՛ղ հաճախեն տարեկան ժողովներին: Ամենքին անհրաժեշտ է զգալ, որ դա իրենցից պահանջում է Աստված: Եթե մարդիկ չեն օգտագործում այն առավելությունները, որ տալիս է Աստված, որպեսզի ամրապնդվեն Իր մեջ՝ Իր շնորհի զորությամբ, նրանք վերջնականապես կթուլանան և կկորցնեն՝ Աստծուն անմնացորդ նվիրաբերելու ցանկությունը: Քույրե՛ր ու եղբայրնե՛ր, եկե՛ք այդ սրբազան, հանդիսավոր ժողովներին, որպեսզի գտնեք Հիսուսին: Նա կայցելի տոնին և ձեզ համար կանի այն, ինչի կարիքը դուք ամենից շատ ունեք» (Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 2, 575):

Թանկագի՛ն քույրեր ու եղբայրներ: Մենք ապրում ենք Քրիստոսի գալստյան նախաշեմին: Ավելի շատ հնարավորություններ որոնեցե՛ք միասին աղոթելու, Աստծո՝ մեր կյանքի Աղբյուրի մասին խորհելու համար: Թո՛ղ այս աղոթքի շաբաթվա մտորումները դրդեն մեզ՝ Աստծո հետ կյանքի առավելություններով կիսվելու բոլորի հետ, ում Տերն ուղարկում է մեզ ընդառաջ:

ԵԱԲ աղոթքի ծառայություն

«Ծղոտե ուղե՞ղ»

Հակոբոս առաքյալի Ուղերձը Աստվածաշնչի առավել սխալ ըմբռնվող գրքերից է: 1519 թվականին Լայպցիգում քննարկումների ժամանակ Հռոմի կաթոլիկ եկեղեցու գիտնական Իոհան Էկկը դիմեց Հակոբոսի թղթին՝ համառորեն պնդելով գործերի անհրաժեշտությունը, որպեսզի հակադրվի՝ բացառապես հավատով արդարացման մասին Մարտին Լյութերի հայացքներին:

Լյութերն իր հերթին վերջին հաշվով հերքեց Թղթի՝ Աստծուց ներշնչված լինելը՝ գլխավորապես ելնելով այն սխալ նախապայմանից, որ այն ուսուցանում է գործերով արդարացում: 1522 թ. իր կողմից գերմաներեն թարգմանված Նոր Կտակարանի ներածության մեջ Լյութերը նշել է, որ գերադասում է այնպիսի գրքեր, ինչպիսիք են Հովհաննեսի ավետարանը, Հովհաննես առաքյալի առաջին թուղթը, Հռոմեացիս, Գաղատացիս, Եփեսացիս թղթերը և Պետրոս առաքյալի առաջին թուղթը, որոնք բացահայտում են Քրիստոսին և սովորեցնում են «ամեն անհրաժեշտն ու օրհնյալը... ինչ հարկավոր է իմանալ»:

Հակոբոսի թղթի վերաբերյալ նրա առաջաբանը խիստ բացասական է: Լյութերն այն անվանել է «իսկապես ծղոտե թուղթ», քանի որ այն «իր մեջ չի բովանդակում ավետարանի բնույթը: Թեև Լյութերը երբեք Սուրբ Գրքի կանոնից չի բացառել Հակոբոսի թուղթը, նա այն վերագրում էր Սուրբ Գրքի այն մասին, որն ինքը համարում էր հիմնական կանոն:

Լյութերի շեշտադրումը Պողոսի թղթերի վրա՝ հատկապես Հռոմեացիս և Գաղատացիս, ինչպես նաև Հակոբոսի թուղթը չընդունելը, որը նա օժտում էր լոկ կրոնական արժեքով, մի քանի դար ազդեցություն գործեց քրիստոնեական մտքի մի նշանակալի հատվածի վրա:

Բայց ո՞վ էր Հակոբոսը: Օրինամո՞լ էր նա, ով պայքարում էր հավատով արդարացման մասին Պողոսի գաղափարի դեմ և սովորեցնում էր, որ արդարացումն իրականում գործերի արդյունք է: Թե՞ պարզապես տվյալ հարցի մի փոքր այլ տեսանկյունն է բացահայտել՝ Հիսուսի ուսմունքի վերաբերյալ որոշ տեսակետների նման, որ մենք գտնում ենք Ավետարանում: Պատասխանն, անկասկած, վերջինն է:

Բոլոր բարենորոգիչները չէ, որ կիսում էին Հակոբոսի թղթի վերաբերյալ Լյութերի անբարենպաստ գնահատականը: Այնպիսի հանրահայտ մի անձնավորություն, ինչպիսին Մելանքթոնն էր՝ Լյութերի մերձավորագույն ընկերը, հավատում էր, որ Պողոսի թղթերն ու Հակոբոսի թուղթը չեն հակասում միմյանց:

Հակոբոսը լավ էր ճանաչում Հիսուսին: Նրա ուղերձը, հավանաբար, գոյություն ունեցող բոլոր քրիստոնեական գրվածքներից առաջինն էր, և այն բոլոր ուղերձներից առավել է հաղորդում Հիսուսի ուսմունքը, որ մենք գտնում ենք Ավետարաններում: Ինչպես և Հիսուսի առակներում, Հակոբոսի Թղթում մենք տեսնում ենք բազում կերպարներ՝ վերցված գյուղատնտեսության բնագավառից և ֆինանսների աշխարհից: Այլ կարևոր թեմաներ խոսում են իմաստության, աղոթքի և հատկապես հավատի մասին:

Հակոբոսը եզակի է նաև այլ առումներով: Նա մեր առջև կիսաբաց է անում քողը՝ թույլ տալով տեսնել որոշ դժվարություններ, որոնց բախվում էին առաջին քրիստոնեական համայնքները: Եկեղեցի էին ներթափանցում նախանձը, խանդն ու աշխարհիկությունը, այդ պատճառով տպավորություն է ստեղծվում, որ տեղ էր գտել սոցիալական և մշակութային ճնշումը, որը հարուստ և աղքատ քրիստոնյաներին տրամադրում էր միմյանց դեմ: Մենք նաև տեսնում ենք ծավալված մեծ պայքարը՝ ելնելով այ բանից, որ Հակոբոսը հանդես է գալիս կեղծ իմաստությունների և հավատի դրսևորումների դեմ:

Յոթերորդ օրվա ադվենտիստների համար առանձնահատուկ կերպով կարևոր է, որ Հակոբոսի Թուղթը Հիսուսի վերադարձի հանդեպ վստահություն է արտահայտում, այնտեղ առանձնահատուկ տեղ է վերապահված այնպիսի թեմաների, ինչպիսիք են՝ օրենքը, դատաստանը և Երկրորդ գալուստը: Այստեղ նաև ներկայացված է Եղիան՝ որպես ընդօրինակման օրինակ: Մեզ՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներիս համար դա հատկապես արդիական է. չէ՞ որ մեզ հանձնարարված է ճանապարհ հարթել Քրիստոսի Երկրորդ գալստյան համար:

Այսպիսով, կարելի է ասել, որ առաջիկա եռամսյակում մեր ճանապարհորդությունն ընդգրկում է ողջ քրիստոնեական դարաշրջանը, քանի որ ներառում է ամենավաղ խրատներից մեկը, ինչպես նաև լուսաբանում է կարևոր ճշմարտություններ՝ վերջին օրերի համար:

Աստվածաբանության դոկտոր Քլինթոն Վոլենը Վեհաժողովին կից Աստվածաշնչյան հետազոտությունների ինստիտուտի տնօրենի օգնականն է: Նա մասնագիտանում է Նոր Կտակարանի և հին հուդաիզմի հետ նրա կապերի ոլորտում: Դոկտոր Վոլենն ապրել և աշխատել է Ռուսաստանում, Նոր Զելանդիայում, Միացյալ Թագավորությունում և Ֆիլիպիններում: Նա և «Ադվենտիստ ընդ Ռևյուում»-ում աշխատող իր կինը՝ Ջինան, երկու երեխա ունեն՝ Դենիելը և Հեզերը:

Դաս 1

սեպտեմբերի 27 – հոկտեմբերի 3

ՀԱԿՈԲՈՍԸ՝ ՏԻՐՈՋ ԵՂԲԱՅՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հովհաննես 7.2-5, Ա Կորնթացիս 15.5-7, Հակոբոս 1.3, 2.5, Ա Պետրոս 2.9,10, Մատթեոս 7.24-27:

Հիշելու համարը.

«Դուք Իմ բարեկամներն եք, եթե անեք, ինչ որ Ես պատվիրում եմ ձեզ» (Հովհաննես 15.14):

Այսօր մենք հեռու ենք քրիստոնեական եկեղեցու առաջին օրերից՝ ինչպես մշակութային, այնպես էլ ժամանակային առումով: Այդ պատճառով մենք աղոտ պատկերացում ունենք այն մասին, թե ինչ բնույթ ուներ քրիստոնեական շարժմանը պատկանելը այն վաղ շրջանում, երբ շատ համայնքներ հավաքվում էին տներում, իսկ հավատավորների մեծ մասը իրենց եղբայր հրեաներից հալածվող հրեաներ էին: Հակոբոսի ուղերձը մեզ հնարավորություն է տալիս՝ տեսնելու ամենավաղ հուդայական քրիստոնեությունը՝ նախքան այն կկորչեր հուդայաքրիստոնեական հակամարտության մշուշում, երբ երկրորդ դարում և հետագայում գերազանցապես դարձի եկած հեթանոսներից բաղկացած եկեղեցին դուրս մղեց հրեաներին:

Կարդալով Հակոբոսի Թուղթը՝ չի կարելի ասել, թե տեղական եկեղեցու որևէ ճգնաժամ կամ սուր կարիք էր ստիպել առաքյալին՝ գրելու այն: Ավելի շուտ՝ այն հասցեագրված է ողջ քրիստոնեական համայնքին, «որ ցրված էին» (Հակոբոս 1.1):

Սակայն, նախքան Թղթի ուսումնասիրության մեջ խորամուխ լինելը՝ այս շաբաթ մենք կուսումնասիրենք իր՝ հեղինակի մասին տեղեկատվությունը: Մենք կառնչվենք այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝՝ ո՞վ էր Հակոբոսը, ի՞նչ է հայտնի նրա ծագման, կենսագրության մասին, ի՞նչ կապ ուներ նա Հիսուսի հետ, ի՞նչ դիրք էր զբաղեցնում եկեղեցում:

Միաշաբթի սեպտեմբերի 28

Հիսուսի եղբայր Հակոբոսը

Ակնհայտորեն, Ուղերձի հեղինակը քաջ հայտնի էր եկեղեցում, քանի որ մենք նրա նամակում որևէ այլ տեղեկատվություն չենք գտնում նրա մասին, բացի Հակոբոս 1.1-ում եղածից՝ «Հակոբոս՝ Աստծո և Հիսուս Քրիստոսի ծառա. տասներկու ցեղերիդ, որ ցրված եք, ողջույն»:

Այսպիսով, նրա ինքնությունը որոշելիս մենք կարող ենք բավականին արագորեն կրճատել տարբերակների քանակը: Նոր Կտակարանում Հակոբոս անունով չորս մարդու ենք հանդիպում: Նրանք տասներկու աշակերտներից երկուսն են (Մարկոս 3.17,18), Հուդայի հայրը (տասներկուսից մեկը, բայց ոչ Իսկարիովտացին, Ղուկաս 6.16) և Հիսուսի եղբայրներից մեկը (Մարկոս 6.3): Այս չորս մարդուց միայն Հիսուսի եղբայրն է բավականաչափ երկար ապրել և բավականաչափ նշանավոր եղել եկեղեցում, որպեսզի այդպիսի Թուղթ գրի: Այդ պատճառով մենք հավատում ենք, որ այդ նորկտակարանյան գրքի հեղինակը Հիսուսի եղբայր Հակոբոսն է:

Լինելով հյուսնի որդի (Մատթեոս 13.55)՝ Հակոբոսը ուսումնառության ավելի լավ հնարավորություններ ուներ, քան սովորական գյուղացիները: Նրա Թուղթը Նոր Կտակարանում գրական հունարենի լավագույն օրինակներից մեկն է: Իր հարուստ բառապաշարով, հռետորականության հակվածությամբ և Հին Կտակարանից մեջբերումներով այն զիջում է միայն Եբրայեցիս Թղթին: Քանի որ Հակոբոսի անունը առաջինն է Հիսուսի եղբայրների ցանկում, նա, հավանաբար, ավագ որդին էր: Սակայն այն փաստը, որ Հիսուսն Իր մոր մասին հոգածությունը վստահեց Հովհաննեսին՝ սիրելի աշակերտին (Հովհաննես 19.26,27), թույլ է տալիս ենթադրելու, որ Նրա եղբայրները ոչ թե Մարիամի որդիներն էին, այլ Հովսեփի որդիները՝ նախորդ ամուսնությունից:

Հիսուսի ծառայության համատեքստում կարդացե՛ք այսպիսի մի համար. «Եվ Նրա ընտանիքը լսելով՝ դուրս եկան Նրան բռնելու, որովհետև ասում էին, թե գժվել է» (Մարկոս 3.21, տե՛ս նաև Հովհաննես 7.2-5): Ընթերցված համարները ի՞նչ են ասում այն մասին, թե ինչպես էին ընկալում Հիսուսին Իր ընտանիքում: Սրանից ի՞նչ դասեր կարող ենք քաղելմենք մեզ համար, եթե երբեմն մեր մերձավորները չեն հասկանում մեզ: _____

«Նրա եղբայրները աղավաղված պատկերացում ունեին Փրկչի նշանակության մասին և չէին հավատում Հիսուսի աստվածային ծագմանը, այդ պատճառով նրանք դրդում էին Նրան՝ Իրեն հայտնել Տաղավարահարաց տոնին» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 485, 486):

Երկուշաբթի սեպտեմբերի 29

Հակոբոսը՝ որպես հավատավոր

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 15.5-7 և Գործք առաքելոց 1.14-ը: Ի՞նչ է ասվում այստեղ այն փոփոխությունների մասին, որ տեղի էին ունեցել Հակոբոսի հետ: _____

_____

_____

Իր հարությունից հետո Հիսուսը հայտնվել է շատերին, ներառյալ՝ Պետրոսին և «տասներկուսին» (բացառությամբ Հուդա Իսկարիովտացու): Հետո Նա միաժամանակ հայտնվել է ավելի քան հինգ հարյուր մարդու: Ակներևաբար, Հակոբոսը ներկա չի եղել այդ հավաքին, որովհետև Հիսուսը Նրան առանձին է հայտնվել, և դա հատուկ հայտնություն էր, քանի որ այն հատուկ է նշված: Աստվածաշունչը չի հայտնում, թե ինչ է տեղի ունեցել այդ հանդիպման ժամանակ: Բայց, ակներևաբար, այն մեծ ազդեցություն է գործել Հակոբոսի վրա, որովհետև նա դարձավ Հիսուսի հավատարիմ հետևորդը և եկեղեցու ազդեցիկ առաջնորդ:

Մեզ է՞լ ինչ է հայտնի Հակոբոսի մասին: Գործք առաքելոց 12.16,17, 15.13,14,19, Գործք առաքելոց 21.17-19, Գաղատացիս 1.18,19, 2.9: _____

_____

_____

Հակոբոսը շատ արագ ազդեցիկ անձ դարձավ Երուսաղեմի եկեղեցում: Այն բանից հետո, երբ հրեշտակը Պետրոսին ազատեց բանտից (ՔՀ 44 թ.), Պետրոսը խնդրեց հայտնել Հակոբոսին, թե ինչ տեղի ունեցավ իր հետ (Գործք առաքելոց 12.17): Հինգ տարի անց Հակոբոսը նախագահում էր Երուսաղեմի խորհրդում և հռչակեց խորհրդի ընդունած որոշումը: Թվարկելով Երուսաղեմի եկեղեցու «սյուներին»՝ Պողոսը Հակոբոսին հիշատակում է Պետրոսից և Հովհաննեսից առաջ (Գաղատացիս 2.9): Դրանից մի քանի տարի հետո (ՔՀ 58 թ.), երբ Պողոսը բերեց՝ տարբեր եկեղեցիներից Երուսաղեմի աղքատների

համար հավաքված միջոցները, այդ միջոցները դրեցին Հակոբոսի ոտքերի տակ (տե՛ս Է. Ուայթ, Ակնարկներ Պողոսի կյանքից *(Sketches From the Life of Paul)*, 208, 209):

Ամենայն հավանականությամբ, Հակոբոսին շատ էին պատվում բազում դարերի ընթացքում՝ առաքյալների մահից հետո էլ: Նրա բարեպաշտության մասին այնքան առասպելներ են հյուսվել, որ նա հիշվել է որպես «Հակոբոս Բարեպաշտ»: Այսպիսով՝ թեև սկզբում Հակոբոսը մեծ կասկածներ ուներ Հիսուսի վերաբերյալ, հետագայում նա դարձավ վաղ եկեղեցու հոգևոր հսկաներից մեկը:

Երեքշաբթի սեպտեմբերի 30

Հակոբոսն ու Ավետարանը

Ցավոք, հնարավոր է՝ Լյութերի ազդեցության պատճառով շատ քրիստոնյաներ չեն կարող տեսնել այն կարևոր լուրը, որ բովանդակվում է Հակոբոսի թղթում: Չնվազեցնելով իր օրերի եկեղեցու համար արված Լյութերի ավանդը՝ մենք պետք է հիշենք, որ «բարենորոգումը չավարտվեց... Լյութերի մահվամբ: Այն պետք է շարունակվի մինչև այս աշխարհի պատմության վերջին օրերը»: Թեև բարենորոգիչները շարունակում էին կիսել որոշ «լուրջ մոլորություններ», «այն ժամանակից ի վեր և ցայսօր մշտապես նոր լույս էր լուսավորում Սուրբ Գիրքը և մշտապես նոր ճշմարտություններ էին բացահայտվում» (Է. Ուայթ, Փրկության պատմություն, 353):

Այդ պատճառով ծագեց Մեծ արթնացումը, որին նպաստեցին Ջոնաթան Էդվարդսը, Ջորջ Ուայթֆիլդը և Ուեսլի եղբայրները, ովքեր դարձան մեթոդիստական շարժման հիմնադիրները, որն ընդգծում էր սրբության վճռորոշ նշանակությունը քրիստոնեական կյանքում: Բարենորոգման գործը շարունակություն ստացավ Երկրորդ արթնացման շնորհիվ, որի ժամանակ Աստված կանգնեցրեց Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին՝ Երեք հրեշտակների լուրը հռչակելու համար: Այս համաշխարհային քարոզի գագաթնակետը Հոգով լեցուն վկայությունն է այն մարդկանց, ովքեր «պահում են Աստծո պատվիրանները և Հիսուսի հավատքը» (Հայտնություն 14.12):

Կարդացե՛ք Հակոբոս 1.3, 2.5,22,23, 5.15-ը: Տվյալ տեքստերում ինչպե՞ս է նկարագրված հավատի ազդեցությունը: Համաձայն այս տեքստերի՝ ի՞նչ է նշանակում ապրել հավատով: Դրանք ինչպե՞ս են ցույց տալիս մեզ, որ հա-

վատը ավելին է, քան առաջարկվող ճշմարտություններին մտավոր համաձայնությունը: _____

_____

_____

Ոմանց կարող է զարմացնել այն փաստը, որ իր համառոտ Ուղերձում Հակոբոսը *հավատի* մասին խոսում է 19 անգամ՝ ավելի շատ, քան *գործերի և արդարացման* մասին՝ միասին վերցրած: Հավատի կարևորությունը փաստորեն ընդգծվում է առաջին գլխի հենց սկզբից՝ կապված փորձությունների և իմաստություն խնդրելու հետ: Դա ցույց է տալիս, որ Հակոբոսը ոչ թե պարզապես գրում է հավատավորներին, այլ նրանցից հավատի որոշակի որակ է ակնկալում: Ինչպես մենք կտեսնենք, ինչ-որ բանի հանդեպ հավատն ինքնին շատ օգուտ չի բերում. իսկական հավատը որոշակի ճանաչելի բնութագրեր ունի: Այսինքն՝ իսկական հավատը կդրսևորվի հավատավոր մարդու կյանքում և բնավորության մեջ:

Ձեր առօրյա գործերն ինչպե՞ս են բացահայտում ձեր հավատի որակն ու իրական բնույթը: Դուք ինչպե՞ս կարող եք ցույց տալ ձեր հավատի իրական լինելը անգամ «մանրուքներում»:

Չորեքշաբթի հոկտեմբերի 1

«Տասներկու ցեղերիդ, որ ցրված եք»

Կարդացե՛ք Հակոբոս 1.1, Գործք առաքելոց 11.19-21, Ա Պետրոս 2.9,10-ը: Ովքե՞ր են այդ «տասներկու ցեղերը», և ինչպե՞ս են նրանք ցրվել: _____

_____

_____

_____

Ինչպես տեսնում ենք, Հակոբոսը գրում էր հավատավորներին: Սկզբում Ավետարանի աշխատանքը կենտրոնացած էր Երուսաղեմում (Ղուկաս 24.47): Բայց հալածանքների արդյունքում, որոնք ուժգնացան Ստեփաննոսի մահից հետո, հավատավորները ցրվեցին, և Ավետարանի սերմը ցանվեց Հռոմեական կայսրության քաղաքներում և դրանց հարող տարածքներում:

Համաձայն Գործք առաքելոց 11-ի՝ Ավետարանը բավականին արագ տարածվեց հեթանոսների շրջանում՝ սկսած Անտիոքից: Հավա-

նաբար, «տասներկու ցեղեր» արտահայտությունը դիմելաձև է բոլոր քրիստոնյաներին: Ստեղծվում է տպավորություն, որ այդ ժամանակ չկային տարբեր համայնքներ՝ կախված ազգային պատկանելությունից: Այդ պատճառով Երուսաղեմի խորհուրդը շուտով ստիպված եղավ որոշում ընդունել այն մասին, թե պե՞տք է հավատավոր հեթանոսները նախ հրեաներ դառնան թլփատության միջոցով (Գործք առաքելոց 15.1-6), որպեսզի դառնան քրիստոնյա:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 15.13-21-ը: Հակոբոսն ինչպե՞ս է առաջարկում լուծել վաղ եկեղեցում առաջ եկած խնդիրը: _____

_____

_____

Սուրբ Գրքի վրա հիմնված որոշումը օգնեց պահպանելու եկեղեցու միասնականությունը. Հակոբոսը դիմեց Ամովսի մարգարեությանն այն մասին, որ Իսրայելի վերականգնումն ու ընդլայնումը կդիպչի նաև հեթանոսներին (Գործք առաքելոց 15.16,17): Նա առաջարկեց հրահանգ՝ հիմնված օտարականների մասին Մովսեսի օրենքի վրա (Ղևտացոց 18-20): Հակոբոսն իր ընթերցողներին դիմում է որպես տասներկու ցեղերի, որպեսզի նրանց հիշեցնի իրենց նույնականացման մասին՝ որպես Աբրահամին տրված խոստման ժառանգակիցներ (Ա Պետրոս 2.9, համեմատե՛ք Ելից 19.5,6-ի հետ) և դիմում է տարբեր վայրերում «ցրվածներին» (Ա Պետրոս 1.1): Երկու հատվածներում էլ (Հակոբոս 1.1 և Ա Պետրոս 1.1) օգտագործվում է հունարեն *դիասպորա* բառը, որը սովորաբար մատնանշում է Իսրայելի աշխարհագրական սահմաններից դուրս ապրող հրեաներին (տե՛ս Հովհաննես 7.35):

Ցրված եկեղեցի՞: Դա հիշեցնում է մեզ՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներիս: Չնայելով մեր նշանակալի մշակութային, ազգային և սոցիալական տարբերություններին, որոնք տեղ են գտել մեր միջավայրում՝ ի՞նչն է միավորում Յոթերորդ օրվա ադվենտիստներին Քրիստոսում՝ բողոքական ուղղվածությամբ առանձնահատուկ շարժման մեջ:

Հինգշաբթի հոկտեմբերի 2

Հակոբոսն ու Հիսուսը

Հակոբոսը հնարավորություն ուներ տեսնելու Հիսուսին, երբ Նա երեխա էր, պատանի և հասուն մարդ: Հետագայում Հակոբոսը ոչ

միայն հավատաց Հիսուսին՝ որպես Փրկչի, այլ նաև դարձավ Երուսաղեմի քրիստոնյաների առաջնորդը: Եվ, այնուամենայնիվ, Հակոբոսն իրեն անվանում է ոչ թե Հիսուսի եղբայր, այլ «ծառա» (Հակոբոս 1.1): Անկասկած, Հակոբոսը խոնարհություն և ճշմարիտ իմաստություն էր սովորել: Զարմանալի չէ, որ այդ կարևոր թեմաները նույնպես ներառված են նրա Թղթի մեջ (տե՛ս Հակոբոս 1.9-11,21, 3.13-18, 4.6-10):

Համեմատե՛ք բերված համարները և որոշե՛ք, թե ինչ ընդհանուր բան ունեն դրանք.

Հակոբոս 1.22 և Մատթեոս 7.24-27 _____

_____

Հակոբոս 3.12 և Մատթեոս 7.16 _____

_____

Հակոբոս 4.12 և Մատթեոս 7.1 _____

_____

Հակոբոսի թղթի նմանությունը Հիսուսի ուսմունքին, հատկապես՝ Լեռան քարոզին, համընդհանուր ճանաչում է ստացել: «Հիսուսի համընդգրկուն ազդեցությունն է ընկած Հակոբոսի ողջ ուսմունքի հիմքում» (Փիթեր Դևիդս, Հակոբոսի թուղթը, 50):

Հակոբոսի թուղթն ուշադիր համեմատելով Ավետարաններին հետ՝ կարելի է հայտնաբերել, որ այդ նամակը հիմնված չէ դրանցից ոչ մեկի վրա: Հակոբոսը գրում է ըստ ամենայնի ՝ ելնելով Հիսուսի ուսմունքի հետ սերտ, անձնական ծանոթությունից, Ով Իր ունկնդիրներին միշտ ոգևորում էր հավատալու և նրանց կոչ էր անում՝ կիրառելու այդ հավատը: Հակոբոսի թղթի ուսումնասիրությանը զուգընթաց՝ մենք այնտեղ միանգամայն նման մոտեցում ենք հայտնաբերում: Հակոբոսը չի բավարարվում թույլ, անպտուղ կամ երերուն հավատով: Ինչպես մենք կտեսնենք հաջորդ շաբաթ, գրքի առաջին մասում գերիշխում է հավատի թեման, և Հակոբոսը ցույց է տալիս, թե ինչպես է այդ կարևորագույն հատկությունն ամրապնդում Քրիստոսի հետ կենսական կարևոր փոխհարաբերությունները:

Մտորեցե՛ք ձեր հավատի որակի և իրական բնույթի մասին: Որքանո՞վ է այն իրական: Որքանո՞վ է խորը: Ինչպե՞ս է այն օգնում ձեզ՝ ապրելու քրիստոնեական կյանքով: Դուք ի՞նչ կարող էիք անել և ինչպիսի՞ որոշումներ կարող էիք ընդունել՝ ձեր հավատի որակը բարելավելու և այն խորացնելու համար:

Հետագա ուսումնասիրության համար

«Առաջ քաշելով փարիսեցիների հաճախ ծեծված և հնացած գաղափարները՝ Նրա եղբայրները համարձակվում էին սովորեցնել Նրան, Ով գիտեր ողջ ճշմարտությունը և հասկանում էր բոլոր գաղտնիքները: Նրանք, առանց երկար մտածելու, քննադատում էին ամեն բան, ինչ չէին կարողանում հասկանալ: Իրենց հանդիմանություններով նրանք փորձում էին Նրա համբերությունը, և Նրա հոգին վշտահար և ուժասպառ էր: Բացահայտորեն խոստովանելով հավատն Աստծո հանդեպ՝ նրանք մտածում էին, թե այդպիսով սատարում են Աստծուն, այնինչ Աստված մարմնով ապրում էր նրանց հետ, և նրանք չճանաչեցին Նրան:

Այս ամենը փշերով էր պատում Հիսուսի ուղին: Չհասկացվածությունը, որ Հիսուսը գտնում էր սեփական տանը, Նրան այնքան ուժգին ցավ էր պատճառում, որ Նա թեթևացած էր հեռանում այնտեղից» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 326):

Հարցեր քննարկման համար

1. Հակոբոսի Թուղթը, ըստ էության, գործնական քրիստոնեական կյանքի ձեռնարկ է: Հնարավոր է՝ այն Նոր Կտարականի առաջին գրված գիրքն է (ՔՀ 44 և 49 թվականների միջև): Բայց, բացի նրանից, որ սա աստվածաբանական գիրք է, այն նաև սովորեցնում է մեզ, թե ինչպես ապրել քրիստոնեական կյանքով: Ինչո՞ւ է հավատով ապրելը նույնքան (եթե ոչ ավելի) կարևոր, որքան և հավատալը: Այլ խոսքերով՝ ի՞նչն է ավելի կարևոր. ինչի՞ն ենք մենք հավատում, թե՞ ինչպես ենք այդ հավատը դրսևորում մեր կյանքում: Օրինակ, ո՞վ է ավելի լավ վարվում՝ անկեղծ քրիստոնյա՞ն, ով իսկապես լրջորեն պահում է կիրակին, թե՞ կեղծ քրիստոնյան, ով իբրև թե պահում է շաբաթը, բայց իրականում դրան լրջորեն չի վերաբերվում:
2. Երկուշաբթի օրվա դասի ընթացքում մենք խոսում էինք այն մասին, որ Հակոբոսը Հիսուսի եղբայրն էր: Թեև Հիսուսը արարիչ Աստված է, ամեն արարվածի Աստված, Նա նաև Մարդ էր, մեզանից Մեկը՝ այն աստիճան, որ անգամ ուներ խորթ եղբայրներ ու քույրեր: Այս զարմանահրաշ հայեցակարգն ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալու, թե ինչպես հաղթահարվեց երկնքի և ընկած աշխարհի

միջև եղած հսկայական անդունդը: Դա ի՞նչ է ասում մեզ այն երկարաձիգ ուղու մասին, որն անցավ Աստված, որպեսզի փրկի ընկած մարդկությանը: Քրիստոսի մարդկային էությունն ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալու, թե մենք ինչպես կարող ենք հաղթել մեղքին, ինչպես է նաև համոզում մեզ, որ Աստված հասկանում է մեր դժվարությունների իրական բնույթը:

3. Այս շաբաթվա դասի մեջ հիշատակված էր, որ խոնարհությունը Հակոբոսի Թղթի թեմաներից մեկն է: Ինչո՞ւ է խոնարհությունն այդքան կարևոր քրիստոնեական կյանքում: Գողգոթայի խաչի և այնտեղ տեղի ունեցածի լույսի ներքո մեզանից որևէ մեկը կարո՞ղ է մեծամտություն դրսևորել կամ սեփական անձի մասին բարձր կարծիք ունենալ, հատկապես՝ հոգևոր հարցերում:

Դաս 2

հոկտեմբերի 4-10

ՄԵՐ ՀԱՎԱՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հակոբոս 1.2,3, Ա Պետրոս 1.6,7, Փիլիպեցիս 3.12-15, Հակոբոս 1.19-21, Ղուկաս 17.5,6, Ղուկաս 12.16-21:

Հիշելու համարը.

«Մտիկ տանք հավատքի զորագլխին և կատարողին՝ Հիսուսին, որ Իր առջև դրված ուրախության փոխարեն խաչը հանձն առավ, և ամոթն արհամարհելով՝ Աստծո աթոռի աջ կողմը նստեց» (Եբրայեցիս 12.2):

Մի ատամնաբույժ բացատրեց, թե ինչու են իր ատամնապակները միշտ անթերի վիճակում: «Ի տարբերություն մյուս մասնագետների, - ասաց նա, - ես երբեք լաբորատորիայից ստացված ատամնապակների խնդիր չեմ ունենում: Եթե ես նրանց կատարյալ աշխատանք եմ ուղարկում, նրանք ինձ կատարյալ պակներ են ուղարկում»: Այս ատամնաբույժը չի անհանգստանում վերջնական արդյունքի համար: Նա կենտրոնացած է իր աշխատանքի՝ գործընթացի սկզբնական փուլի վրա:

Որպես քրիստոնյաներ՝ մենք չպետք է չափազանց շատ անհանգստանանք այն մասին, թե որքանով կատարյալ կլինեն մեր բնավորությունները վերջին հաշվով: Դա Աստծո գործն է: Մեր խնդիրն է՝ «հավատքի բարի պատերազմը» պատերազմել (Ա Տիմոթեոս 6.12)՝ նայելով Հիսուսին՝ «հավատքի զորագլխին և կատարողին»: Քրիստոսի հանդեպ այդպիսի հավատը Նրան հնարավորություն է տալիս՝ աշխատելու մեզանում՝ առաջ բերելով «կամենալն էլ, անելն էլ՝ Իր հաճության պես» (Փիլիպեցիս 2.13), ինչպես նաև՝ ավարտին հասցնել Իր սկսած այդ բարի գործը (Փիլիպեցիս 1.6): Առանց քրիստոսի հանդեպ հավատի՝ կարելի է սեփական պարտությունն զգալ դեռևս նախքան սկսելը, որովհետև մենք կենտրոնացած ենք ավելի շուտ ինքներս մեզ, քան Նրա վրա:

Հիսուսն ասում է. «Սա՛ է Աստծո գործը, որ հավատաք Նրան, ում Նա ուղարկեց» (Հովհաննես 6.29): Հակոբոսը, ինչպես մենք կտեսնենք, օգնում է մեզ՝ հասկանալու այդ կարևորագույն հոգևոր ճշմարտությունը:

Հավատը դիմանում է

Կարդացե՛ք Հակոբոս 1.2,3, Ա Պետրոս 1.6,7, 4.12,13-ը: Հակոբոսն ու Պետրոսն ի՞նչ ընդհանուր դիրքորոշում ունեն փորձությունների հարցում: Մենք ինչպե՞ս պետք է վերաբերվենք այս ապշեցուցիչ աստվածաշնչյան հրամանին: _____

_____

_____

Ոչ ոք չի սիրում տառապել, մենք գրեթե միշտ ձգտում ենք խուսափել տառապանքներից: 3-րդ համարում օգտագործվում է հունարեն *դոկիմիոն* բառը, որը ցույց է տալիս հավատի փորձությունը: Այն նշանակում է ինչ-որ բանի իսկական լինելն ստուգելու գործընթաց: Պետրոսն այդպիսի հետազոտությունը կամ մեր հավատի փորձառությունը համեմատում է ոսկու կրակով մաքրվելու հետ: Թեև փորձությունը կարող է տհաճ լինել, Աստված դրական արդյունք է ակնկալում: Փորձությունները չպետք է հուսահատեցնեն մեզ, որովհետև, եթե մենք հավատարիմ մնանք, դուրս կգանք «ոսկու նման» (Հոբ 23.10, համեմատե՛ք Առակաց 17.3-ի հետ):

Այսպիսով, մենք պետք է ուրախանանք, երբ գալիս են փորձությունները, հատկապես՝ հավատի հետ կապված, չէ՞ որ Հիսուսն ասել է. «Ուրախացե՛ք և ցնծացե՛ք, որովհետև ձեր վարձքը շատ է երկնքում» (Մատթեոս 5.12): Փորձությունները նաև օգնում են մեզ՝ ավելի խորը գնահատելու տառապանքները, որոնք Քրիստոսը տարել է հանուն մեզ: Ինչպես ընդգծվում է Ա Պետրոս 4.13-ում, դրանք մեզ հնարավորություն են տալիս՝ մասնակցելու Քրիստոսի տառապանքներին :

Այլ խոսքերով, մենք պետք է մեր փորձությունից ավելի հեռուն նայենք և մտովի տեսնենք Աստծո համար ցանկալի արդյունքը: Հենց այստեղ էլ գործում է հավատը: Մեզ հարկավոր է *հավատալ* սիրող Հորը, *ապավինել* Նրա իմաստությանը և *գործել* Նրա Խոսքի հիման վրա: Մենք կարող ենք վստահաբար Նրան հանձնել մեր ապագան (տե՛ս Հռոմեացիս 8.28-ը): Փաստորեն միայն հավատի, Աստծո սերն անձամբ ճանաչելու և այդ սիրո լույսի ներքո հավատով կյանքի միջոցով մենք կարող ենք ուրախանալ մեր փորձությունների համար:

Համաձայն Հակոբոս 1.3-ի՝ մեր հավատի վերջնական նպատակը համբերությունն է: Հունարեն *խուպոմոնե* բառը կարող է թարգմանվել

նաև որպես «տոկունություն» կամ «դիմացկունություն»: *Խուպոմոնե*-ն ցույց է տալիս մի բան, որն իր տևողությամբ գերազանցում է այդ հատականիշները, քանի որ վստահաբար հիմնված է վերջնական ազատագրման մասին Աստծո խոստման վրա (տե՛ս նաև Ղուկաս 21,19):

Փորձությունների ժամանակ Աստծուն հավատարիմ մնալը, այսինքն՝ հավատը չկորցնելն ու անգամ ամենածանր պահերին Տիրոջն ապավինելը մի բան է, բայց մեզ ասված է, որ փորձությունների ժամանակ հարկավոր է ուրախանալ: Դա չափազանց չէ՞: Ի վերջո, երբեմն բավականին դժվար է պարզապես հավատարիմ մնալը փորձությունների ժամանակ, էլ ուր մնաց՝ *ուրախանալ* դրանց համար: Սակայն հենց այդպես էլ ասված է: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել ուրախանալ փորձությունների ժամանակ, եթե այդպիսի պահին ուրախությունը ամենավերջին բանն է, ինչին մենք տրամադրված ենք:

Երկուշաբթի հոկտեմբերի 6

Կատարելությունը

Կարդացե՛ք Հակոբոս 1.2-4-ը: Ուշադրություն դարձրեք հաջորդականությանը՝ հավատ, փորձություն, համբերություն, կատարելություն: Հակոբոսն սկսում է հավատից, քանի որ դա ցանկացած ճշմարիտ քրիստոնեական փորձառության հիմքն է: Հետո նա ասում է, որ մեզ հարկավոր են փորձություններ, որպեսզի ստուգվի մեր հավատի անկեղծությունը: Հետո Հակոբոսը պնդում է, որ փորձությունները կարող են մեզ համբերություն սովորեցնել, այնպես որ, ժամանակի ընթացքում մենք հանկարծակի չենք բախվի դրանց և չենք հաղթվի: Մեզ համար Աստծո նպատակն այն է, որ մենք «կատարյալ և ամբողջ լինենք և ոչ մի բանի պակասություն չունենանք» (Հակոբոս 1.4): Չի կարող առավել վերամբարձ լեզու լինել: «Կատարյալ» (*թելեյոս*) բառը նշանակում է հոգևոր հասունություն, իսկ «ամբողջ» (*խոլոկլերոս*) բառը մատնացույց է անում ամբողջականությունն ու անխաթարությունը ամեն բանում: Իսկապես, Տիրոջ մեջ մենք կարող ենք այդքան շատ բանի հասնել, եթե միայն մահանանք մեզ համար և թույլ տանք Նրան՝ մեզանում արարել «կամենալն էլ, անելն էլ՝ Իր հաճության պես» (Փիլիպեցիս 2.13):

Կարդացե՛ք Եփեսացիս 4.13 և Փիլիպեցիս 3.12-15-ը: Համաձայն այս համարների՝ քրիստոնյաներն ինչպե՞ս պետք է վերաբերվեն կատարելությանը: _____

_____

Պողոսի նման, Քրիստոսի հետևորդները երբեք չեն բավարարվի ինչ-որ ավելի պակաս բանով, քան իրենց կյանքը իրենց Ուսուցչի անշահախնդիր, զոհաբերության պատրաստ սիրուն համապատասխանեցնելը: Սակայն մենք երբեք չենք զգա, որ արդեն հասել ենք մեր նպատակին կամ էլ դարձել ենք կատարյալ:

Նաև ուշադրություն դարձրեք, որ բերված համարներում շեշտը դրվում է ապագայի վրա: Պողոսը մատնացույց է անում այն, ինչ իրեն խոստացված է Աստծով՝ Հիսուսի հանդեպ հավատի միջոցով: Քրիստոնեական ուղու վրա չի լինի այնպիսի պահ, երբ մենք կարողանանք ասել. «Ես հասել եմ», առնվազն՝ բնավորության ոլորտում: (Դուք նկատե՞լ եք, որ այն մարդիկ, ովքեր հայտարարում են իրենց որևէ հոգևոր ձեռքբերման մասին, սովորաբար տհաճ են շփման ժամանակ և ինքնագոհ): Մենք նման ենք արվեստի ստեղծագործությունների՝ մեզ միշտ կարելի է կատարելագործել, և Աստված խոստանում է դա անել այնքան ժամանակ, քանի դեռ մենք շարունակում ենք հավատալ և ամեն օր ձգտել մեզ հանձնել Նրան՝ վստահությամբ և հնազանդությամբ:

Դուք բավականաչափ լավը կլինեի՞ք փրկություն ստանալու համար, եթե մահանայիք հենց հիմա: Իսկ եթե մահանայիք այն բանից երկու շաբաթ անց, երբ ընդունեցիք Քրիստոսի՞ն: Ի՞նչ եք կարծում, դուք բավականաչափ լավը կլինե՞ք վեց ամիս հետո: Ի՞նչ են ասում ձեր պատասխանները Քրիստոսի արդարության կատարյալ հանդերձների մասին՝ անկախ նրանից, թե «կատարելության» որ մակարդակին եք դուք հասել:

Երեքշաբթի **հոկտեմբերի 7**

Խնդրել հավատալով

Կարդացե՛ք Հակոբոս 1.5,6-ը: Իմաստությունն ինչո՞վ է տարբերվում գիտելիքներից: Իմաստության և հավատի միջև ի՞նչ կապ է դիտարկում Հակոբոսը: _____

_____

_____

_____

Կարող է որոշ չափով տարօրինակ թվալ, որ Հակոբոսն ասում է. «*Եթե* ձեզանից մեկը իմաստության պակասություն ունի»: Ո՞վ է հա-

մարում, որ ինքը բավականաչափ իմաստություն չունի: Անգամ Սողոմոնը, գիտակցելով իր կարիքը, խոնարհությամբ խնդրում է Աստծուն՝ պարգևել իրեն «իմաստուն սիրտ՝ Քո ժողովրդին դատելու բարու և չարի մեջ» (Գ Թագավորաց 3.9): Ավելի ուշ նա գրել է. «Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է» (Առակաց 9.10):

Մենք հակված ենք մտածելու, որ հասկանում ենք, թե ինչ բան է իմաստությունը: Իսկական ճշմարտության մյուս ո՞ր տեսանկյունն են մեզ բացահայտում հետևյալ համարները: Հակոբոս 1.19-21, 2.15,16, 3.13: _____

_____

_____

_____

Առակաց գիրքը և Հակոբոսի թուղթը իմաստությունը նկարագրում են որպես ինչ-որ շատ գործնական բան՝ դա այն չէ, թե *ինչ գիտենք մենք*, այլ այն, թե ինչպես ենք *մենք ապրում*: Օրինակ՝ «Թո՛ղ ամեն մարդ շուտ լինի լսելու համար, և ծանր՝ խոսելու համար» (Հակոբոս 1.19): Պլատոնն ասել է. «Իմաստուն մարդիկ խոսում են, որովհետև նրանք ասելու բան ունեն, իսկ անմիտները՝ որովհետև ուզում են ինչ-որ բան ասել»: Այլ խոսքերով՝ մենք կարող ենք ունենալ բոլոր գիտելիքները, որ առաջարկում է աշխարհը, և միևնույն ժամանակ չունենալ իսկական ճշմարտություն:

Քանի որ Աստված ամեն տեսակ իսկական ճշմարտության աղբյուրն է, մենք իմաստություն ենք ձեռք բերում՝ *լսելով* Նրան՝ կարդալով Նրա խոսքը և ժամանակ անցկացնելով մտորումներով՝ Քրիստոսի կյանքի մասին, «Որ Աստվածանից մեզ համար եղավ իմաստություն» (Ա Կորնթացիս 1.30): Սովորելով արտացոլել Քրիստոսի բնավորությունը մեր կյանքում՝ մենք ապրում ենք Հիսուսի մեջ բացված ճշմարտությանը համապատասխան: Հենց *սա* էլ ճշմարիտ իմաստությունն է:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Հակոբոս 1.6-ը: Մենք պետք է խնդրենք հավատով, առանց կասկածելու: Մի՞շտ է դա հեշտ: Ժամանակ առ ժամանակ ո՞ւմ չեն հաղթել կասկածները: Երբ դա տեղի է ունենում, շատ կարևոր է աղոթել և մտորել մեր հավատի հիմքերի մասին՝ Հիսուսի պատմության, աստվածաշնչյան մարգարեությունների և իրենց անձնական փորձառությունների: Դա ինչպե՞ս է օգնում մեզ՝ հաղթահարելու առաջ եկած ցանկացած կասկած:

Հավատի հակառակ կողմը

Կարդացե՛ք Հակոբոս 1.6-8-ը: Այս հատվածում ինչի՞ մասին է խոսում առաքյալը: _____

_____

«Կասկածել» թարգմանված բառը ցույց է տալիս ներքին երկպառակումը, դա մեզ օգնում է հասկանալու երկվության հետ կապված կասկածները: Բնորոշ օրինակը մենք տեսնում ենք Կադես-Բառնեայում: Այնտեղ հրեաները կանգնեցին երկընտրանքի առջև՝ հավատով առաջ շարժվել կամ ապստամբել Տիրոջ դեմ: Ապշեցուցիչ է, որ նրանք գերադասեցին ապստամբել և պատրաստ էին վերդառնալ Եգիպտոս՝ ստրկության: Իսկ երբ Աստված միջամտեց իրադրությանը և Մովսեսի միջոցով հայտարարեց, որ նրանք կմահանան անապատում, ժողովուրդը հանկարծ «հավատաց»: Նրանք ասացին. «Եկե՛ք վեր ելնենք այն տեղը, որ Եհովան ասել է, որովհետև մեղք գործեցինք» (Թվոց 14.40):

«Թվում էր՝ նրանք անկեղծորեն ապաշխարում են իրենց մեղավոր վարքի համար, բայց նրանք ավելի շատ ցավում էին իրենց ամբարշտության հետևանքների, քան բուն երախտամոռության և անհնազանդության համար: Երբ նրանք տեսան, որ Տերը չի փոխել դատավճիռը, համառությունը կրկին խոսեց նրանց մեջ, և նրանք հայտարեցին, որ անապատ չեն վերադառնալու: Նրանց հրամայելով նահանջել թշնամիների հողից՝ Աստված փորձում էր նրանց տեսանելի հնազանդությունը և ցույց տվեց, որ այն իսկական չէր» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 391):

Կարդացե՛ք Ղուկաս 17.5,6-ը: Հիսուսն այստեղ ի՞նչ է ասում հավատի մասին: _____

_____

Երբ աշակերտները խնդրեցին բազմապատկել իրենց հավատը, Հիսուսն ասաց, որ մանանեխի հատի չափ հավատը արդեն շատ է: Կարևոր է, որ մեր հավատը կենդանի և աճող լինի, իսկ դա կարող է տեղի ունենալ և տեղի կունենա, եթե միայն մենք մարզենք այն՝ կապ պահպանելով Աստծո հետ և վստահելով Նրան բոլոր իրավիճակներում: Բայց երբեմն ճանապարհին կասկածներ են ծագում: Աշխարհը գրոհում է մեզ վրա կասկածներով ու թերահավատությամբ, ոչ ոք ապահովագրված չէ դրանից: Այն ամենը, ինչ մենք կարող ենք անել՝

աղոթելն է դժվարին իրավիճակների միջով անցնելիս՝ հիշելով Աստծո հավատարմությունն անցյալում և Նրան վստահելով մեր ապագան:

Դուք ի՞նչ պատճառներ ունեք Աստծուն և Նրա խոստումներին վստահելու, հավատով ապրելու համար: Հիշեցե՛ք այդ պատճառները, մտորեցե՛ք դրանց մասին, և ձեր հավատը կաճի:

Հինգշաբթի հոկտեմբերի 9

Հարուստներն ու աղքատները

Իր համառոտ Թղթում Հակոբոսը շատ է խոսում աղքատների մասին, ոմանք նույնիսկ համարում են, որ դա նրա Թղթի գլխավոր թեման է: Բայց ժամանակակից մարդու համար հարուստների դեմ և աղքատների օգտին այդպիսի հանդիմանող խոսքերը որոշ չափով ծայրահեղ, անգամ ցնցող են թվում: Սակայն Հակոբոսը ոչինչ չի ասում, ինչը կհակասեր Հիսուսի խոսքերին:

Համեմատե՛ք Հակոբոս 1.9-11-ը Ղուկաս 8.14-ի, Հակոբոս 1.27-ը՝ Մատթեոս 25.37-40-ի, Հակոբոս 2.15,16-ը՝ Ղուկաս 10.29-37-ի, Հակոբոս 5.1-4-ը՝ Ղուկաս 12.16-21-ի հետ: Ի՞նչ ընդհանուր լուր կա մեզ ուղղված: Ի՞նչ նախազգուշացումներ և խրատներ մենք կարող ենք քաղել նրանից, ինչ այդքան հստակ կերպով արտահայտված է այդ համարներում: _____

_____

_____

Իհարկե, Հակոբոսը Արքայության դռները չի փակում հարուստների առջև: Բայց, ինչպես և Հիսուսը, նա հասկանում է հարստության հետ միասին եկող գայթակղությունների խարդախությունը: Հարուստ կամ աղքատ՝ մենք պետք է նայենք իրական պարգևին: Փողը կարող է խաբել մեզ, դրդել կենտրոնանալու ժամանակավորի, ոչ թե հավիտենականի վրա (Բ Կորնթացիս 4.18):

Կասկած չի հարուցում, որ ձեռք բերված հարստությունը, բարձրագույն կրթությունը կամ սոցիալական ազդեցությունը մարդկանց դրդում են գլուխներն ազատելու «պակաս հաջողակներից»: Բայց վաղ եկեղեցին միավորել էր մարդկանց այս երկու դասերը՝ ոտքից գլուխ շուռ տալով աշխարհային արժեքները : Այն մարդը, ով *ավելի ցածր* դիրք է գրավում, բայց խոնարհություն է ցուցաբերում, գտնվում է բարձունքում:

«Մինչև այժմ քանի դեռ Աստծո աշխարհում կան քաղցածներ, որոնց հարկավոր է կերակրել, մերկեր, ում հարկավոր է հագցնել, հոգիներ, որ մահանում են փրկության հացի ու ջրի անբավարարությունից, սեփական ցանկությունների ցանկացած ոչ անհրաժեշտ բավարարում, միջոցների ցանկացած վատնում աղաղակում է աղքատներին և մերկերին օգնելու մասին» (Է. Ուայթ, Սոցիալական ծառայություն, 269):

Դուք ի՞նչ կարող եք ասել ձեր մասին: Կարևոր չէ՝ դուք հարո՞ւստ եք, թե՞ աղքատ. կարևոր է այն, թե դուք ինչպես եք վերաբերվում փողին: Ի՞նչ կա փողի մեջ, որ դա հնարավոր սպառնալիք է ներկայացնում մեր հոգիների համար:

Ուրբաթ հոկտեմբերի 10

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Դարերի փափագը» գրքից կարդացե՛ք «Լեռան քարոզը» գլուխը, 298-314:

«Աստված ցանկանում է, որ Իր ծառաները ճանաչեն սեփական սրտերը: Նրանց իրենց իսկական վիճակը ցույց տալու համար Նա թույլ է տալիս, որ կրակե փորձություններ թափվեն նրանց վրա, որպեսզի նրանք մաքրվեն: Կյանքի փորձությունները Աստծո աշխատողներն են, ովքեր կանչված են հեռացնելու մեր բնավորության անմաքրությունը, թուլություններն ու անհարթությունները և մեզ նախապատրաստելու փառքով մաքուր երկնային հրեշտակների շրջապատում գտնվելուն: Այդ պատճառով, անցնելով դժվարությունների միջով, երբ մեզ վրա կրակե փորձություններ են թափվում, մի՞թե մենք չպետք է նայենք անտեսանելիին, հավիտենական ժառանգությանը, հավիտենական կյանքին, հավիտենական փառքին՝ անչափելի ավելցուկով: Եթե մենք այդպես ենք վարվում՝ կրակը չի ոչնչացնի մեզ, այլ միայն կհեռացնի թափոնները, և մենք դուրս կգանք յոթ անգամ ավելի մաքրված՝ մեզ վրա կրելով աստվածային հետքը» (Է. Ուայթ, The Advent Review and Sabbath Herald, 10 ապրիլի 1894 թ.):

Հարցեր քննարկման համար

1. Աստվածաշնչյան ի՞նչ հերոսներ են ձեզ համար հատուկ նեցուկ հանդիսանում տառապանքների ժամանակ: Դուք սովորե՞լ եք ուրախանալ փորձությունների մեջ: Եթե այո, ապա դասարանի հետ կիսվե՛ք ձեր մտքերով, թե ինչն է ձեզ օգնել այդ հարցում: Միևնույն

ժամանակ, եթե դուք չկարողացաք ուրախանալ տառապանքների ժամանակ, դասարանում խոսե՛ք նաև այդ մասին (եթե տեղին է):

2. Խորհեցե՛ք այն մասին, թե ինչ է իսկական իմաստությունը՝ ոչ այնքան մտավոր գիտելիքները, որքան մեր կյանքը Քրիստոսի հավատով: Միևնույն ժամանակ, դա ինչո՞ւ չի նշանակում, որ մտավոր գիտելիքները կարևոր չեն: Օրինակ, ինչպե՞ս կարող է սխալ ուսմունքը վնասակար լինել Տիրոջ հետ մարդու շփման համար:
3. Երիտասարդն ուներ ծանր փորձությունների միջով անցած մի ընկեր: Թեև երիտասարդի համար ծանր էր ընկերոջ հետ տեղի ունեցածը, սակայն նա նկատեց, որ վերջինս աճում է շնորհի մեջ: Երբ աղետներն ավարտվեցին, նրա ընկերն իսկապես փոխվեց, և՝ դեպի լավը: Ձեզ ի՞նչ հոգևոր օգուտ են բերել ձեր վերապրած փորձառություններ: Հարցրե՛ք ինքներդ ձեզ՝ դուք այլ կերպ կարո՞ղ էիք սովորել այդ դասերը:
4. Դուք ի՞նչ կարող եք ասել այն մարդուն, ով, ըստ երևույթին, անկեղծորեն հավատում է և միևնույն ժամանակ ընդունում է, որ իրեն երբեմն հաղթում են կասկածները: Դուք ինչպե՞ս կարող եք օգնել նրան:

Դաս 3

հոկտեմբերի 11-17

ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հակոբոս 1.12-21, Սաղմոս 119.11, Ծննդոց 3.1-6, Տիտոս 3.5-7, Հռոմեացիս 13.12, Եփեսացիս 4.22:

Հիշելու համարը.

«Երանելի է այն մարդը, ով համբերում է փորձության, որովհետև եթե փորձվելով ընտիր գտնվի՝ կյանքի պսակը կառնի, այն, որ Տերը խոստացավ Իրեն սիրողներին» (Հակոբոս 1.12):

Ամենքն են այդպիսի պահեր ապրել. մենք որոշում ենք ընդունում՝ չենթարկվել գայթակղությանը, բայց ճակատամարտի ամենաթեժ պահին մեր որոշումը հալվում է և, ի ամոթ մեզ, ինքներս մեր հանդեպ նողկանք զգալով, մենք ընկնում ենք մեղքի մեջ: Անգամ երբեմն թվում է՝ որքան ավելի շատ ենք կենտրոնանում չմեղանչելու վրա, այնքան ավելի անզոր ենք մեզ զգում գայթակղության դեմ պայքարում, և է՛լ ավելի անհուսալի է թվում մեր վիճակը: Մենք սկսում ենք կասկածել՝ իսկապե՞ս փրկված ենք: Դժվար է պատկերացնել լուրջ քրիստոնյայի, ով չէր կասկածի իր փրկությանը, հատկապես՝ իր գործած մեղքից հետո:

Բարեբախտաբար, մենք կարող ենք հաղթանակ տանել փորձությունների դեմ, որոնք այդքան հեշտությամբ մեզ ծուղակն են գցում: Մեզանից ոչ ոք, անկախ այն բանից, թե որքանով է խրված մեղքի մեջ, անհուսալի չէ, որովհետև մեր «լույսի Հայրը» ավելի ուժեղ է չարի հանդեպ մեր հակվածությունից, և միայն Նրանում և Նրա Խոսքի միջոցով մենք կարող ենք հաղթանակ տանել:

Այսպիսի լուր են հայտնում այն համարները, որ մենք ուսումնասիրելու ենք առաջիկա շաբաթվա ընթացքում: Անկասկած, փորձություններն իրողություն են, իսկ սեփական «ես»-ի դեմ ճակատամարտը *միանգամայն* իրական է: Բայց Աստված նույնպես իրական է, և Նրա միջոցով մենք կարող ենք ավելին, քան մեր մեջ հասունացող փարձությունները հաղթահարելը, որոնք միայն սպասում են, որ նվաստացնեն մեզ:

Փորձության արմատը

Կարդացե՛ք Հակոբոս 1.13,14-ը: Ինչո՞ւ է կարևոր ճշմարտությունն այն մասին, որ Աստված ոչ ոքի չի փորձում: Որտե՞ղ է ծնվում գայթակղությունը, և այդ մասին գիտելիքն ինչպե՞ս կարող է օգնել մեզ մեղքի դեմ պայքարում: _____

_____

_____

_____

Հակոբոսն ընդգծում է՝ Աստված ոչ միայն չարի հեղինակը *չէ*, այլ նաև փորձության աղբյուրը չէ: Չարն ինքն է փորձության աղբյուրը: Համաձայն բերված համարների՝ խնդիրը թաքնված է մեր մեջ: Դա հիմնական պատճառն է, որը բացատրում է, թե ինչու է մեզ համար այդքան դժվար գայթակղությանը դիմակայելը:

Այսպիսով, մեղքի դեմ պայքարն սկսվում է մտքում: Ծատերը չեն ցանկանում դա լսել, բայց ճշմարտությունն այն է, որ մենք ինքներս *ենք ընտրում* մեղքը: Ոչ ոք չի կարող ստիպել մեզ (Հռոմեացիս 6.16-18): Մեղավոր ցանկությունները, հակումներն ու կրքերն իրականում անդադար գրավում են մեր ուշադրությունը: Օգտագործելով որսորդների ու ձկնորսների շրջանում հայտնի եզրույթները՝ Հակոբոս 1.14-ը նկարագրում է այդ ներքին դրդումները: Մեզ *հրապուրում* և *գայթակղում* են մեր սեփական ցանկությունները, և երբ մենք տրվում ենք դրանց, դրանք վերջին հաշվով մեզ գցում են կեռիկի վրա և հրապուրում դեպի թակարդը:

Կարդացե՛ք Եփեսացիս 6.17, Սաղմոս 119.11 և Ղուկաս 4.8-ը: Ի՞նչ ընդհանուր թեմա է նկատվում այս համարներում, և ինչպե՞ս է այն հարաբերակցվում գայթակղության հանդեպ հաղթանակի հարցի հետ: _____

_____

_____

Իր Թղթի տարբեր մասերում Հակոբոսը գայթակղությունը տարբերում է մեղքից: Դրսից եկող փորձությունը մեղք չէ: Անգամ Հիսուսը փորձվեց: Խնդիրը ոչ թե բուն փորձությունն է, այլ այն, թե ինչպես ենք մենք դրան արձագանքում: Մեղավոր էություն ունենալը մեղք չէ, բայց թույլ տալ մեղավոր էությանը՝ վերահսկել մեր մտքերն ու մեզ թելադրել իր կամքը՝ սա արդեն մեղք է: Այսպիսով, մենք ունենք Աստծո Խոսքի

խոստումները, որոնք մեզ հաղթանակի վստահություն են հաղորդում, եթե մենք դրանք կիրառում ենք մեր հանդեպ և հավատով կառչում ենք դրանց:

Խորհեցե՛ք այն գաղափարի մասին, որ մեղքը *միշտ* մեր սեփական ընտրությունն է: (Ի վերջո, եթե այն չլիներ մեր ընտրությունը, ինչպե՞ս կարելի կլիներ դատապարտել մեզ այն գործելու համար): Մենք ի՞նչ կարող ենք անել ամենաօրյա գործնական կյանքում, ի՞նչը կարող էր մեզ հետ պահել սխալ ընտրությունից:

Երկուշաբթի հոկտեմբերի 13

Երբ գործում է ցանկությունը

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Հակոբոս 1.13-15-ը: Ե՞րբ է գայթակղությունը մեղք դառնում: _____

_____

_____

Այս հատվածում մեղքի ծագումը նկարագրելու համար մի քանի հունարեն բառեր են օգտագործվում, որոնք բոլորն էլ կապված են ծնունդի հետ: Երբ մենք մեր մեջ սխալ ցանկություն են սնուցում, մեղքը «սաղմնավորվում» է, ինչպես երեխան արգանդում: «Իսկ հասունացած մեղքը մահ է ծնում» (Հակոբոս 1.15՝ 2-րդ մաս, բառացի թարգմանություն):

Պարադոքսային պատկեր է: Գործընթացը, որը պետք է կյանք տա, հանգեցնում է մահվան (համեմատե՛ք Հռոմեացիս 7.10-13-ի հետ): Մեղքը, քաղցկեղի նման, իր ձեռքն է վերցնում իշխանությունը և կլանում է իր տիրոջը: Մենք ամենքս գիտենք դա, քանի որ ամենքս տառապել ենք դրանից: Մեր սրտերը չար են, և մենք չենք կարող փոխել դա:

Կարդացե՛ք Ծննդոց 3.1-6-ը: Եվայի փորձառությունը արտահայտիչ կերպով պատկերում է մեղքի հետ մարդու հակամարտությունը: Ո՞ր քայլերը մեղքի մեջ գցեցին նրան: _____

_____

_____

Մեղքն իր արմատներով սկսվում է Աստծո հանդեպ անվստահությունից: Օգտագործելով այն նույն հաջող մեթոդը, որի օգնությամբ նա խաբեց հրեշտակների մեկ երրորդին (Հայտնություն 12.4,7-9), սատա-

նան Եվայի գիտակցության մեջ կասկած սերմեց Աստծո բնավորության վերաբերյալ (Ծննդոց 3.1-5): Մեղքն այն չէր, որ Եվան մոտեցավ արգելված ծառին, այլ այն, որ կերավ պտուղը: Բայց անգամ այդ դեպքում էլ, ըստ ամենայնի, սխալ մտքերը նախորդել էին նրա մեղավոր արարքին (Ծննդոց 3.6): Նա սատանայի առաջարկն ընդունեց որպես իր սեփականը:

Մեղքը միշտ սաղմնավորվում է մտքի մեջ: Եվայի նման, մենք կարող ենք մտածել մեղքի հնարավոր «օգուտի» մասին: Հետո մեր զգացմունքներն ու երևակայությունն սկսում են տիրել մեզ: Ծուտով մենք կուլ ենք տալիս խայծը և ընկնում ենք մեղքի մեջ:

Հետո մենք զարմանում ենք, թե ինչպես այդպիսի բան կարող էր տեղի ունենալ: Պատասխանը պարզ է. մենք *թույլ տվեցինք*, որ դա տեղի ունենա: Ոչ ոք մեզ չէր ստիպում մեղանչել:

«Լուրջ աղոթքով և կենդանի հավատով մենք կարող ենք դիմակայել սատանայի գրոհներին և մեր սրտերը անարատ պահել պղծությունից:

Ամենաուժեղ փորձությունն անգամ մեղքի արդարացում չէ: Որքան էլ ուժեղ լինի ճնշումը մեզ վրա, մեղքը մեր սեփական գործողությունն է: Երկիրը կամ դժոխքն ի զորու չեն ստիպելու մեղանչել որևէ մեկին: Կամքը պետք է համաձայնի, սիրտը պետք է նահանջի, հակառակ դեպքում ցանկությունը չի կարող հաղթել բանականությանը, և անօրենությունը չի կարող հաղթանակ տոնել արդարության դեմ» (Է. Ուայթ, Քրիստոնեական առավելություններն ու պարտականությունները, Ժամանակի նշանները, 1883 թ. հոկտեմբերի 4):

Երեքշաբթի հոկտեմբերի 14

«Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև»

«Մի՛ խաբվեք, իմ սիրելի եղբայրներ. Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերևից է իջնում՝ լույսի Հորից, որի մեջ բնավ փոփոխում կամ դարձվածքի շուք չկա» (Հակոբոս 1.16,17):

Թեև մեղքը մահ է ծնում, Աստված կյանքի աղբյուր է: Նա «լույսի Հայրն» է (Հակոբոս 1.17)՝ սա հղում է արարմանը (Ծննդոց 1.14-18): Աստված մեզ ծնունդ է պարգևում դեպի նոր կյանք, և սա մեծագույն պարգև է, որը մենք կարող ենք ստանալ ի վերուստ (համեմատե՛ք Հակոբոս 1.17-ը Հովհաննես 3.3-ի հետ):

Ինչպես և Պողոսը, որ խոսում էր փրկության մասին՝ որպես Աստծո շնորհի արդյունք (Հռոմեացիս 3.23,24, Եփեսացիս 2.8, Բ Տիմոթեոս 1.9), Հակոբոսը 1.17-ում փրկությունը պարգև է անվանում: Ավելին, հաջորդ համարում Հակոբոսը հստակ կերպով ցույց է տալիս, որ փրկությունն ու նոր ծնունդը Աստծո նպատակն է և Նրա կամքը մեզ համար. «Նա կամենալով ծնեց մեզ ճշմարտության խոսքով» (Հակոբոս 1.18): Այսինքն՝ Աստված ցանկանում է, որ մենք փրկվենք: Նրա կամքը դեռևս նախքան մեր գոյությունն այն էր, որ մենք փրկություն և նոր կյանք ձեռք բերենք Նրանում՝ այժմ և ողջ հավիտենության մեջ: Այսինքն՝ Աստված ցանկանում է, որ մենք փրկվենք:

Հակոբոսի խոսքերն ինչպե՞ս են համաձայնում Պողոսի և Պետրոսի տված նոր ծննդի նկարագրությունների հետ: Տիտոս 3.5-7, Ա Պետրոս 1.23: _____

_____

_____

Հիսուսը, Պողոսը, Պետրոսն ու Հակոբոսը՝ ամենքը փրկությունը կապում են նոր ծննդի հետ: Փրկության ծրագրում Աստծո նպատակն այն է, որ թուլացած և մեղքից կոտրված մարդկությունը վերամիավորի երկնքի հետ: Խզումն այնքան մեծ ու լայն էր, որ մարդկանց ձեռնարկածներից ոչ մի բան երբեք չէր կարողանա կամուրջ նետել այդ անդունդի վրայով: Աստվածաշունչ Խոսքը (Բ Տիմոթեոս 3.16) եզակի ընդունակություն ունի՝ հոգևոր կյանք ներշնչել նրանց, ում սրտերը բաց են այդ պարգևն ստանալու համար:

Մեր «լույսի Հայրը» այնքան է սիրում մեզ, որ պարգևում է «Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև» (Հակոբոս 1.17), թեև մենք ամենևին էլ արժանի չենք դրան: Բոլոր պարգևներից լավագույնը Հիսուսն է և Նրա առաջարկած նոր ծնունդը:

Ի «վերուստ» ի՞նչ պարգևներ եք դուք ստացել: Ինչո՞ւ է այդքան կարևոր այդ մասին խորհելը: Ի՞նչ է տեղի ունենում, եթե մենք դա չենք անում:

Չորեքշաբթի **հոկտեմբերի 15**

«Ծանր՝ խոսելու համար»

Կարդացե՛ք Հակոբոս 1.19,20-ը: Ի՞նչ կարևոր միտք է արտահայտում առաքյալը: _____

_____

Աստծո խոսքը զորություն ունի: Բայց մարդկային բառերը նույնպես զորություն ունեն: Որքա՞ն հաճախ ենք մենք ասել բառեր, որոնք որոշ ժամանակ անց կցանկանայինք հետ վերցնել: Ցավոք, այն բանի ըմբռնումը, թե որքանով կարող են ուժեղ վիրավորել չար խոսքերը և որքանով է ավերիչ ցասումը, առանձնապես չի օգնում վերահսկելու ինքներս մեզ: Ապավինելով մեր սեփական հայտնագործություններին և մեթոդաբանություններին՝ մենք երբեք չենք կարողանա իսկապես փոխվել: Այդ պատճառով մենք պետք է ավելի շատ լսենք Աստծուն և թույլ տանք Նրան՝ գործելու մեր մեջ: «Երբ լռում են բոլոր կողմնակի ձայները, և մենք սպասումով քարանում ենք Աստծո առջև, հոգու լռությունն Աստծո ձայնն առավել հստակ է դարձնում: Նա հրամայում է մեզ. «Կա՛նգ առեք և ճանաչեք, որ Ես եմ Աստված»» (Է. Ուայթ, Ապաքինման ծառայություն, 58):

Եվ հակառակը, երբ մենք դադարում ենք լսել Աստծուն և միմյանց, խնդիրներ են ծագում: Տանը, աշխատավայրում կամ եկեղեցում վեճերը ծագում են այն պատճառով, որ մարդիկ դադարում են լսել: Երբ նման բան է տեղի ունենում, սկսվում են դատապարտումներ, և աճում է զայրույթը: Մեղսավոր շփման այս սայթաքուն ճանապարհը, չվերահսկվող ներքին ցանկությունների նման (Հակոբոս 1.14,15), երբեք Աստծո արդարությունը չի գործում:

Այդ պատճառով Հակոբոսն Աստծո արդարությունը հակադրում է մարդկային ցասմանը: Քանի դեռ մենք ապավինում ենք մի բանի, ինչը ինքնին բխում է մեր մեղսավոր էությունից, Աստծո Խոսքի արարիչ զորությունն արգելափակվում է, իսկ դրա փոխարեն հնչում են մեր անօգուտ և անգամ կործանարար բառերը: Զարմանալի չէ, որ, խոսելով ամեն բանի մասին, ինչ մեր «լույսի Հայրն» անում է մեզ համար նոր կյանքի պարգևի միջոցով, Հակոբոսը մեզ խորհուրդ է տալիս զգույշ լինել բառերի մեջ:

Ի՞նչ են ասում բառերի մասին հետևյալ համարները. Առակաց 15.1, Եսայիա 50.4, Եփեսացիս 4.29, 5.4, Կողոսացիս 4.6: _____

_____

_____

Խորհեցե՛ք, թե վերջին անգամ ով է ձեզ ցավ պատճառել իր խոսքերով: Ձեր վերապրած հույզերի խորքը ցույց է տալիս, թե որքանով կարող են ուժեղ լինել բարի կամ չար նպատակով արտաբերված խոսքերը: Ի՞նչ կարելի է անել

սեփական խոսքերը վերահսկելու համար: Ինչո՞ւ է այդքան կարևոր խոսելուց առաջ *մտածելը*:

Հինգշաբթի հոկտեմբերի 16

Ընդունելով փրկվածները

Կարդացե՛ք Հակոբոս 1.21-ը: Առաքյալն ի՞նչ դեր է հատկացնում «խոսքին»: _____

_____

_____

Բերված համարը հանրագումարում է այն ամենը, ինչ վերն ասվել է հավատի և փրկության մասին: Դա ամեն անմաքրությունն ու չարության մնացորդը դեն նետելու կոչ է: «Դեն նետելու» հրահանգը Նոր Կտակարանում ինն անգամից յոթի դեպքում օգտագործվում է չար սովորությունների մերժման համատեքստում, որոնց համար տեղ չկա Քրիստոսին նվիրաբերված կյանքում (Հռոմեացիս 13.12, Եփեսացիս 4.22,25, Կողոսացիս 3.8, Եբրայեցիս 12.1, Ա Պետրոս 2.1): Այս բայը կարող է վերաբերել նաև հագուստը հանելուն (Գործք առաքելոց 7.58), այնպես էլ կարող է ցույց տալ մեր մեղքի «կեղտոտ շորը» հանելը (համեմատե՛ք Եսայիա 64.6-ի հետ): Եվ իսկապես, «կեղտոտ» բառը հանդիպում է Հակոբոս 2.2-ում («կեղտոտ հագուստով»): Այստեղ աղքատների հագուստը հակադրվում է հարուստ մարդկանց փայլուն մաքուր հագուստին (Հակոբոս 2.2): Հիսուսի նման՝ Հակոբոսը հանդիմանում է արտաքին տեսքի մասին չափազանց հոգատարությունը, քանի որ Աստծուն առաջին հերթին հետաքրքրում է մեր սրտերի վիճակը:

Հին Կտարականի հունարեն թարգմանության մեջ «կեղտոտ» (*ռյուպառոս*) բառն օգտագործվում է միայն մեկ հատվածում՝ Զաքարիա 3.3,4-ում, որտեղ Հովսեդեկի որդի Հեսու քահանայապետը ներկայացնում է մեղսավոր Իսրայելը: Աստված *հանում է* քահանայապետի կեղտոտ հագուստները և նրան մաքուր «հանդիսավոր հանդերձներ» է հագցնում, որոնք խորհրդանշում են Իսրայելի ներումն ու մաքրագործումը:

Այս տեսարանը շատ է տարբերվում տարածված քրիստոնեական կերպարից՝ Հիսուսը մաքուր սպիտակ հագուստ է հագցնում մեղավորի մաշված կեղտոտ հագուստի վրայից: Իրական կյանքում ո՞վ այդպես կվարվեր: Ոչ ոք մաքուր հագուստը կեղտոտի վրայից չի հագցնում:

Նմանապես Զաքարիայի գրքում քահանայապետին մաքուր հագուստ հագցնելուց առաջ նրանից հանում են կեղտոտը: Սա չի նշանակում, որ մենք պետք է լինենք առանց մեղքի՝ նախքան կկարողանանք հագնել Քրիստոսի արդարությունը: Եթե դա այդպես լիներ, ո՞վ կկարողանար փրկվել: Սա նաև չի նշանակում, որ Հիսուսին ընդունելուց հետո մենք պետք է կատարելապես հնազանդվենք Նրան՝ ամեն օր որոշում ընդունելով՝ մահանալ մեր հին մեղավոր ուղիների համար և թույլ տանք Նրան՝ արարել մեզ Իր պատկերով: Այդ ժամանակ մեզ կծածկի Քրիստոսի կատարյալ արդարության հագուստը:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Հակոբոս 1.21-ը: Որքանո՞վ եք դուք ջանադրաբար ձգտում ձեր կյանքում կիրառել այդ խորհուրդը: Մենք ինչպե՞ս կարող ենք ընդունել «պատվաստվող խոսքը»:

Ուրբաթ հոկտեմբերի 17

Հեպագա ուսումնասիրության համար

Մեղքի ուժի և Աստծո վերափոխող զորության մասին կարդացե՛ք Է. Ուայթի «Քայլեր դեպի Քրիստոս» գրքում, «Ապաշխարություն» գլուխը (23-26): Ամփոփեք գլխավոր մտքերը:

«Փրկության ծրագիրը նախատեսում է սատանայի իշխանությունից մեր լիակատար ազատագրումը: Քրիստոսը միշտ ապաշխարող հոգուն առանձնացնում է մեղքից: Նա եկավ, որպեսզի ավերի սատանայի գործը, և Նրա կամքով Սուրբ Հոգով կօժտվի ցանկացած ապաշխարող հոգի, որպեսզի նրան հետ պահի մեղքից» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 311):

«Եթե դուք Քրիստոսին ընդունել եք որպես անձնական Փրկիչ, պետք է մոռանաք ինքներդ ձեզ և ջանաք օգնել ուրիշներին: Խոսեցե՛ք Քրիստոսի մահվան մասին, պատմե՛ք Նրա բարության մասին: Կատարե՛ք առաջացող բոլոր պարտավորությունները: Ձեր սրտում կրե՛ք ուրիշների բեռները և ձեզ մատչելի ցանկացած եղանակով ջանացե՛ք փրկել կորածներին: Ընդունելով Քրիստոսի Հոգին՝ անշահախնդիր սիրո և ուրիշներին ծառայելու Հոգին, դուք կաձեք և պտուղ կբերեք: Ձեր բնավորության մեջ կհասունանան Հոգու առաքինությունները: Ձեր հավատը կաձի, ձեր համոզմունքները կխորանան, իսկ ձեր սերը կկատարելագործվի: Դուք ավելի ու ավելի կարտացոլեք Քրիստոսի նմա-

նությունը ամեն բանում, ինչ մաքուր է, փառքի արժանի և սիրալիր» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 67, 68):

Հարցեր քննարկման համար

1. Խորհեցե՛ք բառերի զորության մասին: Ինչո՞ւ են դրանք այդքան ուժեղ: Ինչպե՞ս կարելի է կառավարել խոսքը:
2. Ո՞րն է «ի վերուստ» ձեր ստացած ամենամեծ պարգևը և ինչո՞ւ:
3. Կարդացե՛ք Հակոբոս 1.12-21-ը: Ի՞նչ կարևոր լուր է հնչում այս հատվածում: Ի՞նչ խոստումներ և հույսեր են բովանդակվում այնտեղ մեզ համար:
4. Ցանկությունը մեղք է ծնում, իսկ մեղքը՝ մահ: Թեև այդքան շատ բան է դրված խաղաթղթին, ինչո՞ւ մենք հարկ եղած հաղթանակները չենք տանում մեղքի դեմ: Մենք ինչպե՞ս ենք ջանում բացատրել մեղքը, և ինչո՞ւ է միշտ վտանգավոր այդ «մտավոր խաղը» խաղալը:
5. Կարդացե՛ք Է. Ուայթի վերը բերված ասույթը «Քրիստոսի առակները» գրքից: Ի՞նչ կարևոր խորհուրդ կա այնտեղ, հատկապես՝ հավատի մեջ տատանվողների համար:

Դաս 4

հոկտեմբերի 18-24

ԼՍՈՂՆԵՐ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հակոբոս 1.23,24, Մատթեոս 19.16-22, Ղուկաս 6.27-38, Հռոմեացիս 8.2-4, 12.9-18, Բ Պետրոս 1.4:

Հիշելու համարը.

«Բայց Խոսքը անող եղեք, և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով» (Հակոբոս 1.22):

Ժան-Ֆրանսուա Գրավլեն (ավելի հայտնի է որպես Ծառլ Բլոնդեն) նշանավոր դարձավ այն բանից հետո, երբ ծոպանով անցավ Նիագարայի ջրվեժից ներքև գտնվող ձորի վրայով: 1860 թվականի սեպտեմբերին Ուելսի արքայազնը դարձավ այն բանի վկան, թե ինչպես Բլոնդենը մարդ շալակած անցավ ձորի վրայով: Վերադառնալով՝ Բլոնդենն արքայազնին առաջարկեց նրան էլ անցկացնել Նիագարայի վրայով: Թեև արքայազնը լսել էր ծոպանագնացի ընդունակությունների մասին և նույնիսկ քիչ առաջ *տեսել* էր նրան գործողության մեջ, նա, այնուամենայնիվ, պատրաստ չէր իր կյանքը վստահել Բլոնդենին:

Բանն այն է, որ երբ խոսքը վերաբերում է Աստծո հետ մեր փոխհարաբերություններին, լսելն ու տեսնելը բավական չէ: Մտավոր մակարդակում մենք կարող ենք համոզված լինել Աստծո գոյության, Ավետարանի ճշմարիտ լինելու ու Երկրորդ գալստյան անխուսափելիության մեջ: Մենք անգամ կարող ենք լինել Աստծո սիրո և հոգատարության ականատեսները: Բայց չնայելով այդ ամենին՝ մենք կարող ենք պատրաստ չլինել մեզ լիովին Նրա ձեռքը հանձնելուն, այսինքն՝ կատարել գործողություն, որը կբացահայտվի մեր գործերում: Հենց այդ պատճառով էլ Հակոբոսն ընդգծում է այն բանի կարևորությունը, որ պետք է լինել Խոսքը *կատարողներ*, և ոչ թե լոկ լսողներ:

Այս շաբաթ մենք կքննարկենք այն թեման, թե շնորհով փրկվածների համար ինչ է նշանակում լինել Խոսքը կատարողներ:

Միաշաբթի **հոկտեմբերի 19**

Ճանաչելով սեփական թշնամուն

Մի անգամ ինչ-որ մեկը իր թշնամու մասին ասել է. «Ես նրան տեսնում եմ ամեն օր, երբ սափրվում եմ»: Հակոբոսը ցանկանում է, որ մենք գիտակցենք. մեր վատթարագույն թշնամին մենք ինքներս ենք: Փրկությունն սկսվում է այն ժամանակ, երբ մենք տեսնում ենք, թե ով ենք մենք իրականում, և ոչ թե ինչ ենք մենք երևակայում:

Կարդացե՛ք Հակոբոս 1.23,24-ը: Ո՞ւմ մասին է խոսվում այստեղ, և ո՞րն է հիմնական հիմնախնդիրը: _____

_____

_____

Ելնելով այն նախադրյալից, որ ոչ մի վատ բան չկա լավագույն տեսքն ունենալու մեջ, շատ մարդիկ բավականին ժամանակ են ծախսում իրենց արտաքին տեսքը բարելավելու նպատակով: Բայց մենք պետք է համոզվենք, որ չենք խաբում ինքներս մեզ: Հակոբոսն ընդգծում է. մենք պետք է ավելի լավ ուսումնասիրենք ինքներս մեզ, թեև տեսածից շատ բան կարող է մեզ դուր չգալ:

Կարդացե՛ք Մատթեոս 19.16-22 և 26.33-35,69-75-ը: Այս երկու մարդկանց՝ իրենց մասին ունեցած կարծիքը ինչո՞վ էր տարբերվում իրականությունից: Ի՞նչ է ասում նրանց մասին տարբեր արձագանքը Հիսուսի խոսքերին: _____

_____

_____

_____

Հարուստ երիտասարդը *մտածում էր*, թե ինքը պահում է պատվիրանները: Հանկարծ նրան առաջարկվեց դրսևորել այլ հնազանդություն, որի մասին նա երբեք չէր էլ մտածել՝ առավել խորը հնազանդություն, քան արտաքին համապատասխանությունը նորմերին ու կանոններին (տե՛ս Հռոմեացիս 7.7-ը): Պետրոսը, ինչպես և այդ երիտասարդը, նույնպես սխալ կարծիք ուներ իր մասին: Նա ինքնավստահ խոստացավ. անգամ եթե բոլորը սայթաքեն և նահանջեն, ինքը հավատարիմ կմնա, նույնիսկ եթե դրա համար ստիպված լինի սեփական կյանքով վճարել: Նրանցից ոչ մեկը չէր գիտակցում, թե որքանով է մեղքը նրանց ամուր պահում իր ճիրաններում: Երկուսն էլ խաբված էին իրենց իսկական հոգևոր վիճակի հարցում: Սակայն Պետրոսը հետագայում դարձի եկավ, իսկ հարուստ երիտասարդ իշխանը, որքանով մեզ հայտնի է՝ ո՛չ:

Ուրիշների թերությունները տեսնելն անհամեմատ ավելի դժվար է, քան մերը, այնպես չէ՞: Թեև մեր էության խորքում, հավանաբար, մեր մեջ նկատում ենք թերություններ, բայց պատրաստ չենք խոստովանելու դրանք: Ավելի՛ խորամուխ եղեք ձեր ներքնաշխարհի մեջ: Հայտնաբերվածը ի՞նչ է ասում Փրկչի հանդեպ ձեր կարիքի մասին, առանց Ում դուք անխուսափելիորեն կկործանվեք հավիտենության համար:

Երկուշաբթի **հոկտեմբերի 20**

Լինել կատարող

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Հակոբոս 1.22-ը: Հակոբոսը կոչ է անում «լինել» Խոսքը կատարողներ: Որքանո՞վ կփոխվեր լուրը, եթե Հակոբոսն ուղղակի ասեր. «կատարեցե՛ք խոսքը»: _____

_____

_____

Հակոբոսը միավորում է «լինել» և «կատարել» բայերը: Նա դրանք չի տարանջատում և մեկին մյուսից առավել կարևորություն չի տալիս: Մետաղադրամի երկու կողմերի նման նրանք անբաժանելի են: Մենք *պետք է* կատարողներ լինենք: Ավելին, ժամանակը, որով այստեղ դրված է հունարեն բառը, որ թարգմանված է որպես «կլինեք», մատնանշում է շարունակվող գործողություն, այսինքն՝ ենթադրում է հնազանդություն՝ որպես մշտական կենսակերպ, որ ավելի շուտ հիմա է ակնկալվում մեզանից, քան ինչ-որ մի անորոշ պահի՝ ապագայում:

Բանն այն է, որ մենք պետք է նոր մարդիկ դառնանք Տիրոջ մեջ, և որպես արդյունք այն բանի, թե ով ենք մենք *դարձել*, մենք *կատարում ենք* այն, ինչ մեզ հրամայում է Աստված: Այդպիսի կատարումն էապես տարբերվում է պարզապես կանոններին հետևելուց, ինչը խնդիր էր երիտասարդ իշխանի համար, ինչպես մենք տեսանք երեկվա դասի մեջ):

Կարդացեք Ղուկաս 6.27-38-ը: Մենք ի՞նչ գործողություններ պետք է ձեռնարկենք: _____

_____

«Սիրեցե՛ք ձեր թշնամիներին», «բարի արեք ձեզ ատողներին», «քեզանից խնդրողին տուր», «ողորմած եղեք, ինչպես ձեր Հայրն էլ

ողորմած է» (Ղուկաս 6.27,30,36): Հնչում է որպես ինչ-որ անհնար բան, այնպես չէ՞: Մեր սեփական ուժերի համար դա իսկապես անհնար է: Այդպիսի սերը մեղսավոր մարդկանց մեջ ի հայտ չի գալիս ինքնին: Այդ պատճառով Հիսուսը խոսում է ծառերի երկու տարբեր տեսակների և դրանց պտուղների մասին (Ղուկաս 6.43-45):

Նույն կերպ Գաղատացիս 5-ում Պողոսը հակադրում է մարմնի *գործերը* (Գաղատացիս 5.19-21) և Հոգու *պտուղը* (Գաղատացիս 5.22, 23): Ստացվում է, որ մենք ինչքան շատ ենք կենտրոնանում *գործերի* վրա, այնքան ավելի վատն ենք դառնում, այն դեպքում, երբ *Հոգու առաջնորդությունը* հանգեցնում է միանգամայն այլ արդյունքի՝ սիրո և հնազանդության պտղին:

Խորհեցե՛ք այն ժամանակի մասին, երբ դուք որոշակի արարքներ եք գործել պարզապես այն պատճառով, որ դա պահանջվել է ձեզանից, կամ դուք հետևել եք հաստատված կանոնին: Իսկ այժմ մտաբերե՛ք այն ժամանակը, երբ դուք արել եք այդ նույնը, որովհետև ցանկանում էիք դա անել, դա ձեզ համար բնական էր՝ ձեզանում բնակվող Քրիստոսի շնորհիվ: Այդ հակադրությունն ինչպե՞ս է օգնում ձեզ՝ հասկանալու այսօրվա դասի էությունը:

Երեքշաբթի **հոկտեմբերի 21**

Ազատության օրենքը

Կարդացե՛ք Հակոբոս 1.25-ը: Ի՞նչ է ասում առաքյալն Օրենքի դերի մասին: _____

_____

_____

Հակոբոսը կրկնում է Սաղմոսները՝ Աստծո Օրենքն անվանելով անարատ (կատարյալ) (Սաղմոս 19.7)՝ դրա մեջ տեսնելով ազատության ուղին (Սաղմոս 119.15): Բայց ուշադրություն դարձրեք՝ իր Թղթում առաքյալը ոչ մի տեղ չի ասում, որ Օրենքը կարող է մեզ փրկել կամ մաքրել: Օրենքը մեզ ցույց է տալիս Աստծո իդեալը, սակայն չի կարող մեզ ընդունակ դարձնել՝ հետևելու այդ իդեալին, ինչպես համաշխարհային մակարդակի մարզիկի ապշեցուցիչ վարպետությունը դիտելը մեզ ընդունակություն չի տալիս՝ կրկնելու նրա վարժությունները: Աստծո իդեալին հետևելու համար մենք մեր կյանքում ապրող Քրիստոսի զորության կարիքն ունենք:

Կարդացե՛ք Հռոմեացիս 8.2 և Բ Կորնթացիս 3.17,18-ը: Ինչո՞վ է պայմանավորված Օրենքի՝ որպես մահվան գործիքի և Օրենքի՝ որպես կյանքի ու ազատության ուղենիշի տարբերությունը: _____

_____

Պողոսը պնդում է, որ «ոչ թե Օրենքը լսողներն են Աստծո առջև արդար, այլ Օրենքը կատարողները կարդարանան» (Հռոմեացիս 2.13): Նրա խոսքերով՝ մենք կարող ենք կատարողներ դառնալ միայն Հոգու գործունեության շնորհիվ, որ Օրենքը գրում է մեր սրտերում: Միայն երբ մենք ի սրտե հնազանդվում ենք Օրենքին, այն մեզ համար դառնում է ազատության Օրենք:

Այսպիսով, խնդիրը ոչ թե Օրենքն է, այլ մենք: Մենք մոռանում ենք, թե ովքեր ենք իրականում՝ մեղավորներ, ովքեր մշտապես Փրկչի կարիքն ունեն: Եթե մենք առանց Քրիստոսի ենք, ապա լսում ենք միայն Օրենքի դատապարտումը: Բայց Քրիստոսում մենք նոր տղամարդիկ և կանայք ենք դառնում (Բ Կորնթացիս 5.17)՝ ազատ Հիսուսում (Հովհաննես 8.36): Մենք լսում ենք, թե ինչպես է Նա մեզ դիմում Օրենքի խոսքերով. «Իրար սիրեք, ինչպես որ Ես ձեզ սիրեցի» (Հովհաննես 15.12): Քրիստոսում մենք գտնում ենք Աստծո որդիների և դուստրերի ազատությունը, ովքեր փրկվում են շնորհով և չեն ցանկանում կրկին ընկնել դատապարտման տակ և վերադառնալ մեղքի ստրկությանը: Քրիստոսում մեր մեղքերը ոչ միայն ներված են, այժմ մենք ունենք նոր կյանք, որի մեջ ընդունակ ենք հնազանդվել Օրենքին: Սակայն մենք դա չենք անում փրկվելու համար համար, ընդհակառակը, մեզ դրդողը ազատությունն է, որ գալիս է արդեն փրկված լինելու և այդ պատճառով Օրենքի դատապարտման ներքո չլինելու գիտակցումից:

Խորհեցե՛ք՝ մենք ի՞նչ կզգայինք, եթե փորձեինք մեր բնույթով կատարելապես իրականացնել Օրենքը, որպեսզի փրկվենք նրանով: Դա ինչպե՞ս կվերածեր Օրենքը ստրկության գործիքի: Ինչպե՞ս է մեզ ազատել Հիսուսն այդ ստրկությունից և միևնույն ժամանակ հրամայել մեզ՝ պահել Օրենքը:

Չորեքշաբթի **հոկտեմբերի 22**

Օգտակա՞ր, թե՞ անօգուտ

Կարդացե՛ք Հակոբոս 1.26,27-ը և համեմատե՛ք Մատ-

թեոս 25.35,36,40-ի և Հռոմեացիս 12.9-18-ի հետ: Այդ հատվածների լույսի ներքո դուք ինչպե՞ս կբնորոշեք ճշմարիտ քրիստոնեությունը: _____

_____

_____

Հիսուսը, Հակոբոսն ու Պողոսը մեր ուշադրությունն հրավիրում են այն բանին, թե որքան կարևոր է *օգտավետ* քրիստոնյա լինելը: Սեր դրսևորելով «Նրա փոքր եղբայրների» հանդեպ (Մատեթոս 25.40), ժամանակ հատկացնելով նրանց այցելելուն, ում ամենահեշտն է մոռանալ, հյուրընկալություն դրսևորելով և շատ ուրիշ բաներ անելով՝ մենք գործնականում դրսևորում ենք Հիսուսի սերը և դառնում ենք Նրա սիրո հունը: «Ավետարանի օգտին ամենահզոր փաստարկը սիրող և սիրալիր քրիստոնյան է» (Է. Ուայթ, Ապաքինման ծառայություն, 470): Իհարկե, ինչպես հետագայում բացատրում է հեղինակը, «այդպիսի կյանքն ու այդպիսի ազդեցությունը յուրաքանչյուր քայլափոխի ջանքեր է պահանջում, անձնազոհություն և կարգապահություն» (նույն տեղում, 470): Դա տեղի չի ունենում ինքնաբերաբար կամ ավտոմատ կերպով: Եթե մեր կրոնը բաղկացած է լոկ մեր հավատի մասին հայտարարություններից և քարոզներին հաճախելուց, այն գործնականում անօգուտ է:

26, 27 համարներում Հակոբոսը բարեպաշտությունը՝ այսինքն կրոնը, նկարագրում է բառերով, որոնք նշանակում են *լինել արտաստվոր կերպով աստվածավախ*: Այդպիսի վերաբերմունքը անհապաղ աչքի զարնող հետևանքներ ունի, և մարդիկ կնկատեն տարբերությունը:

Ամենաակներև փոփոխություններից մեկը կլինի բառերի ընտրությունը: Անզուսպ նկատողություններ, կոպիտ շարժուձև և ձայնի տոն օգտագործելու փոխարեն՝ մենք առավել զգայուն կդառնանք այն բանի հանդեպ, թե ինչ ազդեցություն է գործում շրջապատողների վրա նրանց հետ մեր շփումը: Մենք «կսանձահարենք մեր լեզուն, որպեսզի այն մեզանից առաջ չսլանա՝ անսանձ վայրենի ձիու նման:

Հակոբոսը նաև առանձնահատուկ կերպով է խոսում որբերի և այրիների մասին՝ որպես մարդկանց, ովքեր առավելագույնս ունեն մեր սիրո և հոգատարության կարիքը: Բացի դրանից, մեզանից սեր և կարեկցանք են ակնկալում նաև վտարվածները և այս աշխարհից մերժվածները: Աստծո տեսակետից հենց այդպիսի մարդկանց հանդեպ մեր վերաբերմունքն է վկայում, թե մեզանից ով է Քրիստոսի իսկական հետևորդ. մենք կամ պարտքով փող ենք տալիս նրանց, ովքեր

չեն կարող վերադարձնել դա, ճաշի ենք հրավիրում նրանց, ովքեր չեն կարող փոխարենը հրավիրել մեզ, կամ էլ օրհնում ենք մեզ նեղացնողներին և աղոթք ենք անում նրանց համար (Ղուկաս 6.35,14.12-14, Մատթեոս 5.44): Ինչպես ընդգծում է Պողոսը, մենք «Նրա ստեղծվածն ենք Քրիստոս Հիսուսով՝ հաստատված բարի գործերի համար» (Եփեսացիս 2.10):

Դուք որքա՞ն ժամանակ և էներգիա եք նվիրաբերում կարիքավորներին օգնելուն: Ձեր պատասխանն ի՞նչ է ասում այն մասին, թե իրականում որքանով է «օգտակար» ձեր հավատը:

Հինգշաբթի հոկտեմբերի 23

Ոչ այնպես, ինչպես աշխարհը

Ի՞նչ է նշանակում «անձն աշխարհից անարատ պահել» (Հակոբոս 1.27): Առհասարակ դա ինչպե՞ս է հնարավոր: Տե՛ս նաև Ա Հովհաննես 2.15,16, Բ Պետրոս 1.4-ը: _____

_____

_____

_____

Որոշ մարդիկ համարում են, որ եթե միայն իրենց հաջողվեր հեռու մնալ այս աշխարհից, իրենք կխուսափեին շատ գայթակղություններից: Թեև դրա մեջ ճշմարտության բաժին կա, և մենք էլ պետք է ջանանք հնարավորինս խուսափել փորձություններից (հատկապես նրանցից, որոնց դիմակայելը մեզ համար ամենից դժվար է), մեր խնդիրներն ու թուլությունները միտում ունեն հետևելու մեզ՝ ուր էլ մենք գնանք: Մեղքի խնդիրը ոչ այնքան այն է, ինչ *մեր շուրջն* է (թեև դա նույնպես իր դերն ունի), որքան այն, ինչ *մեր ներսում* է՝ մեր սրտերում: Ահա՛ թե որտեղ է տեղի ունենում իսկական ճակատամարտը, և մենք պետք է մղենք այդ ճակատամարտը, որտեղ էլ որ ապրենք:

Հետաքրքիր է նշել, որ որոշ խնդիրների լուծումը առավել ակներև է դարձնում մնացյալ խնդիրները: Օրինակ, եթե դուք մաքրություն անեք սենյակի մի մասում, ապա մյուս մասերը դրա ֆոնին է՛լ ավելի վատ տեսք կունենան, քան նախկինում: Նման մի բան էլ տեղի է ունենում հոգևոր կյանքում. «Որքան դուք ավելի մոտ լինեք Քրիստոսին, այնքան ավելի շատ կնկատեք սեփական թերությունները, քանի որ ձեր տեսողությունը առավել հստակ կդառնա, և ձեր անկատարությունները տեսանելի

կլինեն Նրա կատարյալ էության հետ պարզորոշ հակադրության մեջ» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 64):

Եկե՛ք այստեղ Էլեն Ուայթին չվերագրենք այն, ինչ ինքը *չի* ասում: Նա չի ասում՝ որքան մենք ավելի ենք մոտենում Հիսուսին, այնքան ավելի անկատար ենք դառնում: Նա շարունակում է. «Որքան ավելի ուժեղ է մեր կարիքի գիտակցությունը մեզ գրավում դեպի Նա և դեպի Աստծո Խոսքը, այնքան առավել վսեմ պատկերացում մենք կունենանք Նրա բնավորության մասին և դրանով իսկ առավել կատարյալ կերպով կարտացոլենք Նրա պատկերը» (նույն տեղում, 65):

Ճշմարիտ կրոնը մարդուն տանում է դեպի առավել խորը փորձառության «ծարավ» և «քաղց» (Մատթեոս 5.6): Հիսուսը բավական ժամանակ է անցկացրել Իր երկնային Հոր հետ առանձնության մեջ՝ ցանկանալով իմանալ Նրա կամքը: Ընդ որում, Նա երբեք չէր անջրպետվում մարդկանցից, ընդհակառակը, գնում էր դեպի նրանք: Նրա «սնունդը» Իր սիրով կարիքավորներին հասնելն էր, նախապաշարմունքների ստեղծած պատնեշները խորտակելը և հավիտենական կյանքի մասին բարի լուրը բոլոր մարդկանց բերելը (Հովհաննես 4.28-35):

Թեև Հիսուսը և առաջին քրիստոնյաները իրենց սննդով և կենսակերպով բավականին շատ էին տարբերվում իրենց շրջապատող հեթանոս աշխարհից, այդ տարբերությունները նրանց հետ չէին պահում իրենց հավատով կիսվելուց: Նրանք գնում էին ամենուր, այդ պատճառով Բարի լուրը տարածվեց կայսրության մեջ՝ ամուր արմատներ ձգելով անգամ այլասերման ու չարագործության այնպիսի կենտրոններում, ինչպիսին Հռոմն էր:

Ուրբաթ հոկտեմբերի 24

Հետագա ուսումնասիրության համար.

Է. Ուայթի «Քայլեր դեպի Քրիստոս» գրքից կարդացե՛ք «Պատկանո՞ւմ ենք մենք Քրիստոսին» գլուխը (59-63):

«Օրենքը բարոյականության խոշոր հայելի է: Մարդը պետք է իր խոսքերը, իր ոգին և իր արարքները համադրի Աստծո Խոսքի հետ» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հատոր 7, 935):

«Մարդուն հնազանդությունից ազատելու փոխարեն՝ հավատը և միայն հավատն է մեզ հաղորդակից դարձնում Քրիստոսի շնորհին, որը մեզ ընդունակություն է տալիս՝ հնազանդություն դրսևորելու:

Ինչպիսին Հիսուսն էր Իր մարդկային էությամբ, այնպիսին ցանկանում է տեսնել Աստված նաև Նրա հետևորդներին: Նրա զորությամբ մենք պետք է ապրենք մաքրության և ազնվության կյանքով՝ կյանք, որ ապրել է Փրկիչը» (Է. Ուայթ, Մեր Հայրը հոգում է, 69):

Հարցեր քննարկման համար

1. Թեև մեզ համար միայն օգտակար կլինի, եթե հեռանանք աշխարհային ունայն վայրերից, ինչո՞ւ դա չի կարող վերջնական պատասխանը լինել մեղքի ու գայթակղության խնդիրներին: Որքանո՞վ հեռու ստիպված կլինենք գնալ մենք, որպեսզի կատարելապես հեռանանք ամեն տեսակ գայթակղությունից: Ո՞րն է մեղքի ու գայթակղության խնդրի միակ պատասխանը՝ անկախ նրանից, թե որտեղ ենք մենք ապրում:
2. Ոստիկանությունը ջանում էր էլեկտրոնային լսման սարք տեղադրել այն վայրում, որտեղ, ինչպես նրանք կասկածում էին, աշխատում էին հանցագործները: Բայց մի խնդիր կար՝ տարածքը պահպանում էին չար դոբերմանները: Ոստիկանները գտան ելքը: Ամեն գիշեր նրանք շներին կերակրում էին համբուրգերներով: Որոշ ժամանակ անց շները ոչ միայն համբուրգերներն էին ուտում էին ոստիկանների ձեռքից, այլև նրանց ձեռքերն էին լիզում ուտելուց հետո: Այդպիսով, ձեռնասուն դարձնելով պահակային շներին, ոստիկանությունը կարողացավ ներթափանցել տարածք և գաղտնալսող սարքեր տեղադրել: Ի՞նչ կարող ենք մենք սովորել այս պատմությունից այն բանի վերաբերյալ, որ մենք պետք է զգույշ լինենք, այլապես մեր «պահպանությունը» կարող է մեզ դավաճանել:
3. Խորհեցե՛ք այն գաղափարի մասին, որ պետք է լինել Խոսքը կատարողներ, ոչ թե պարզապես հավատալ Խոսքին: Ո՞րն է իրական տարբերությունը մեկի և մյուսի միջև:
4. Դուք ի՞նչ կպատասխանեք այն մարդկանց, ովքեր համարում են, թե Քրիստոսի շնորհը իրենց ազատել է Օրենքից: Ի՞նչ են ուզում ասել նրանք իրականում, և դուք ինչպե՞ս կպատասխանեք նրանց:

Դաս 5

հոկտեմբերի 25-31

ՍԵՐ ԵՎ ՕՐԵՆՔ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հակոբոս 2.1-13, Մարկոս 2.16, Ղևտացոց 19.17,18, Հռոմեացիս 13.8-10, Հովհաննես 12.48:

Հիշելու համարը.

«Որովհետև անողորմ դատաստան պիտի լինի ողորմություն չանողի վրա, և ողորմությունը պարծենում է դատաստանի դեմ» (Հակոբոս 2.13):

Մենք լավ գիտենք բարի սամարացու առակը, բայց հարցն այն է, թե որքանով ենք ընկալում այն: Նախ քահանան, հետո ղևտացին տեսան ճանապարհի մոտ պառկած կիսամեռ մարդուն: Թեև երկուսն էլ կանոնավոր կատարում էին իրենց կրոնական պարտականությունները, նրանցից ոչ մեկը ընդունակ չեղավ այդ պարտականությունները կապել տուժած մարդու առջև իրենց ունեցած պարտքի գիտակցության հետ: Այդ պատճառով յուրաքանչյուրը շարունակեց իր ճանապարհը: Վերջապես, այդ նույն ճանապարհով վիճակվեց անցնել սամարացուն, ով կիսով չափ հեթանոս էր. նա խղճաց տուժածին, կապեց նրա վերքերը և վճարեց հյուրանոցում նրա բնակվելու վարձը, որտեղ նա կարող էր կազդուրվել և ուժերը վերականգնել: Նա նաև հյուրանոցի տիրոջը խոստացավ վճարել հետագա բոլոր ծախսերը, որ կապված կլինեն տուժած ճանապարհորդին խնամելու հետ (տե՛ս Ղուկաս 10.30-37):

Հիսուսը պատմեց այս առակը՝ պատասխանելով հավիտենական կյանքի մասին օրինամոլի հարցին: Օրինամոլին «Ավելի ջանադրաբար ձգտիր» կամ «Ավելի շատ բան արա» ասելու փոխարեն՝ Հիսուսը պատկերում է սերը գործողության մեջ: Այսինքն՝ մենք պետք է սիրենք անգամ հնարավոր վտանգ պարունակող և տհաճ հանգամանքներում, սիրենք անգամ նրանց, ովքեր մեզ դուր չեն գալիս:

Թեև դա հեշտ չէ և հաճախ հակասում է մեր էությանը, ճշմարիտ սերը ներառում է ռիսկի մի մեծ բաժին և կոչ է անում մեզ՝ կործանել մարդկանց բաժանող պատնեշները՝ ինչպես եկեղեցուց դուրս, այնպես էլ՝ (հատկապես) եկեղեցու ներսում: Այս շաբաթ մենք կիմանանք, թե Հակոբոսն ինչ է ասում այս կենսահաստատ ճշմարտության մասին:

Միաշաբթի **հոկտեմբերի 26**

Ոսկու մեջ թաղված մարդը

Կարդացե՛ք Յակոբոս 2.1-4: Այս դասը, բացի մնացած ամեն ինչից, օգտագործում է հակադրությունները: Մի մարդ հարուստ է, լավ է հագնված և, ըստ երևույթին, չափազանց ծանրակշիռ է, այն դեպքում, երբ մյուսը աղքատ է, վատ հագնված և, ըստ ամենայնի, իրենից ոչինչ չի ներկայացնում: Մեկի հանդեպ առավելագույն հարգանք են դրսևորում, իսկ մյուսին անտեսում: Մեկին հարմար տեղ են առաջարկում առջևում, իսկ մյուսին ասում են. «Մի կո՛ղմ քաշվիր» կամ «Քեզ համար տե՛ղ գտիր հատակին»:

Այնքան էլ հրապուրիչ պատկեր չէ, հատկապես այն պատճառով, որ նկարագրված են (առնվազն՝ հնարավոր է) երկրպագության ժամանակ տեղի ունեցող իրադարձությունները: Յունարեն *սյունագոգե* բառը, որը 2-րդ համարում թարգմանված է որպես «ժողովարան», հավանաբար, հուդայաքրիստոնեական շաբաթօրյա ծառայության վաղ հիշատակումն է: Այդպիսի ժողովները մեծամասամբ տեղի էին ունենում տներում (տե՛ս Գործք առաքելոց 18.7,8):

Առաջին դարի հունահռոմեական մշակույթի մեջ հեղինակությունն ու հասարակության մեջ զբաղեցրած դիրքը հսկայական նշանակություն ունեին: Հարուստներից, կրթվածներից կամ քաղաքական ազդեցություն ունեցողներից ակնկալվում էր, որ նրանք կկարողանան դրականորեն անդրադառնալ որևէ մեկի հեղինակության վրա և նպաստել որևէ մեկի շահերի պաշտպանությանը: Հասարակական կամ կրոնական նախագծերի համար ցանկացած խոշոր ընծա ստացողին պարտավորեցնում էր ինչ-որ կերպ շնորհակալ լինել բարեգործին: Բարության համար հատուցում էին հավատարմությամբ, առատաձեռնության համար՝ համընդհանուր երախտապարտությամբ: Քրիստոնեական երկրպագություններին այցելող բարձրագույն խավի ներկայացուցիչները, իսկ նրանք այնքան շատ-շատ էին, իրենց հանդեպ յուրահատուկ վերաբերմունք էին ակնկալում: Այդպիսի ակնկալիքներն անտեսելը նշանակում էր եկեղեցին զրկել այդ մարդկանց բարեհաճությունից: «Ոչ դիվանագետ» վարք դրսևորելը կամ հասարակական արժեքների մերժումը համարվում էր վիրավորանք և տարաձայնությունների պատճառ:

Կարդացե՛ք Մարկոս 2.16 և Ղուկաս 11.43-ը: Այն ժամանակվա ո՞ր հասարակական նորմերն են հիշատակ-

ված այստեղ: Ինչպե՞ս են հակասում դրանք Ավետարանի սկզբունքներին: _____

_____

Աղքատությունը կամ հարստությունը մեղք չեն, բայց մեր վերաբերմունքն այն մարդկանց հանդեպ, ովքեր մեզանից տարբերվում են նյութական վիճակով, տարիքով, կրթությամբ և անգամ կրոնական համոզմունքներով, մեր քրիստոնեական հասունության ծանրաչափերից մեկն է: Մենք հակված ենք ավելի շատ հարգանք մատուցել սոցիալական սանդուղքի վրա մեզանից «վեր» կանգնածներին և ավելի քիչ՝ «ներքև» կանգնածներին: Մեզ հարկավոր է հիշել՝ շատ հեշտ է հետևել մեծամասնության սովորություններին՝ չնայելով այն բանին, որ Աստված մեզ կանչում է տարբեր լինելու:

Եկե՛ք ավելի խորը նայենք այս խնդրին. հնարավոր է՝ մենք ոչ այնքան ակնհայտ անքաղաքավարի ենք, որքան դա նկարագրված է Հակոբոսի թղթում, բայց մի՞թե մենք ամենքս էլ հակված չենք սիրեցյալներ ունենալու: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել մեր մեջ տեսնել այս խնդիրը և հաղթահարել այն:

Երկուշաբթի հոկտեմբերի 27

Դասակարգային պայքարը

Յուրաքանչյուր գրական ավետարանչի հայտնի է, որ հաճախ ամենից *քիչ* ունեցող մարդիկ պատրաստ են զոհաբերել ամենից *շատ*, որպեսզի քրիստոնեական գրքեր գնեն: Ապահովված թաղամասերում հաճախ դժվար է գրականություն վաճառել, քանի որ դրանց բնակիչները լիովին բավարարված են նրանով, ինչ ունեն, և ամենից հաճախ Աստծո կարիքն այնպես չեն զգում, որքան պակաս ունևոր մարդիկ: Այդ նույն երևույթը դիտվում է նաև մեծ մասշտաբներով. սովորաբար եկեղեցին առավել արագ է աճում այնտեղ, որտեղ տնտեսական կամ սոցիալական ճգնաժամ է: Ի վերջո, մի՞թե մեծ դժվարությունների դեմ պայքարող մարդիկ առավել ընկալունակ չեն Հիսուսի պատմության առաջարկած հույսի հանդեպ, քան նրանք, ովքեր համարում են, որ իրենց գործերը հրաշալի են:

Կարդացե՛ք Հակոբոս 2.5,5-ը: Ինչի՞ մասին է գրում առաքյալը՝ շարունակելով նախորդ չորս համարների թեման:

_____

Տվյալ համարների հիման վրա կարելի է եզրակացնել, որ եկեղեցու գլխավոր խնդիրը հարուստների և աղքատների հարցն էր: Աստված ընտրել է աղքատներին, ովքեր, թեկուզ և աշխարհի կողմից մերժված, հարուստ էին հավատով, այն դեպքում, երբ հարուստներն իրենց հարստությունն օգտագործում էին աղքատներին նեղելու համար: Այն ժամանակ հարուստների կողմից աղքատների շահագործման խնդիրը մշտական իրողություն էր: Որ է՛լ ավելի վատ է, հռոմեական օրենքը խտրականությունը համակարգում էր աղքատների դեմ և հարուստների օգտին:

«Ստորին խավի ներկայացուցիչները, ովքեր, ինչպես համարվում էր, գործում էին տնտեսական շահերից ելնելով, չէին կարող մեղադրանքներ առաջ քաշել վերին խավի ներկայացուցիչների դեմ: Օրենքներն առավել խիստ պատժամիջոցներ էին նախատեսում իրավախախտումների համար դատապարտված ստորին խավի ներկայացուցիչների համար, քան վերին խավի իրավախախտների համար» (Craig S. Keener, The IVP Bible Background Commentary: New Testament (Downers Grove, Ill.: Inter Varsity Press, 1993), 694):

Կարդացե՛ք Հակոբոս 2.7-ը: Ի՞նչ կարևոր միտք է ընդգծում առաքյալը՝ այդպիսի անարդար վերաբերմունքի ազդեցության վերաբերյալ: _____

_____

Այդպիսի վարքն իսկապես հայհոյություն է, որն ստվեր է նետում Հիսուսի «բարի անվան» վրա: Վատ արարքները բավականաչափ վատն են ինքնին, բայց դրանք է՛լ ավելի վատն են դառնում, երբ կատարվում են Հիսուսի անունը դավանողների կողմից: Իսկ է՛լ ավելի վատ են վարվում նրանք, ովքեր Հիսուսի անվամբ օգտագործում են իրենց հարստությունը կամ իշխանությունը՝ այլ մարդկանց նկատմամբ եկեղեցում մեծարվելու համար, ինչը հաճախ տանում է պառակտումների և վեճերի: Որքա՜ն զգույշ պետք է լինենք մենք, որ մեր խոսքերում և արարքներում համապատասխանենք այն «բարի անվանը», որի հետ մենք կապում ենք մեզ:

Երեքշաբթի հոկտեմբերի 28

Սիրել մերձավորներին

Կարդացե՛ք Հակոբոս 2.8,9, Ղևտացոց 19.17,18 և Մատթեոս 5.43-45-ը: Ի՞նչ կարևոր լուրեր են բովանդակում այս

համարները: _____

_____

Հակոբոսն Աստծո Օրենքն անվանում է «թագավորական Օրենք» (Հակոբոս 2.8), քանի որ այն ԱՐՔԱՆԵՐԻ ԱՐՔԱՅԻ Օրենքն է (Հայտնություն 19.16): Նրա Արքայության Օրենքը մանրամասն նկարագրված է Լեռան քարոզում (Մատթեոս 5.7)՝ ներառելով Նոր Կտակարանում մերձավորի հանդեպ սիրո նորկտակարանյան ինը հիշատակումներից առաջինը: Մատթեոս 5.43-ում գրի առնված Հիսուսի խոսքերն արտահայտում են Ղևտացոց 19.18 համարի այն ժամանակվան բնորոշ ըմբռնումը: Օրինակ, Ղևտացոց գրքում անմիջականորեն նախորդող համարներում օգտագործվում են «մերձավոր» բառի ակներև հոմանիշները. դրանք արգելում են թշնամանք տածել «եղբոր» դեմ (Ղևտացոց 19.17) և բարկանալ իր «ժողովրդի որդիների» վրա (Ղևտացոց 19.18):

Ավելի շուտ, ոմանք համարում էին, որ միանգամայն տեղին է ոչ իսրայելացիներին ատելը և նրանց հանդեպ թշնամական զգացմունքներ տածելը, քանի որ այդ մարդիկ առանձնահատուկ կերպով հիշատակված չեն Ղևտացոց գրքի նշված տեքստերում: Ի վերջո, բոլոր հրեաները ոչ իսրայելացիներին ընդունում էին որպես թշնամիների: Այսօր մենք գիտենք, որ նման դիրքորոշումը տեղ էր գտել կումրանյան համայնքում, աստվածապաշտ հրեաների մի խումբ, ովքեր առանձնացել էին մնացյալ ժողովրդից: Նրանց սովորեցնում էին ատել «խավարի զավակներին» և «կործանման մարդկանց» (Համայնքի կանոններ, *1QS 1.10; 9.21, 22*): Այդպիսիք, ակներևաբար, արհամարհում էին ոչ միայն օտարերկրացիներին, այլ նույնիսկ համայքնի ուսմունքը մերժող հրեաներին:

Մեղքը բոլոր չարիքներից մեծագույնն է, և մենք պետք է գթանք մեղավորին ու օգնենք նրան: Շատ մեղանչողներ գիտակցում են իրենց ամոթն ու անմտությունը: Նրանք քաջալերանքի խոսքերի են ծարավի: Մենք չպետք է անտեսենք այս հոգիներին: Եթե մենք քրիստոնյա ենք, չենք անցնի մեկ ուրիշի տառապանքի կողքով՝ դիմացի մայթով, հեռու մնալով այն մարդկանցից, ովքեր ամենից շատ ունեն մեր օգնության կարիքը: Երբ մենք տեսնում ենք մարդկային տառապանքը, որ առաջ են բերում մեղքը կամ տառապանքները, երբեք չենք ասի. «Դա ինձ չի վերաբերում»» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 504):

Հիսուսի կյանքը անշահախնդիր սիրո մեծագույն օրինակ է նրանց հանդեպ, ովքեր չեն արժանացել այդ սիրուն

և չեն սիրել ի պատասխան: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել մեր սերն արտահայտել այն մարդկանց հանդեպ, ում անարժան ենք համարում կամ ովքեր չեն սիրում մեզ: Ինչո՞ւ, վերջին հաշվով, միակ պատասխանը կարող է լինել լիակատար նվիրաբերումը և սեփական «ես»-ի մահը:

Չորեքշաբթի **հոկտեմբերի 29**

Ողջ Օրենքը

Կարդացե՛ք Հակոբոս 2.10-ը: Այժմ կարդացե՛ք աղյուսակում բերված համարները և դրանք դասակարգե՛ք որպես «ողջ օրենքը», «սիրո օրենքը» կամ երկուսն էլ ընդգծող:

	Ողջ Օրենքը	Սիրո Օրենքը
Մատթեոս 5.18,19		
Մատթեոս 22.36-40		
Հռոմեացիս 13.8-10		
Գաղատացիս 3.10		
Գաղատացիս 5.3		
Գաղատացիս 5.14		

Մեզ համար դժվար է գիտակցել, թե որքանով էր արմատական Օրենքի մասին Հիսուսի ուսմունքը: Այն ժամանակվա (և այսօր էլ շատերի համար) աստվածավախ հրեաների ըմբռնմամբ՝ մարդը չի կարող հավակնել, թե պահում է Օրենքը՝ չպահելով բոլոր օրենքները, որ բովանդակվում էին Մովսեսի գրքերում: Ժամանակի ընթացքում 613 առանձին օրենք էր նույնականացվել (248 պարտադրող օրենք և 365՝ արգելող):

Հիսուսին տրված «Օրենքի մեծագույն պատվիրանի» (Մատեթոս 22.36) մասին հարցի նպատակը Նրան ծուղակը գցելն էր: Բայց թեև Հիսուսը խոսում էր յուրաքանչյուր «պստիկ նշանագրի, (յոտան եբրայական ամենափոքր տառն է, Մատթեոս 5.18) կարևորության մասին, Նա նաև սովորեցնում էր, որ Աստծո հանդեպ սերը և մերձավորի հանդեպ սերը ամենակարևոր պատվիրաններն էին, քանի որ դրանք ամփոփում են մնացած ամեն ինչը:

Հիսուսի ուսմունքը բացահայտում է, որ հնազանդությունը չի կարող դրսևորվել ինչ-որ դատարկ տարածության մեջ: Այն միշտ *կապված է*

փոխհարաբերությունների հետ, այլապես կորցնում է իմաստը: Այլ խոսքերով՝ եթե ես վերադարձնում եմ տասանորդը, քանի որ դա ճիշտ է կամ էլ որովհետև վախենում եմ կործանվելուց, եթե այդպես չվարվեմ՝ դա փոխհարաբերությունների հետ չկապված հնազանդություն է: Մյուս կողմից՝ եթե ես տասանորդը վերադարձնում եմ *Աստծուն*՝ ամեն ինչի համար երախտագիտությունից , ինչ Նա *ինձ* տվել է, այդ ժամանակ իմ գործողությունները հիմնված են Աստծո հետ փոխհարաբերությունների վրա:

Հիսուսը նաև խոսում էր «կարևորագույն օրենքի» մասին՝ «դատաստանի և ողորմության ու հավատի» (Մատթեոս 23.23): Այդ ամենը նույնպես պտտվում է Աստծո և մարդկանց հետ փոխհարաբերությունների շուրջը: Հետևաբար, Հակոբոսը չի ասում ոչինչ, որ կտարբերվեր Հիսուսի կամ Պողոսի ասածներից. Աստծո Օրենքի *ցանկացած* խախտում վնասում է Աստծո և շրջապատողների հետ մեր փոխհարաբերություններին: Եվ այսպես, հարցն այն չէ, որ ունենանք բավականաչափ բարի գործեր, որոնք կգերազանցեն մեր չար գործերին: Դա հնազանդություն է անօդ տարածության մեջ, որը դրսևորվում է այնպես, ասես ամեն բան պտտվում է բացառապես մեր շուրջ: Եվ հակառակը, ճանաչելով Հիսուսին՝ մենք դադարում ենք նայել միայն ինքներս մեզ, այլ մեր ուշադրությունն ուղղում ենք Աստծուն նվիրաբերմանը և շրջապատողներին ծառայելուն:

Ձեր հնազանդությունը որքա՞ն հաճախ է բխում Աստծո և շրջապատողների հանդեպ սիրուց, և որքա՞ն հաճախ է այն արտացոլում լոկ պարտքի զգացումը: Մյուս կողմից, մի՞շտ է, որ պարտքի զգացումից աշխատելը վատ է: Հնարավոր է՝ դուք սեր չեք զգում որևէ մարդու հանդեպ, բայց օգնում եք նրան՝ *միայն* այն պատճառով, որ գիտեք՝ դա է ակնկալվում ձեզանից: Որևէ վատ բան կա՞ դրա մեջ:

Չորեքշաբթի ***հոկտեմբերի 30***

Օրենքով դատվողները

Կարդացե՛ք Հակոբոս 2.12,13-ը: (Տե՛ս նաև Հովհաննես 12.48, Հռոմեացիս 2.12,13, Բ Կորնթացիս 5.10, Հայտնություն 20.12,13-ը): Ի՞նչ են ասում այս համարները դատաստանի մասին: _____

_____

Չկա ոչինչ առավել հասկանալի, քան ուսմունքն այն մասին, որ մենք կդատվենք օրենքով, այսինքն՝ ելնելով նրանից, ինչ մենք արել ենք՝ բարի կամ չար: Միևնույն ժամանակ, Աստվածաշունչը հստակ կերպով հաղորդում է, որ Հիսուսի հավատի միջոցով մենք ծածկված ենք Նրա արդարությամբ:

Քրիստոսի արդարությամբ ծածկված լինելը երկու տեսանկյուն է ներառում՝ ներումը (արդարացումը) և հնազանդությունը (սրբացումը): «Ուրեմն ինչպես Հիսուս Քրիստոս Տերն ընդունեցիք՝ Նրանում գնացեք» (Կողոսացիս 2.6), և «ամենքդ, որ Քրիստոսում մկրտվեցիք, Քրիստոսին հագած եք» (Գաղատացիս 3.27):

Հաճախ ասում են. մենք կդատվենք, ելնելով ոչ միայն այն բանից, ինչ մենք արել ենք, այլ նաև ելնելով նրանից, ինչ չենք արել: Թեև դա ճիշտ է, շատերը սխալ պատկերացում ունեն այն մասին, թե այստեղ ինչ են նկատի ունենում: Այստեղ խոսքն այն մասին չէ, որ ավելին արվի: Այդ ժամանակ դա կդառնա հիասթափության և ինքնադատափետման միջոց: Ուշադրություն դարձրեք Հակոբոսի խոսքերին 13-րդ համարի առաջին մասում՝ «Անողորմ դատաստան պիտի լինի ողորմություն չանողի վրա»: Կրկին շեշտում ենք՝ սա փոխհարաբերությունների վրա հիմնված արարքների սահմանումն է:

Եթե մենք այս մասին բավականաչափ երկար ենք խորհում, ապա կարող ենք խելացնոր լինել դատաստանի ընկալման մեջ և, ի վերջո, կմատնվենք հուսահատության: Բայց դա չէ ի նկատի առնվում, երբ ասվում է. «Վախեցե՛ք Աստծուց... որովհետև Նրա դատաստանի ժամը եկավ» (Հայտնություն 14.7): Ընդհակառակը, մենք միշտ պետք է ապավինենք Հիսուսի արդարությանը, Ում արժանիքները մեր միակ հույսն են դատաստանի ժամանակ: Իր արդարությամբ փրկած Աստծո հանդեպ սերը պետք է դրդի մեզ՝ անելու այն ամենը, ինչի կոչ է անում Նա մեզ:

Միևնույն ժամանակ, դատաստանի մասին Աստվածաշնչի նախազգուշացումները տրված են մեր իսկ բարօրության համար, որպեսզի մենք մեզ չհանգստացնենք անվտանգության կեղծ զգացումով: Հակոբոսն ասում է. «Ողորմությունը պարծենում է դատաստանի դեմ» (Հակոբոս 2.13): Մենք պետք է հիշենք այս խոսքերը, եթե հատկապես գործ ունենք ամենանողկալի մեղքերի մեջ ընկած մարդկանց հետ:

Ձեր կյանքում եղե՞լ են պահեր, երբ դուք իսկապես վատ եք վարվել և ակնկալել եք միայն դատապարտում, բայց ձեր հանդեպ ողորմություն, շնորհ և ներում են դրսևորել:

Ի՞նչ եք դուք զգացել: Դուք համոզվա՞ծ եք , որ հաջորդ անգամ չեք մոռանա այդ դեպքի մասին, երբ որևէ մեկը վատ արարք գործի:

Ուրբաթ հոկտեմբերի 31

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Մեծ պայքար» գրքից կարդացե՛ք «Կյանքի գրքին դեմ հանդիման» գլուխը (479-491):

«Տերը մարդկանց և հրեշտակների առջև մեզ ընդունել է որպես Իր զավակ. ուրեմն աղոթե՛ք, որ «չհայհոյեք այն բարի անունը, որ ձեզ վրա կանչված է» (Հակոբոս 2.7): Տերը ձեզ աշխարհ է ուղարկում որպես Իր հետևորդ: Կյանքի յուրաքանչյուր արարքի մեջ դուք պետք է հայտնեք Աստծո անունը... Դուք դա կարող եք անել՝ միայն ընդունելով Քրիստոսի շնորհն ու արդարությունը» (Է. Ուայթ, Քրիստոսի լեռան քարոզը, 107):

«Քրիստոսի միջոցով արդարությանը իրավունք տրվեց ներելու՝ միևնույն ժամանակ չզոհաբերելով իր վեհագույն սրբության ոչ մի մասնիկը» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հատոր 7, 936):

Հարցեր քննարկման համար

1. Գանդին արտահայտել է շատերի կարծիքը՝ ասելով. «Ինձ դուր է գալիս ձեր Քրիստոսը, բայց ինձ դուր չեն գալիս ձեր քրիստոնյաները: Ձեր քրիստոնյաներն այնքա՜ն նման չեն ձեր Քրիստոսին»: Ինչո՞ւ, ցավոք, դժվար չէ հասկանալ, թե ինչն է նրան դրդել այդպես ասելու: Ու թեև շատ հեշտ է տեսնել, թե ինչ են անում ուրիշները Քրիստոսի անունով, ինչո՞ւ դրա փոխարեն մենք պետք է նայենք ինքներս մեզ և թե ինչ ենք արել մենք Քրիստոսի անունով: Որքանո՞վ ենք մենք լավ բացահայտում Նրան շրջապատող աշխարհին:
2. Արդյո՞ք Ձեր համայնքն այնպիսի վայր է, ուր մարդիկ զգում են, որ իրենց գնահատում և հարգում են՝ անկախ նրանց ծագումից, սոցիալական դիրքից, անհատական առանձնահատկություններից և այլն: Եթե ոչ, ապա դուք ի՞նչ կարող եք անել, որպեսզի փոխեք իրավիճակը:
3. Ձեր երկրում կա՞ն ավանդույթներ և հասարակական նորմեր, որոնք հակասում են աստվածաշնչյան հավատի սկզբունքներին: Դրանցից որո՞նք են ակներև, որո՞նք՝ առավել քողարկված: Սահ-

մանելով այդ ավանդույթներն ու նորմերը՝ խորհեցե՛ք, թե ինչպես դուք կարող եք սովորել հաղթահարել դրանք այնպես, որ ձեր կյանքը բացահայտի Ավետարանի սկզբունքները, և շրջապատողները տեսնեն, որ Հիսուսը մեզ բոլորիս լավագույն կյանք է առաջարկում:

4. Մի բան է սիրել մերձավորին, բայց ի՞նչ է նշանակում սիրել Աստծուն: Դասարանում խոսեցե՛ք այն մասին, թե ինչ է նշանակում սիրել Աստծուն, ինչու ենք մենք սիրում Նրան և ինչպես ենք արտահայտում այդ սերը:

ԴԱՍ 6 ԳՈՐԾՈՒՆ ՀԱՎԱՏԸ

Նոյեմբերի 1-7

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հակոբոս 2.14-26, Հռոմեացիս 3.27,28, Տիտոս 2.14, Բ Կորնթացիս 4.2, Հռոմեացիս 4.1-5, Հեսու 2.1-21:

Հիշելու համարը.

«Որովհետև ինչպես մարմինն առանց հոգու մեռած է, այնպես և հավատն առանց գործերի մեռած է» (Հակոբոս 2.26):

Երբ Հիսուսի աշակերտների խմբին միացավ ևս մեկ հետևորդ, առաքյալները շատ ուրախացան: Այս նոր աշակերտը պատկառազդու արտաքին ուներ, արտասովոր ընդունակություններ և մարդկանց մեջ հեղինակություն էր վայելում: Առաքյալները համարում էին, որ նա կարող է մեծ օգուտ բերել իրենց Ուսուցչի գործին, ուստի շատ զարմացան, որ Հիսուսը նրան բավականին զուսպ ընդունեց: Նրանցից ոչ ոք անգամ չէր էլ կասկածում, թե ինչով է լցված այդ մարդու սիրտը, և թե ինչ ճակատագրական դեր է նա խաղալու իրենց Տիրոջ կյանքում: Միայն Հիսուսն էր լիովին ճանաչում նրան, Նա գիտեր, որ այդ մարդը՝ Հուդա Իսկարիովտացին, շուտով մահվան է մատնելու Իրեն:

Մենք ամենքս կարող ենք ազնվաբարո, խորապես հավատացյալ քրիստոնյաներ թվալ, և միայն մեր ամենօրյա կյանքն է բացահայտում, թե իրականում մենք ունե՞նք ճշմարիտ հավատ՝ սիրով գործող հավատ:

Հիրավի, մենք փրկվում ենք հավատով, սակայն չենք կարող քրիստոնյայի կյանքում տարանջատել հավատն ու գործերը: Այս չափազանց կարևոր, բայց հաճախ սխալ ըմբռնվող ճշմարտությունը շարադրված է Հակոբոսի ուղերձում:

Մեռած հավատը

«Ի՞նչ է օգուտը, եղբայրներ, եթե մեկն ասի հավատք ունի, և գործ չունենա. մի՞թե հավատը կարող է ապրեցնել նրան» (Հակոբոս 2.14): Մենք ինչպե՞ս ենք հասկանում այս համարը՝ միայն հավատով փրկության համատեքստում: Կարդացե՛ք Հակոբոս 2.15-17-ը, համեմատե՛ք Հռոմեացիս 3.27,28, Եփեսացիս 2.8,9-ի հետ: _____

_____

_____

Հավատն առանց գործերի: Հակոբոսն այդպիսի կեղծ հավատի վառ պատկեր է առաջարկում (Հակոբոս 2.15,16): Ինչպես մենք արդեն տեսանք, հնազանդությունը Հակոբոսի թղթում կապված է փոխհարաբերությունների հետ: Եկեղեցում մենք ինչպե՞ս ենք վերաբերվում կարիքավոր եղբորը կամ քրոջը: Խոսքերը բավարար չեն: Մենք չենք կարող պարզապես ասել. «Գնացե՛ք խաղաղությամբ, տաքացեք ու կշտացեք», եթե Աստված մեզ ապահովել է միջոցներով, որպեսզի օգնենք եղբորը կամ քրոջը:

Իհարկե՛, կարիքները վերջ չունեն, և մենք չենք կարող լուծել բոլոր խնդիրները: Բայց գոյություն ունի սկզբունք, որը կոչվում է «Մեկի ուժը»: Մենք Հիսուսի ձեռքերն ու ոտքերն ենք և կարող ենք օգնել մյուսներին՝ *ամեն անգամ մեկ մարդու*: Փաստորեն հենց այս կերպ էր սովորաբար աշխատում Հիսուսը: Մարկոս 5.22-34-ում գրված է մի մարդու մասին, ում դուստրը մահամերձ էր, և նա Հիսուսից օգնություն էր աղերսում: Ճանապարհին Հիսուսի հետևից մոտեցած կինը դիպավ Նրա հագուստին: Բժշկելով Նրան՝ Հիսուսը կարող էր շարունակել իր ճանապարհը, և կինն էլ ուրախացած կհեռանար: Բայց Հիսուսը գիտեր, որ կինը միայն ֆիզիկական ապաքինման կարիք չէ, որ ունի: Այդ պատճառով Նա կանգ առավ և ժամանակ հատկացրեց նրան, որպեսզի կինը Հիսուսի վկան դառնա և սովորի տալ, և ոչ թե միայն ստանալ: Հետո Նա ասաց այն նույն խոսքերը, որ մենք գտնում ենք Հակոբոս 2.16-ում. «Գնա՛ խաղաղությամբ» (Մարկոս 5.34): Բայց ի տարբերություն Հակոբոսի բերած բառերի՝ այս դեպքում այդ խոսքերն իրական նշանակություն ունեին:

Նկատելով ինչ-որ մեկի կարիքը, սակայն ոչինչ չանելով՝ մենք բաց ենք թողնում մեր հավատը դրսևորելու հնարավորությունը: Այդ

պատճառով մեր հավատը մի փոքր թուլանում է և մի փոքր մահանում, քանի որ հավատն առանց գործերի մեռնում է: Հակոբոսն այդ մասին առավել վճռական է խոսում. հավատն արդեն մեռած է: Եթե այն կենդանի լիներ, կլինեին նաև գործերը: Եթե գործեր չկան, ի՞նչ օգուտ կա հավատից: 14-րդ համարի վերջում Հակոբոսը հարց է տալիս այդպիսի պասիվ անօգուտ հավատի մասին: Բնօրինակում այս հարցը հնչում է առավել հստակ, քան թարգմանությունների մեծ մասում. «Այդ հավատը չի կարող փրկել նրան, այնպես չէ՞»: Հակոբոսն ակնկալում է, որ մենք որոշակիորեն այդ հարցին կպատասխանենք. «Իսկապես, չի կարող»:

Ինչպե՞ս սովորենք ավելի լավ արտահայտել մեր հավատը գործերով և միևնույն ժամանակ չմտածել, որ մեր գործերը փրկում են մեզ:

Երկուշաբթի **նոյեմբերի 3**

Փրկարար հավատը

Կարդացե՛ք Հակոբոս 2.18-ը: Գլխավորապես ինչի՞ վրա է ուշադրությունը սևեռում Հակոբոսը: Մենք ինչպե՞ս ենք գործերով ցույց տալիս մեր հավատը: _____

_____

_____

Հակոբոսը սովորական հռետորական հնարք է կիրառում՝ տեքստ մտցնելով հնարավոր ընդդիմախոսին: Տվյալ դեպքում ընդդիմախոսը ջանում է սեպ խրել հավատի ու գործերի միջև՝ ենթադրելով, որ քանի դեռ մարդն ունի մեկը կամ մյուսը, ամեն բան կարգին է: Բայց գլխավոր միտքը, որ ջանում է մեզ հասցնել Հակոբոսը, այն է, որ քրիստոնյաները չեն կարող հուսալ հավատով փրկությանը, եթե դրան չեն ուղեկցում համապատասխան գործերը. «Ցո՛ւյց տուր ինձ քո հավատն *առանց* քո գործերի, և ես էլ ցույց կտամ քեզ իմ հավատն իմ *գործերից*» (համար 18):

Հիմնարար միտքն այն է, որ փրկում է ոչ թե պարզապես ցանկացած հավատ, այլ իսկական հավատը, *փրկարար* հավատը բնութագրվում է բարի գործերով: Նույն կերպ և հավատից բխող գործերը միայն *բարի* գործեր են: Հավատն ու գործերն անբաժանելի են: Ինչպես մեդալի երկու կողմերը, մեկը չի կարող գոյություն ունենալ առանց մյուսի: Նաև, մեդալի նման, մի կողմը գլխավորն է, ուղիղ կողմը, իսկ

մյուսը՝ հակառակ կողմը: Նախ գալիս է հավատը, իսկ հետո այն տանում է համապատասխան գործերի ճանապարհով:

Ուսումնասիրե՛ք գործերի վերաբերյալ Պողոսի դիրքորոշումը Եփեսացիս 2.1, Ա Թեսաղոնիկեցիս 1.3, Ա Տիմոթեոս 5.25 և Տիտոս 2.14-ում: Ինչո՞ւ են բարի գործերն այդքան կարևոր: _____

_____

_____

_____

Պողոսը բարի գործերի հակառակորդ չէր: Նա գործերի հակառակորդն էր՝ որպես փրկության միջոցի (տե՛ս Գաղատացիս 2.16): Փաստորեն Պողոսն ասել է, որ փրկության հարցում օրենքի գործերին ապավինողը անեծքի տակ է, որովհետև ովքեր ջանում են փրկվել օրենքը պահելով, իրականում հաջողություն չեն ունենա այդ հարցում (Գաղատացիս 3.10): Հնազանդությունը հնարավոր է միայն Սուրբ Հոգու պարգևի շնորհիվ:

«Իսկ եթե մարդը չի կարող որևէ բարի գործով արժանանալ փրկությանը, նշանակում է՝ այն պարգևված է բացառապես շնորհով, որն ընդունում է մարդը՝ որպես մեղավոր, քանի որ նա ընդունում է Հիսուսին և հավատում է Նրան: Սա բացարձակապես անհատույց պարգև է: Հավատով արդարացումն անվիճելի է: Եվ այս ամբողջ քննարկումը դադարում է, հենց որ պարզ է դառնում, որ ընկած մարդու արժանիքները՝ բարի գործերով երբեք չեն կարող նրա համար հավիտենական կյանք ապահովել» (Է. Ուայթ, Հավատը և գործերը, 20):

Ինչո՞ւ մեծ լուրն այն մասին, որ մենք չենք կարող մեզ համար «անցաթուղթ» վաստակել դեպի երկինք, պետք է դրդի մեզ՝ հնարավորինս շատ բարի գործեր կատարել՝մղվելով Աստծո հանդեպ սիրուց:

Երեքշաբթի **Նոյեմբերի 4**

Դևերի «հավատը»

Եթե մարդը բարի գործեր չունի, նա ունի իր հավատն ապացուցելու միայն մեկ եղանակ՝ ուղղափառությունը*: Եթե ես ճիշտ ուսմունք եմ դավանում, նշանակում է՝ ես պետք է հավատ ունենամ, այնպես չէ՞:

* *Ուղղափառությունը կրոնի մեջ ավանդական ուսմունքին աներեր հետևելն է և ցանկացած նորամուծությունները կատարելապես չընդունելը (ծան. խմբ.):*

Կարդացե՛ք Բ Կորնթացիս 4.2, Ա Տիմոթեոս 2.4, Հակոբոս 5.19,20, Ա Պետրոս 1.22 և Ա Հովհաննես 3.18,19-ը: Այս համարները մեզ ի՞նչ են ասում այն մասին, թե որքան կարևոր է այդ ճշմարտությունն իմանալը: _____

_____

_____

Անկասկած, ճշմարտության մտավոր իմացությունը շատ մեծ նշանակություն ունի: Սակայն այդ գիտելիքն ինքնին բավարար ապացույց չէ, որ մարդն ունի փրկարար հավատ:

Ի՞նչ նախազգուշացում է տրված մեզ Հակոբոս 2.19-ում՝ ճշմարիտ հավատի մասին կեղծ ըմբռնման վերաբերյալ:

_____

_____

Հին Կտակարանում հավատի ամենահիմնարար պնդումը Երկրորդ Օրինաց 6.4 համարն է. «Լսի՛ր, ո՛վ Իսրայել, մեր Տեր Աստվածը մեկ է»: Հայտնի լինելով որպես Ծեմա (որովհետև այն սկսվում է այդ եբրայերեն բառով)՝ տվյալ համարը հստակ կերպով շարադրում է միակ Աստծո հանդեպ հավատը: Ցանկացած այլ աստվածաշնչյան ուսմունք բխում է այս հիմնարար ճշմարտությունից:

Սակայն այս ճշմարտությանը հավատում են անգամ դևերը: Նրանք նույնիսկ կարիք չունեն հավատալու. նրանք *գիտեն*, որ դա այդպես է: Սակայն ի՞նչ օգուտ ունեն նրանք այդպիսի իմացությունից: Նրանք սարսափում են Աստծո ներկայությունից ճիշտ նույն կերպ, ինչպես սարսափում էին, երբ հայտնվում էին Հիսուսի առջև, և Նա հրամայում էր նրանց՝ դուրս գալ իրենց զոհերի միջից (Մարկոս 3.11, 5.7):

Մտավոր հավատը, որը չի ազդում մեր արարքների վրա, անօգուտ է: Փաստորեն դա նույն հավատն է, որ ունեն դևերը, որ ակտիվորեն աշխատում են՝ նպատակ ունենալով մեզ խաբել կեղծ ուսմունքներով և մոլորության մեջ գցել: Ինչպես Իսրայելում, Հիսուսի ժամանակներում էլ, դևերը մարդկանց դրդելու են հավատալ իրենց խաբեություններին, որոնք հիմնված են իրենց զոհերի ցանկության վրա՝ պահպանել անմաքուր, անարդար վարքը: «Եվ Հոգին հայտնի ասում է, թե վերջին ժամանակներում ոմանք հավատից կհեռանան, և մտիկ կտան մոլար ոգիների և վարդապետությունների» (Ա Տիմոթեոս 4.1):

Հավատը պետք է դրսևորվի կյանքում, այլապես դա փրկարար հավատ չէ, ընդհակառակը՝ «դևերի հավատ», այն չի փրկում մեզ այնպես, ինչպես և չի փրկում նրանց:

Աբրահամի հավատը

Կարդացե՛ք Հակոբոս 2.21-24-ը և համեմատե՛ք Հռոմեացիս 4.1-5,22-24-ի հետ: Այս համարներում ինչպե՞ս է նկարագրված Աբրահամի հավատը: Ինչի՞ վրա է հիմնված արդարացումը: _____

_____

_____

Հետաքրքիր է, որ և՛ Պողոսը, և՛ Հակոբոսը մեջբերում են Ծննդոց 15.6-ը, բայց ասես տարբեր եզրակացությունների են հանգում: Առաջին հայացքից, համաձայն Հակոբոսի, Աբրահամը արդարացվեց գործերով, բայց Պողոսն, ըստ երևույթին, Հռոմեացիս 4.2-ում ակնհայտորեն հերքում է այդ հնարավորությունը (համեմատե՛ք 24-րդ համարի հետ):

Սակայն Հռոմեացիս 4-ի անմիջական համատեքստը կապված է թլփատության հարցի հետ. այն անհրաժե՞շտ է փրկության համար, այսինքն՝ հեթանոսները պե՞տք է հրեա դառնան, որպեսզի փրկվեն (Հռոմեացիս 3.28-30): Պողոսը ցույց է տալիս, որ հենց Աբրահամի *հավատը*, և ոչ թե նրա թլփատության *գործերն* են նրա արդարացման հիմքը, որովհետև Աբրահամը հավատաց դեռևս նախքան թլփատության ծեսը կատարելը: Աբրահամը թլփատվեց ավելի ուշ, ինչը նրա ներքին հավատի արտաքին նշանը դարձավ (Հռոմեացիս 4.9-11): Բայց միայն գործերը, անգամ թլփատության, բավական չեն արդարացման համար, որովհետև «միայն մեր հայր Աբրահամի ունեցած հավատի հետքերով գնացողները» (Հռոմեացիս 4.12) կարդարանան:

Մի՞թե Պողոսի խոսքերն այդքան շատ են տարբերվում այն բանից, ինչ ասում է Հակոբոսը: Շարունակելով՝ Պողոսն օգտագործում է անգամ Աբրահամի հավատի այն նույն «ապացույցը», ինչ և Հակոբոսը (տե՛ս Հռոմեացիս 4.17-21): Աբրահամը հավատում էր, որ Աստված կարող է հարություն տալ Իսահակին, որովհետև Նա «Մեռելներին կենդանի է դարձնում և չլինող բաները լինողի պես է կանչում» (համար 17, համեմատե՛ք Եբրայեցիս 11.17-19-ի հետ):Պողոսը նաև սահմանում է փրկարար հավատը որպես լիակատար վստահություն, որ «Նա, որ խոստացել է, կարող է և անել» (Հռոմեացիս 4.21): Ամփոփելով՝ կարելի է ասել. փրկարար հավատը հենց վստահությունն է Աստծո հանդեպ, որ Նա կատարում է Իր խոստումները, և հնազանդորեն ապավինելն է

Նրա Խոսքին: Այդպիսի գործերը ոչ թե «օրենքի գործեր» են, այլ «հավատի գործեր»: Կամ, ինչպես տվյալ միտքը շարադրում է Հակոբոսը, «Տեսնո՞ւմ ես, որ *հավատը* նրա գործերի հետ միասին *գործեց*, և այն գործերով հավատը կատարյալ եղավ» (2.22):

Շատերն ընդգծում են հավատի *և* գործերի կարևորությունը, բայց անգամ դա տարանջատում է մեկը մյուսից, գոնե որոշ չափով: Ճշմարիտ հավատը «հավատն է, որ սիրով է գործում» (Գաղատացիս 5.6): Բարի գործերը պարզապես հավատի արտաքին ցուցանիշ չեն, դրանք հավատի *գործողություն* են: Աստծո հանդեպ Աբրահամի հավատը դրդեց նրան՝ հնազադվել Աստծո հրամանին՝ զոհաբերել իր միակն որդուն՝ Իսահակին: Ըստ Հակոբոսի՝ հենց հնազանդության միջոցով է հավատը հասնում կատարելության:

Ինչպիսի՞ն է ձեր անձնական փորձառությունն այն հարցում, թե ինչպես են գործերը (կամ դրանց բացակայությունը) ազդում ձեր հավատի վրա:

Հինգշաբթի **նոյեմբերի 6**

Ռախաբի հավատը

«Նույնպես էլ Ռախաբ պոռնիկը. չէ՞ որ գործերով արդարացավ, երբ որ լրտեսներին իր մոտ առավ և ուրիշ ճանապարհով արձակեց» (Հակոբոս 2.25): Կարդացե՛ք Հեսու 2.1-21-ը: Մենք ինչպե՞ս ենք հասկանում այս օրինակը՝ դարձյալ միայն հավատով արդարացման համատեքստում: _____

_____

_____

Ըստ Եբրայեցիս 11.31-ի՝ Երիքովի բնակիչները չէին հավատում ճշմարիտ Աստծուն: Ժամանակակից թարգմանությունների մեծ մասը նրանց նկարագրում են որպես «անհնազանդներ»: Երիքովի բնակիչները գիտեին մադիանացիների և ամորհացիների հանդեպ Իսրայելի հաղթանակների մասին: Աստծո դատաստանը իսրայելացիների հանդեպ, երբ նրանք հետևեցին Բահաղ-Փեգովրին, Երիքովի ժողովրդին վկայեց Նրա սրբության, ինչպես նաև՝ կռապաշտության ու այլասերման հանդեպ տածած նողկանքի մասին: «Այս բոլոր իրադարձությունները քաջ հայտնի էին Երիքովի բնակիչներին, որոնց թվում ոչ քիչ թվով այնպիսի մարդիկ կային, ովքեր կիսում էին Ռախաբի համոզմուն-

քը, թեև հրաժարվում էին հնազանդվել» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 492):

Ռախաբը փրկությունն ստացավ ոչ թե իր անազնվության համար, այլ՝ չնայած այդ անազնվությանը: Նա հավատում էր ճշմարիտ Աստծուն, և այդ հավատից դրդված՝ պաշտպանեց Նավեյան Հեսուի ուղարկած լրտեսներին: Նաև պայմաններ կային. Ռախաբը պետք է հետևեր լրտեսների ցուցումներին և կարմիր պարան կապեր լուսամուտից: Դա հիշատակում էր արյան մասին, որ քսում էին իսրայելացիների տների դրանդիներին՝ զատկի ազատագրման ժամանակ (տե՛ս Ելից 12.21-24): Հեռու լինելով կատարելությունից՝ Ռախաբի կյանքը հավատի օրինակ է, որը վկայում է Աստծո ներման իրական բնույթի և շնորհի մասին՝ յուրաքանչյուրի նկատմամբ, ով ցանկանում է անցնել հավատի ճանապարհով և Աստծուն վստահել բոլոր հետևանքները:

Կարդացե՛ք Հակոբոս 2.26-ը: Այս համարն ինչպե՞ս է ամփոփում հավատի ու գործերի միջև եղած փոխադարձ կապը:_____

_____

Ճիշտ այնպես, ինչպես կյանքի շնչից զրկված մարմինը սոսկ դիակ է, այնպես էլ հավատն է առանց գործերի մահացած: Մյուս կողմից, առանց ճշմարիտ հավատի՝ ցանկացած «հնազանդություն», որ մենք կջանանք դրսևորել, նույնպես «մեռած գործ» կլինի (Եբրայեցիս 6.1, 9.14)՝ Աստծո աչքերում՝ անիմաստ:

Հավատով փրկված պոռնի՞կ: Եթե դա հավատով արդարացման՝ մեզ թողնված միակ օրինակը լիներ, ի՞նչ սխալ եզրակացության կարող էինք հանգել մենք: Եվ, այնուամենայնիվ, ի՞նչ հույս կարող եք քաղել ձեզ համար նրա պատմությունից:

Ուրբաթ **Նոյեմբերի 7**

Հետագա ուսումնասիրության համար

«Երբ «ես»-ը լիովին վերացված է, դուք կարող եք նոր հարուստ փորձառություն ձեռք բերել: Ընկնելով խաչի ստորոտի մոտ և տեսնելով Քրիստոսի կատարելությունը՝ դուք կտեսնեք ձեր սեփական անկատարությունը, և ձեր «ես»-ը աննշան կդառնա:

Քրիստոսը ուշադիր աչքի համար ցուցադրում է հրապուրիչ գեղեցկության կատարելությունը. այդ ժամանակ Նրա կերպարը

կտպավորվի մտքի և սրտի մեջ ու կդրսևորվի բնավորության մեջ: Աստվածային մտքի կնիքը պետք է դրվի սրտի վրա և դրսևորվի կյանքում: Երբ դուք կարիքի մեջ եք, գալիս եք Հիսուսի մոտ, աղոթում եք կենդանի հավատով, ամուր բռնեք աստվածային զորության ձեռքը, հավատացե՛ք, միայն հավատացե՛ք, և դուք կտեսնեք Աստծո փրկությունը: Եթե դուք պատրաստ լինեք սովորելու, Աստված կսովորեցնի ձեզ. եթե դուք պատրաստ լինեք Նրա առաջնորդությանը, Նա ձեզ կտանի դեպի կենդանի ջրի աղբյուրները» (Է. Ուայթ, Վկայություններ Հարավային Աֆրիկայի համար, 26):

Հարցեր քննարկման համար

1. Թռուցիկ կարդացե՛ք Հակոբոս 2-ը: Ի՞նչ կարևոր լուր է բովանդակվում այս գլխում նրանց համար, ովքեր փրկության հարցում ապավինում են միայն Քրիստոսի արդարությանը:
2. Ոմանք պնդում են. Հակոբոսը խոսում է հավատի և գործերի մասին՝ առանց հղում կատարելու Պողոսին, այդ պատճառով մեզ հարկավոր է Հակոբոսի գիրքը մեկնաբանել իր իսկ եզրույթներով: Ի՞նչն է սխալ այս մոտեցման մեջ: Ինչո՞ւ (հատկապես այս դեպքում) կարևոր է հիշել, թե հավատի ու գործերի մասին ինչ են ասում այլ համարներ: Փաստորեն բողոքական բարենորոգման գագաթնակետին կաթոլիկ ջատագովները հռոմեական եկեղեցին բողոքականներից պաշտպանելիս հաճախ դիմում էին Հակոբոսի թղթին: Ելնելով սրանից՝ մտածե՛ք, թե որքանով կարևոր է ուսմունքը կառուցել աստվածաշնչյան տեքստերի վրա, որ կան ձեր տրամադրության տակ:
3. Մենք հաճախ խոսակցություններ ենք լսում հավատի ու գործերի միջև «հավասարակշռության» մասին: Անցած դասի լույսի ներքո դուք կարո՞ղ եք համաձայնել այս դիրքորոշմանը: Դասարանում քննարկե՛ք ձեր պատասխանը:
4. Ինչո՞ւ մենք Հակոբոսի թղթում (ինչպես և ողջ Նոր Կտակարանում) չենք գտնում հիշատակում այն մասին, որ Աբրահամը բավարար հավատ չի դրսևորել Իսմայելի դեպքում, կամ այն մասին, որ Ռախաբը սուտ է ասել: Այս փաստն ի՞նչ է սովորեցնում հավատացյալին՝ Քրիստոսի արդարությամբ ծածկվելու մասին:

ԴԱՍ 7

Նոյեմբերի 8-14

ԼԵԶՎԻ ՍԱՆՁԱՀԱՐՈՒՄԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հակոբոս 3.1-12, Երկրորդ Օրինաց 6.6,7, Ղուկաս 9.51-56, Առակաց 16.27, Մատթեոս 7.16-18:

Հիշելու համարը.

«Որովհետև քո խոսքից կարդարանաս, և քո խոսքից կդատապարտվես» (Մատթեոս 12.37):

Խոսքերը շատ մեծ զորությամբ են օժտված: «Մեկ հարմար ժամանակին խոսված խոսքը» (Առակաց 25.11)՝ փառաբանությունը, պոեզիան, պատմությունները, կարող են խորը ազդեցություն գործել կյանքի վրա: Մեր խոսքերը կարող են մտապահվել երկար օրեր և անգամ տարիներ: Երեխաներն, օրինակ, սպունգի նման ներծծում են բառերը: Ահա թե ինչու են նրանք արագորեն սովորում հեշտությամբ խոսել ցանկացած լեզվով, որ լսում են: Այդ նույն պատճառով այն, ինչ նրանք լսում են իրենց մասին, կարող է ազդել նրանց ապագա հաջողությունների կամ անհաջողությունների վրա: Ի բարին է սա թե ոչ, բայց երեխաները կրկնում և ավելի են զարգացնում իրենց ծնողների շփման ոճը:

Գրված խոսքը նույնպես հզոր է և անգամ ավելի հարատև: Բայց ամենամեծազորը Աստծո Խոսքն է. «Քո Խոսքը ճրագ է իմ ոտքերի համար, և լույս՝ իմ ճանապարհի համար» (Սաղմոս 119.105), «Իմ սրտում թաքցրի քո խոսքերը, որ չմեղանչեմ Քո դեմ» (Սաղմոս 119.11): Հիսուսն աշակերտների ուշադրությունը ժամանակավոր բարիքներից ուղղեց անհամեմատ ավելի կարևորին. «Այն բանը, որ Ես ձեզ հետ խոսեցի, հոգի է և կյանք է» (Հովհաննես 6.64): Խոսքերը կարող են մխիթարել և քաջալերել, կամ էլ՝ թունավորել և պղծել: Որքա՞ն հաճախ եք դուք ասել խոսքեր, որոնց համար հետագայում զղջացել եք:

Այս շաբաթ մենք կտեսնենք, թե Հակոբոսն ինչ է ասում բառերի մասին:

Պատասխանատվություն

Կարդացե՛ք Հակոբոս 3.1-ը: Պատասխանատվության մասին ի՞նչ կարևոր միտք է ընդգծում Հակոբոսը: _____

_____

_____

Եկեղեցում և քրիստոնեական դպրոցներում ուսուցիչների վրա հատուկ պատասխանատվություն է դրված, որովհետև նրանք ձևավորում են մտքերն ու սրտերը, իսկ նրանց աշխատանքի պտուղները երկար տարիներ կներգործեն: Այդ ազդեցությունը, ջրի մակերեսի շրջանակների նման, կտարածվի նաև շատ այլ մարդկանց վրա, ում հետ նրանք անձամբ չեն շփվում: Որքան ավելի շատ գիտենք մենք, այնքան ավելի պատասխանատու ենք այդ գիտելիքի օգտագործման և փոխանցման համար:

Անգլիայի Քեմբրիջ քաղաքում Թինդալի գրադարանի (Tyndale House library) մուտքի մոտ մի մակագրություն է կախված, որը յուրաքանչյուր ներս մտնող մարդու հիշեցնում է. «Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է» (Առակաց 9.10): Ամեն բանի չափորոշիչը ոչ թե մարդն է, այլ Աստված. ամեն ճշմարիտ կրթություն սկսվում է Նրանից և ավարտվում է Նրանով: Ցավոք, երբ մարդու գիտելիքը բազմապատկվում է, հաճախ փոքրանում է նրա կախվածությունն Աստծուց: Օրինակ, չափազանց հաճախ դասավանդվում և կիրառվում է այն գաղափարը, որ գիտությունը գործում է Աստծուց անկախ. աստվածաբանության որոշ ուսուցիչներ, ջանալով վստահության արժանանալ, նույնպես կարող են օգտագործել մեթոդներ, որոնք քիչ տեղ են թողնում հավատի համար կամ էլ առհասարակ բացառում են այն: Արդյունքում հավատն աստիճանաբար դուրս է մղվում մտքից և սրտից՝ ինչպես ուսուցիչների, այնպես էլ ուսանողների: Բայց եթե ուսուցիչներն ու աշակերտները առաջին տեղում դնեն կրթությունը հավերժության համար, ոչ թե պարզապես այս աշխարհի, այդ ժամանակ ուսումնական գործընթացը նրանց համար կդառնա թանկարժեք, ոգևորիչ փորձառություն:

Պողոսը նույնպես հասկանում էր այդ պատասխանատվությունը, քանի որ իր կազմակերպած եկեղեցիներում սովորեցնում և նշանակում էր ղեկավարներին (Գործք առաքելոց 14.23, համեմատե՛ք Տիտոս 1.5-ի հետ): Նա անգամ Տիմոթեոսին կոչ էր անում Աստծո հոտը պահպանել

անփորձ և անխելամիտ հովիվներից (տե՛ս Ա Տիմոթեոս 1.3-7, 3.2-6, 6.2--5, Բ Տիմոթեոս 2.14,15)՝ նախազգուշացնելով այն մարդկանց, ովքեր «ամեն ժամանակ սովորում են և երբեք դեպի ճշմարտության գիտությունը չեն կարողանում գալ» (Բ Տիմոթեոս 3.7):

Ծնողները հսկայական պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության համար, ովքեր էլ իրենց հերթին ազդում են ուրիշների վրա: Փաստորեն մենք ամենքս, լավ թե վատ, ցույց տալով այս կամ այն օրինակը, մեծ ազդեցություն ենք գործում շրջապատողների վրա:

Մտորե՛ք այն մարդկանց մասին, ովքեր լավ ազդեցություն են գործել ձեզ վրա: Ի՞նչ են արել նրանք: Ինչպե՞ս են ազդել ձեզ վրա: Եվ, որ հատկապես կարևոր է, դուք ինչպե՞ս կարող եք նույնն անել շրջապատողների համար:

Երկուշաբթի **նոյեմբերի 10**

Խոսքի ուժը

«Որովհետև շատ բաներով մեղանչում ենք ամենքս» (Հակոբոս 3.2): Ի՜նչ քաջալերիչ խոստովանություն է, հատկապես եթե ուշադրություն դարձնենք այն շեշտադրությանը, որ անում է Հակոբոսը վարքի առումով: Սակայն սեփական իրական կարիքի գիտակցումը չի թուլացնում Աստծո իդեալի հանդեպ մեր հավատը, որ երկրի վրա Նրա ներկայացուցիչներն ենք:

«Եթե մեկը խոսքով չի մեղանչում, նա կատարյալ մարդ է, որ կարող է իր ողջ մարմինը սանձահարել» (համար 2): Այստեղ հունարեն լեզվում պայմանական նախադասության ձևը ենթադրում է, որ խոսքի մեջ չմեղանչելը իսկապես հնարավոր է: Հավիզ թե կարելի է գերագնահատել խոսքերի կարևորությունը: Մտքերը տանում են խոսքերի, որոնք իրենց հերթին տանում են արարքների: Խոսքերը նաև ուժեղացնում են մեր մտքերը: Խոսքերն ազդում են ոչ միայն այն բանի վրա, ինչ մենք անում ենք, այլ նաև նրա վրա, ինչ անում են ուրիշները: Մենք միավորված ենք խոսքի միջոցով:

Այն հատվածը, որ կուսումնասիրենք այս շաբաթ, լեզվի ուժի վերաբերյալ մի քանի օրինակ է բովանդակում: Առաջին երեքը ցույց են տալիս, թե ինչպես մի փոքրիկ բան կարող է շատ գործ անել. սանձի օգնությամբ կառավարում են ձիուն, ղեկը կառավարում է նավի ընթացքը, կայծը հրդեհի է մատնում անտառը:

Խոսքի դրական ազդեցության ի՞նչ օրինակներ ենք մենք գտնում Սուրբ Գրքում: Երկրորդ Օրինաց, 6.6,7, 23.23, Սաղմոս 40.4, Առակաց 10.20,21, 12.25, Մաղաքիա 2.6,7, Ղուկաս 4.22, Հռոմեացիս 10.6-8: _____

_____

_____

_____

Փոքր երեխաները միշտ տպավորվող են, բայց, ծառերի նման, որոնք ավելի ու ավելի ամուր են դառնում և պակաս ճկուն, տարիքի հետ երեխաները ավելի ու ավելի շատ են ընդդիմանում փոփոխություններին: Որոշ իմաստով մենք ամենքս ուսուցիչներ ենք տանը կամ եկեղեցում: Քանի որ մեր խոսքերն այդքան մեծ զորություն ունեն, կարևոր է ամեն առավոտ մեր մտքերը լվանալ Աստծո խոսքով: Ի՞նչն է սնուցում մեր մտքերն ու խոսքերը՝ Աստծո Հոգի՞ն, թե՞ մեկ այլ աղբյուր: Մենք չենք կարող թերագնահատել այն հսկայական փոփոխությունները, որ կարող են տեղի ունենալ Աստծո Խոսքի օգնությամբ (Սաղմոս 33.6, համեմատե՛ք Բ Կորնթացիս 4.6-ի հետ), և ոչ մեկ այլ միջոցով:

Խոսքերն այնպիսի ներուժային զորություն ունեն, որ ընդամենը մի քանի նախադասությամբ դուք կարող եք մարդուն այնպիսի հարված հասցնել, որից նա, հնարավոր է, ուշքի չգա՝ մինչև իր կյանքի վերջը: Մյուս կողմից՝ բարի խոսքերը կարող են նրա համար նեցուկ լինել՝ նույնպես ամբողջ կյանքի ընթացքում:

Եթե ձեր ձեռքերում դինամիտ հայտնվեր, որքա՞ն զգույշ կվերաբերվեիք դրա հետ: Իսկ ինչպե՞ս է պետք վերաբերվել մի բանի հետ, ինչը անգամ ավելի մեծ ուժ ունի, քան դինամիտը:

Երեքշաբթի **նոյեմբերի 11**

Փոքրիկը վերածվում է մեծի

Կարդացե՛ք Հակոբոս 3.3-5-ը: Ի՞նչ ընդհանուր բան կա այս երկու օրինակների միջև, և դրանք ինչպե՞ս են համեմատելի լեզվի հետ: _____

_____

_____

Ե՛վ ձիու բերանում գտնվող սանձը, և՛ նավի ղեկն անհամեմատ ավելի փոքր են այն բանի համեմատությամբ, ինչը նրանք կառավա-

րում են: Սակայն բավական է ձեռքի թեթև շարժումը, որպեսզի ձին կամ նավը լիովին փոխեն իրենց շարժման ուղղությունը: «Այնպես էլ լեզուն՝ մի փոքր անդամ է, բայց մեծ-մեծ բաներ է խոսում» (համար 5): Խոսքը, անգամ պարզապես հայացքը կամ ժեստը կարող են ինչ-որ աննշան բան թվալ, սակայն դրանք ընդունակ են թշնամի դարձնել բարեկամին կամ վատ իրադրությունը լավի վերածել: «Մեղմ պատասխանը կհանգստացնի բարկությունը, բայց վիրավորիչ խոսքը բարկություն կգրգռի» (Առակաց 15.1): Պատկերացրե՛ք ձի, որ քառատրոփ սլանում է ողջ արագությամբ, կամ նավ, որ արագորեն հատում է ծովի մակերևույթը, բայց դրանք երկուսն էլ շարժվում են սխալ ուղղությամբ: Որքան արագ են նանք շարժվում, այնքան ավելի հեռու կհայտվեն նշանակման վայրից: Այդ դեպքում լավագույն լուծումը կլինի կանգնեցնելը և հնարավորինս արագ ուղղությունը փոխելը: Այդ նույնը կարելի է ասել նաև մեր խոսքերի մասին: Եթե տհաճ զրույցը է՛լ ավելի տհաճ է դառնում, ապա ինչքան արագ այն դադարեցնենք, այնքան ավելի լավ:

Կարդացե՛ք Ղուկաս 9.51-56-ը: Ինչպե՞ս պատասխանեց Հիսուսն աշակերտների առաջարկին: Ո՞րն էր արդյունքը, և ի՞նչ դասեր կարող ենք քաղել այս պատմությունից: _____

_____

_____

Թեև աշակերտներն իրենց դատողությունները հիմնավորում էին աստվածաշնչյան նախադեպով (Դ Թագավորաց 1.10,12), Հիսուսը մերժեց նրանց առաջարկը: Նրա հանդիմանությունն արմատապես փոխեց իրադրությունը: Պատմությունն ավարտվում է պարզ հաղորդմամբ այն մասին, որ նրանք «գնացին ուրիշ գյուղ» (Ղուկաս 9.56): Սամարական գյուղում տեղի ունեցած այս պատահարը Հիսուսը թանկարժեք դաս դարձրեց Իր հետևորդների համար: Ամենաթեժ պահին, երբ մենք հայտնվում ենք հույզերի հորձանուտում և ծարավի ենք մեր շահերը պաշտպանելու, մեզ հարկավոր է հիշել Հիսուսի օրինակը և, պատկերավոր ասած, գնալ «ուրիշ գյուղ»:

«Ինչպես ջրի կաթիլները գետ են կազմում, այնպես էլ փոքր բաներն ստեղծում են կյանքը: Կյանքը գետ է՝ խաղաղ, հանդարտ, կամ էլ անհանգիստ գետ է, որ միշտ տիղմ ու աղբ է բերում» (Է. Ուայթ, Որ ես ճանաչեմ Նրան, 209):

Ձեր կյանքում ի՞նչ «փոքր» բան կա, որ կարող է հետագայում մեծ դառնալ, եթե դուք շարունակեք «փայփայել»այն:

Վնասի հսկողությունը

Մեզ բոլորիս ծանոթ է այն իրադրությունը, երբ մեր ասած ինչ-որ բան ուռճացվում է՝ հասնելով այնքան մեծ չափերի, որ արդեն այլ իմաստ է ձեռք բերում: Ինչպես ասում է Հակոբոսը՝ «Տե՛ս, մի փոքր կրակը որքան բան է վառում»» (3.5):

Աղոթքով ուշադիր կարդացե՛ք Հակոբոս 3.6-ը: Ի՞նչ է ասում առաքյալը մեր խոսքերի ուժի մասին, որոնք կարող են «պղծել» մեզ: Ինչո՞ւ պետք է այս համարը մեզ ստիպի դողալ՝ որևէ բան արտաբերելուց առաջ: _____

_____

_____

Թեև կրակը՝ որպես խորհրդանիշ, հաճախ մաքրագործում է նշանակում (Եսայիա 4.4, Զաքարիա 13.9), այն ավելի հաճախ ցույց է տալիս ոչնչացում (տե՛ս, օրինակ, Հեսու 6.23, 11.9, Ա Թագավորաց 30.3, Մատթեոս 7.19), ինչպես նաև չմտածված բառերի քայքայիչ ուժը (Առակաց 16.27, 26.21):

Փոքրիկ կայծից բռնկված խոշոր կրակը իր ճանապարհին կարող է ապշեցուցիչ արագությամբ ոչնչացնել ու կործանել ամեն բան: Ճիշտ նույն կերպ խոսքերը կարող են քայքայել ընկերությունը, ամուսնությունն ու մարդու բարի համբավը: Ներթափանցելով երեխայի հոգու մեջ՝ դրանք կարող են բացասաբար անդրադառնալ նրա ինքնագնահատականի վրա և վնաս հասցնել նրա հետագա զարգացմանը:

Մեղքը ծագել է երկրի վրա, թվում է, թե մի անմեղ հարցից (տե՛ս Ծննդոց 3.1): Ճիշտ նույն կերպ էլ այն առաջ եկավ երկնքում: Արուսյակը «սկսեց կասկածանք սերմանել երկնային էակներին կառավարող օրենքների վերաբերյալ» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 37): Այդ պատճառով չափազանցություն չի լինի ասել, որ լեզուն «բորբոքված է գեհենից» (Հակոբոս 3.6):

Թեև մի անգամ ասված խոսքերը կլռեն հավիտյան, և մենք չենք կարողանա հետ բերել դրանք, սակայն պետք է անենք ամեն հնարավորը՝ վնասը փոքրացնելու և իրադրությունը հարթելու համար: Այդ նպատակով ձեռնարկված քայլերը նույնպես կօգնեն մեզ՝ չկրկնելու նույն սխալը: Օրինակ, հայտնություն ստանալով Աստծուց՝ Նաթան մարգարեն անմիջապես վերադարձավ Դավթի մոտ, որպեսզի ուղղում մտցնի իր ասած խոսքերի մեջ (տե՛ս Բ Թագավորաց 7.1-17): Պետրոսը

դառն արտասվում էր, որ ուրացել է Քրիստոսին, և ավելի ուշ բացահայտորեն ցուցադրեց իր ապաշխարության անկեղծությունը (Հովհաննես 21.15-17):

Թեև «մարդկանց լեզուն ոչ ոք չի կարող նվաճել» (Հակոբոս 3.8), մեզ նախազգուշացնում է տրված. «Պահիր քո լեզուն չարից և քո շրթունքները՝ որ նենգություն չխոսեն» (Սաղմոս 34.13): Միայն Աստծո Հոգին կարող է օգնել մեզ՝ վերահսկելու մեր խոսքերը (տե՛ս Եփեսացիս 4.29-32):

Կարդացե՛ք Հակոբոս 3.6-8-ը: Ինչո՞ւ այս համարներում շարադրված մտքերը պետք է մեզ դրդեն չափազանց զգույշ լինելու մեր խոսքերի մեջ: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել գնահատել մեր շրթունքների մեջ բովանդակվող ուժը՝ ի բարին կամ ի չարը:

Հինգշաբթի **նոյեմբերի 13**

Օրհնություն և անեծք

Կարդացե՛ք Հակոբոս 3.9-12-ը: Ի՞նչ ճշմարտություն է ներկայացնում Հակոբոսը՝ օգտագործելով աղբյուրի, թզենու և խաղողի որթի պատկերները: _____

_____

_____

Բուն միտքն այն մասին, որ քրիստոնյայի շուրթերից կարող է և՛ օրհնություն, և՛ անեծք ելնել, մեղմ ասած, անհանգստացնում է: Այդ դեպքում ի՞նչ ասել շաբաթվա ընթացքում աստվածահայհոյությամբ ներծծված հեռուստահաղորդումներ և ֆիլմեր դիտելու և շաբաթ օրը Աստծո Խոսքը լսելու նպատակով եկեղեցի այցելելու մասին: Կամ ի՞նչ կարելի է ասել այն մարդու մասին, ով ճշմարտությունն է խոսում և հիասքանչ խոսքեր ասում Հիսուսի մասին, իսկ հետո իրեն անվայել կատակներ է թույլ տալիս: Նման օրինակները նույնպես հոգևոր անհանգստություն են առաջացնում, քանի որ դրանք հակասում են այն բանին, ինչը մեզ հայտնի է որպես ճշմարտություն: *Աստծուն փառաբանող շուրթերը մեկ այլ պահի անվայել կատա՞կ են արտաբերում:* Ինչո՞ւ են անհամատեղելի այդ գործողությունները:

Հակոբոսը դիմում է աղբյուրի օրինակին: Ջրի որակը կախված է աղբյուրից, իսկ պտուղը որոշվում է արմատով (համեմատե՛ք Մատթեոս 16.18-ի հետ): Նույն կերպ, եթե մեր մեջ սերմանված է Աստ-

ծո Խոսքը, նրա գործողությունն ակնհայտ կլինի մեր կյանքում: Այս ճշմարտության ըմբռնումը մեզ ազատում է մեր հավատն «ապացուցելու» անհրաժեշտությունից: Մաքուր կրոնն իր արմատներն առնում է հավատից, որն ինքնին վկայում է, այնպես, ինչպես մաքուր ջրի աղբյուրի որակն ապացուցում է հենց դրանից բնական ճանապարհով բխող ջուրը:

Սակայն ինչ-որ մեկը կարող է ասել. «Մեզ որոշ բացասական հանգամանքներ են հայտնի Աստծո բարեպաշտ հետևորդների կյանքից, օրինակ՝ Մովսեսն սպանեց եգիպտացուն, Դավիթը մեղանչեց Բերսաբեի հետ և այլն: Սա տրամաբանորեն հարցականի տակ չի՞ դնում նրանց հավատը»:

Իհարկե՛, Աստծո կամքն այն է, որ մենք չմեղանչենք (Ա Հովհաննես 2.1): Սակայն «աշխարհի սկզբից առաջ» Աստված հոգ է տարել մեր ներման մասին՝ մեղք գործելու դեպքում: Մարդը ներում է ստանում՝ կատարյալ Զոհի հանդեպ ունեցած հավատի հիման վրա (տե՛ս Սաղմոս 31.1,2): Սակայն փաստ է մնում, որ մեղքը տրտմություն է բերում, այն դեպքում, երբ հնազանդությունը օրհնություն է բերում: Մովսեսը քառասուն տարի անցկացրեց Մադիամի երկրում՝ ոչխարներին հովվելով, որպեսզի մոռանա գիտությունը, որը նրան հասցրել էր սպանության: Իսկ Դավիթն ստիպված եղավ վերապրել Բերսաբեի ծնած երեխայի մահը, ինչպես նաև տարաձայնություններն ընտանիքում և գերդաստանում, որը մինչև նրա մահը սպառնում էր նրա թագավորությանը: Իհարկե, մեր մեղքերը կարող են ներվել. խնդիրն այն է, որ հաճախ մնում են այդ մեղքերի հետևանքները, որոնք կործանարար են ոչ միայն մեզ համար, նաև շրջապատողների: Որքա՜ն ավելի լավ է ծնկաչոք ուժ խնդրել՝ մեղքին հաղթելու համար, քան, կատարելով այն, ներում խնդրել և աղաչել Աստծուն՝ հսկողության տակ առնել մեր հասցրած վնասը:

Ուրբաթ **նոյեմբերի 14**

Հետագա ուսումնասիրության համար

Խոսքի ուժի մասին կարդացե՛ք Էլեն Ուայթի «Քրիստոսի առակները» գրքի «Տաղանդներ» գլխում (335-339): Շաբաթօրյա դպրոցի դասարանում կիսվե՛ք մտքերով, որոնք առանձնապես տպավորվել են ձեր մեջ:

«Եթե մենք հայտնվել ենք մի հասարակության մեջ, որն իրեն թույլ

է տալիս դատարկաբանել, մեր պարտքն է՝ հնարավորության դեպքում փոխել խոսակցության թեման: Աստծո շնորհի օգնությամբ՝ մենք պետք է զրույցը շրջենք օգտակար հունի մեջ՝ հանգիստ մի քանի բառ ասելով կամ մեկ այլ թեմա առաջարկելով...

Մենք պետք է անհամեմատ ավելի շատ խոսենք մեր վերապրած թանկարժեք փորձառությունների մասին: Մենք պետք է պատմենք մեր Աստծո ողորմության ու բարության, Փրկչի սիրո անչափելի խորքերի մասին: Մեր խոսքերը պետք է փառաբանության ու երախտագիտության խոսքեր լինեն: Եթե միտքն ու սիրտը լցված են Աստծո սիրով, դա անպայման կդրսևորվի նաև զրույցի ժամանակ: Մեզ համար դժվար չի լինի կիսվել այն բանով, ինչը սնուցում է մեր հոգևոր կյանքը: Վսեմ մտքերը, ազնիվ ձգտումները, ճշմարտության մասին հստակ պատկերացումները, անշահախնդիր նպատակները, բարեպաշտության ու սրբության ծարավը իրենց պտուղները կբերեն բառերի մեջ, որոնք բացահայտում են սրտի գաղտնարանները: Երբ Քրիստոսն այդ կերպ կբացվի մեր խոսքում, այն ուժ կստանա՝ Նրա համար հոգիներ ձեռք բերելու համար» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 337, 338):

Հարցեր քննարկման համար

1. Խոսքերի գործածության խնդիրը մարդկանց մեծ մասի համար այն է, որ դրանք շատ հեշտ է արտաբերել: Դրանք հաճախ դուրս են թռչում՝ նախքան մենք կհասցնենք մտածել նրանց մասին: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել լավ մտածել՝ բերաններս բացելուց առաջ:
2. Խորհեցե՛ք ձեր խոսքերի զորության մասին, թե ինչպես են դրանք ազդում անգամ ձեզ վրա: Այսպիսի մի փորձ կատարեք. մյուսներին հնարավորինս ավելի շատ ասացեք այն մասին, թե ինչ է կատարել Աստված ձեր կյանքում, թե ինչպես է Նա ձեզ օրհնում, թե ինչպես է օգնում անցնելու փորձությունների միջով և այլն: Դա արեք գոնե մեկ օրվա ընթացքում, իսկ հետո հարցրե՛ք ինքներդ ձեզ. ինչպե՞ս է դա անդրադարձել իմ հավատի վրա:
3. Ի՞նչ եք կարծում, որքանո՞վ են ձեր խոսքերը շրջապատողների համար բացահայտում այն, ինչ տեղի է ունենում ձեր սրտում: Հնարավոր է՝ դրանք բացահայտում են ավելին, քան դուք կցանկանայիք: Եթե դուք գրի առնեիք մեկ օրվա ընթացքում արտաբերած ձեր բոլոր բառերը, իսկ հետո ինքներդ լսեիք դրանք, ի՞նչ կիմանայիք ձեր մասին:

ԴԱՍ 8

Նոյեմբերի 15-21

ԵՐԿՆԱՅԻՆ ԻՄԱՍՏՆՈՒԹՅԱՆ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Յակոբոս 3.13-4.10, Երկրորդ Օրինաց 4.6, Գաղատացիս 5.17, Երեմիա 3.6-10,20, Գործք առաքելոց 19.13-16, Սաղմոս 24.3-6-ը:

Հիշելու համարը.

«Խոնարհվեցե՛ք Տիրոջ առջև, և Նա կբարձրացնի ձեզ» (Յակոբոս 4.10):

Շատ խոշոր ու միջին ընկերություններում հաճախ ի հայտ է գալիս «միջին օղակի կառավարչի հոգեբանություն»: Դա տեղի է ունենում, երբ աշխատողներն սկսում են զգալ, որ ինչ-որ ավել բանի իրավունք ունեն՝ ավելի շատ հարգանքի, առավել բարձր աշխատավարձի, առավել բարձր դիրքի և այլն: Այդպիսի անառողջ դիրքորոշումը զարգանում է ժամանակի ընթացքում, մարդու առաջընթացին զուգահեռ: Ախտանշանները կարող են լինել շողոքորթ արտահայտությունները որոշումներ ընդունող մարդկանց հասցեին, և բացարձակապես կոպիտ խոսքերը՝ գործընկերների հասցեին: Այդ ամենը համեմված է եսասիրական մրցակցության հոգով: Երբ հեռուստանորությունների մի հաղորդավար առաջընթաց ունեցավ՝ առանց վնասելու մյուսներին, աշխատակիցներից մեկը հիացած նշեց. «Ամեն ինչ լավ վերջացավ՝ առանց դիակների»:

Շատ եմ ցանկանում հավատալ, որ եսասիրական մրցակցությունը տեղ է գտել միայն աշխարհիկ կազմակերպություններում, իսկ եկեղեցին գործում է բացարձակապես այլ կերպ: Բայց, ցավոք, Սուրբ Գիրքը վկայում է, որ հաճախ երկրային «իմաստությունը» տեղ է գտնում նաև հավատացյալ մարդկանց շրջանում:

Իմաստության հեզություն

«Ո՞վ է ձեզանում իմաստուն և խելացի. թո՛ղ իր բարի վարքով ցույց տա իր գործերը իմաստության հեզությունով» (Հակոբոս 3.13): Ի՞նչ է նշանակում «իմաստության հեզություն»: _____

_____

_____

_____

Որոշ մեկնիչներ ենթադրում են, որ Հակոբոսի թղթի ողջ երրորդ գլուխը խոսում է այն մասին, թե ինչ հատկանիշներ պետք է (կամ չպետք է) ունենան ուսուցիչները: Բնականաբար, «իմաստուններն ու խելացիները» ուսուցչի լավ թեկնածուներ են թվում, բայց իրականում թեման մի փոքր ավելի լայն է, այն ներառում է ողջ համայնքը: Իմաստությունը, որ նկարագրում է Հակոբոսը այստեղ և ողջ Թղթում, մտավոր համակողմանի զարգացումը չէ, որ այնքան բարձր էին գնահատում հին հույները և ներկայիս արևմտյան շատ երկրներ: Այստեղ իմաստությունը դիտարկվում է ավելի շուտ մարդու վարքի և կենսակերպի համատեքստում, ինչը բխում է հունարեն *անաստրոֆե* բառից, որ թարգմանված է «վարք» (տե՛ս նաև Ա Տիմոթեոս 4.12, Եբրայեցիս 13.7, Ա Պետրոս 1.15, 2.12): Մեր արարքները, մեր վարքը վկայում են, թե որքանով ենք մենք իմաստուն: Հենց դա էր սովորեցնում Հիսուսը՝ ասելով. «Իմաստությունն արդարացավ իր որդիներից» (Մատթեոս 11.19):

Հետաքրքիր է նշել, որ «իմաստուն և խելացի» թարգմանված արտահայտությունը հանդիպում է Երկրորդ Օրինաց 4.6-ում: Տվյալ համարում Մովսեսն իսրայելացիներին կոչ է անում՝ պահել Աստծո պատվիրած բոլոր օրենքները. «Հիմա պահեցե՛ք և արե՛ք, որովհետև նա է ձեր իմաստությունը և հանճարը ազգերի առջև, որոնք այս բոլոր կանոնները լսելով պիտի ասեն. Հիրավի այս մեծ ազգը մի իմաստուն և հանճարեղ ժողովուրդ է» (Երկրորդ Օրինաց 4.6):

Ի տարբերություն սրա՝ «դառը» ջրի աղբյուրը, որի մասին հիշատակվում է Հակոբոս 3.11-ում, եկեղեցում առաջ է բերում «դառը նախանձ և հակառակություն» (համար 14): Վերջին բառը թարգմանված է հունարեն *էրիթեա*-ից, որը ցույց է տալիս «սեփական շահերի բացառիկ պաշտպանություն, (Ceslas Spicq, Theological Lexicon of the New

Testament (Hendrickson Publishers), vol. 2, 70): Նման դիրքորոշումն ավելի շուտ հիշեցնում է սատանայի վարքը երկնքում, քան երկրի վրա քրիստոնյաների վարքը: Եթե մենք գիտակցված ընտրություն չկատարենք՝ մեռնել սեփական «ես»-ի համար և սեփական կամքը ենթարկել Տիրոջը, կարող ենք հայտնվել հենց այնպիսի դիրք զբաղեցնելու վտանգի մեջ, որի մասին զգուշացնում է Հակոբոսը:

Խորհեցե՛ք «իմաստության հեզություն» արտահայտության մասին: Ձեր կողմից հենց հիմա այդ իմաստության դրսևորումը ո՞ր դեպքերում կարող է չափազանց օգտակար լինել:

Երկուշաբթի **նոյեմբերի 17**

Իմաստության երկու տեսակ

Կարդացե՛ք Հակոբոս 3.15,16-ը: Այստեղ ինչպե՞ս է նկարագրված աշխարհային իմաստությունը: Ինչպե՞ս է ամենից հաճախ այդ «իմաստությունը» դրսևորվում աշխարհում կամ անգամ եկեղեցում: _____

_____

_____

Մեր բնական իմաստությունը «երկրավոր է, շնչավոր, դիվական»: Այն զուրկ է Հոգուց: Եվ դա չպետք է զարմացնի մեզ: Վաղուց, շատ վաղուց Սողոմոնն ասել է. «Կա ճանապարհ, որ ուղիղ է մարդու առաջ, բայց նրա վերջը մահվան ճանապարհներ են» (Առակաց 14.12, 16.25): Երկրային իմաստությունն ի սկզբանե ապակառուցողական է: Եթե փայփայվում և դրսևորվում են նախանձն ու եսասիրական հավակնությունները, բնական արդյունքը կլինի անկարգությունն ու տարաձայնությունները, ինչպես տեղի էր ունենում Կորնթոսում (տե՛ս Բ Կորնթացիս 12.20, որտեղ օգտագործվում են մի քանի նույնատիպ բառեր):

Կարդացե՛ք Հակոբոս 3.17,18, Հովհաննես 3.3-7, Կողոսացիս 3.1,2-ը: Այս տեքստերը մեզ ի՞նչ են ասում երկնային իմաստության մասին: _____

_____

_____

Թեև ուղերձում հեղինակը չի խոսում ուղղակիորեն Սուրբ Հոգու մասին, միևնույնն է, այնտեղ առկա է նոր ծնունդի գաղափարը: Ըստ երևույթին, առաքյալը գերադասում է ցանքի և պտուղներ բերելու մասին

փոխաբերությունը, որը, հնարավոր է, հիմնված է մարդկային սրտերում խոսքը «ցանելու» մասին Հիսուսի առակների վրա, երբ նրանք լսում են ավետարանի լուրը (տե՛ս Մատթեոս 13.3-9,18-23): Վերևից իջնող իմաստությունը «լի է ողորմությամբ և բարի պտուղներով» (Հակոբոս 3.17): Թեև, ինչպես մենք տեսել ենք, Հակոբոսն ընդգծում է հնազանդությունն ու բարի գործերը՝ որպես հավատի պտուղ, «ողորմությունը պարծենում է դատաստանի վրա» (Հակոբոս 2.13): Այլ խոսքերով՝ իսկապես իմաստուն մարդը ոչ միայն խոնարհ ու հնազանդ է, ինչպես Հիսուսը, այլ նաև՝ խաղաղասեր, ունկնդրող, ողորմած, ներող, նա չի ցանկանում նկատել ուրիշների թերությունները, քննադատել և դատապարտել նրանց:

Բավականին հեշտ է շեղվել դեպի այս աշխարհի ճանապարհները, այնպես չէ՞: Ստուգե՛ք ինքներդ ձեզ. որքանո՞վ է աշխարհային իմաստությունը, ի հակադրություն երկնային իմաստության, ազդում ձեր կենսակերպի վրա:

Երեքշաբթի **Նոյեմբերի 18**

Հակամարտության և վեճերի պատճառը

«Որտեղի՞ց են պատերազմներ և կռիվներ ձեր մեջ. չէ՞ որ այստեղից է, այսինքն՝ ցանկություններից, որ պատերազմում են ձեր մարմնի անդամների մեջ» (Հակոբոս 4.1, համեմատե՛ք Գաղատացիս 5.17-ի հետ): Ի՞նչ ներքին հակամարտություն է նկարագրված այս համարներում: _____

_____

_____

_____

Հակոբոս 4-ի առաջին համարները նկարագրում են ներքին ուժեղ հակամարտություններից ծվատվող հավատավորներին: Եկեղեցու ներքին տարաձայնությունները ներքին պատճառ ունեն՝ ցանկությունները (այս հունարեն բառից է ծագում մեր «գեդոնիզմ» բառը՝ ձգտում վայելքներին): Մեղսավոր ցանկությունները, որոնք Պողոսը փոխաբերաբար անվանում է «մարմին», ակտիվ պայքար են մղում մեր վսեմ, հոգևոր ձգտումների դեմ: Քրիստոնեական կյանքը երկարատև պայքար է, և եթե այդ պայքարը չի կառավարվում «վերին իմաստությամբ» (Հակոբոս 3.17), այն ներխուժում է հենց եկեղեցի և հոգևոր վնաս է հասցնում հավատավորներին:

Կարդացե՛ք Հակոբոս 4.2,3-ը: Ի՞նչ մեղսավոր ցանկություններ են այստեղ հիշատակված, և ինչպե՞ս են դրանք ազդում եկեղեցու վրա: _____

_____

_____

_____

Այս համարներում ուղղակի հղումներ կան Տասը պատվիրաններին. «ցանկանում եք և չունեք, սպանում և նախանձում եք, և չեք կարողանում հասնել» (Հակոբոս 4.2): Նախանձի, կրքոտ ցանկությունների և կռվարարության կրկնվող հիշատակումները (համեմատե՛ք Հակոբոս 3.14,16-ի հետ) արտացոլում են այն տեսլականը, որ Հիսուսն արտահայտեց Լեռան քարոզում՝ ուշադրություն դարձնելով ներքին դրդապատճառներին, և ոչ թե միայն տեսանելի արարքներին: Այդ պատճառով սպանության մասին հիշատակումը, հավանաբար, նկատի ունի այս առավել լայն իմաստը և ենթադրում է ցասում: Հազիվ թե առաջին համայնքներում կային եկեղեցու անդամներ, ովքեր սպանում էին միմյանց: Մյուս կողմից, ինչպես մեզ հայտնի է Գործք առաքելոց գրքից, լինում էին ժամանակներ (հատկապես՝ Երուսաղեմում, որտեղ իր ծառայությունն իրականացնում էր Հակոբոսը), երբ մատնությունը կարող էր հանգեցնել եկեղեցու անդամների ձերբակալության և մահապատժի:

«Անհանգստության պատճառը եսասիրությունն է: Եթե մենք ծնված ենք ի վերուստ, ապա կմտածենք այնպես, ինչպես Հիսուսը, Ով խոնարհեցրեց Իրեն, որպեսզի փրկի մեզ: Այդ ժամանակ մենք մեզ համար առավել պատվաբեր տեղ չենք որոնի: Մենք կցանկանանք նստել Հիսուսի ոտքերի մոտ և սովորել Նրանից» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 330,331):

Չորեքշաբթի **նոյեմբերի 19**

Ընկերություն աշխարհի հետ

Կարդացե՛ք Հակոբոս 4.2-4-ը: Ինչո՞ւ է Հակոբոսն իր ընթերցողներից ոմանց համարում «շնացողներ»: Տե՛ս նաև Երեմիա 3.6-10,20, Երեմիա 2.2, Ղուկաս 16.13-ը: _____

_____

_____

_____

Իսրայելի՝ որպես Աստծո հարսնացուի աստվածաշնչյան հայեցակարգն ակնարկելով՝ Հակոբոսը աշխարհիկ սովորույթներին հետևող և աշխարհիկ տեսակետների ազդեցությանը ենթարկվող հավատացյալներին նմանեցնում է շնացողների: Նրանք իրենց համար մեկ այլ տեր և իշխան են ընտրել:

Հաջորդ համարը՝ Հակոբոս 4.5-ը, հեշտ չէ հասկանալ: Ոմանք այդ համարն անվանում են ամենաբարդը Աստվածաշնչում: Թարգմանությունների մեծ մասում արտացոլված է հունարեն տեքստի բազմանշանակությունը: Ոմանք համարում են, որ այստեղ հիշատակված «հոգին» Սուրբ Հոգին է (Նախանձով փափագում է հոգին, որ բնակված է մեզանում», «Նախանձով փափագում է հոգին, որ բնակված է մեզանում», «նա նախաձախնդրորեն ծարավ է Հոգուն» *NASB95*): Ուրիշները համարում են, որ այստեղ խոսվում է մարդկային հոգու մասին («Աստված նախանձախնդրորեն ծարավ է հոգուն, որ ստեղծել է մեր մեջ կենալու համար *NRSV*, «Նա նախանձախնդրորեն ծարավ է հոգուն, որին դրդել է ապրելու մեր մեջ» *NIV*, «Նա նախանձախնդրորեն ծարավ է այն հոգուն, որին դրդել է բնակվել մեր մեջ»): Այստեղ բերված վերջին թարգմանությունը լավագույն ձևով է համապատասխանում քերականությանն ու համատեքստին, բայց համարի իմաստը, միևնույնն է, ամբողջապես պարզ չէ: Հիմնվելով համարի շարահյուսության մանրակրկիտ հետազոտության և անմիջական համատեքստի վրա՝ 5 և 6-րդ համարները կարելի էր թարգմանել այսպես. «Թե՞ դուք կարծում եք, որ Սուրբ Գիրքն իզուր է խոսում նախանձի դեմ: Հոգին, որին Նա դրդել է բնակվել մեզանում, տառապում է, բայց Նա ավելի շատ շնորհ է տալիս: Այդ պատճառով Նա ասում է. Աստված դեմ է կենում հպարտներին, իսկ խոնարհներին տալիս է շնորհը» (Հակոբոս 4.5,6՝ թարգ. հեղինակի):

Ինչպես հետևում է 1-4 համարներից, մարդկային հոգին (կամ սիրտը) լի է ցանկություններով, որոնք, ի սկզբանե կամ ինքնին չար չլինելով, մեղքի կողմից ուղղորդվել են դեպի արատավոր ուղիներ: Շնորհը միակ իրական լուծումն է մեր վիճակում: Սակայն հպարտությունը թույլ չի տալիս այդքան հեշտորեն ընդունել այդ շնորհը: Ինչ-որ մեկը գրել է, որ մենք շնորհն ստանում ենք մուրացկանների նման, որը անագե բաժակը մեկնում է դեպի ջրվեժը: Միայն խոնարհ, հեզ, իր ակնհայտ կարիքն ու կախումը գիտակցող մարդն է բաց շնորհը՝ չարժանացած ողորմությունն ստանալու համար, որ պարգևվում է բացարձակապես անարժան մարդկանց: Ինչպես գրել է Էլեն Ուայթը.

«Մեր մեծ կարիքը՝ Աստծո ողորմությանը մեր միակ հավակնությունն է» (Դարերի փափագը, 317):

Նայե՛ք ինքներդ ձեզ: Ի՞նչն է ձեզ փրկության արժանի դարձնում: Ձեր պատասխանն ինչպե՞ս է օգնում ձեզ՝ գիտակցելու շնորհի ձեր մեծ կարիքը: Ինչպե՞ս է խաչը, և միայն խաչը պատասխանում այդ կարիքին:

Հինգշաբթի **նոյեմբերի 20**

Հնազանդությունն Աստծուն

«Արդ հնազանդեցե՛ք Աստծուն, հակառա՛կ կացեք սատանային, և նա կփախչի ձեզանից» (Հակոբոս 4.7): Ուշադրությո՛ւն դարձրեք տվյալ հրահանգների հերթականությանը: Եթե մենք ջանում ենք սատանային ընդդիմանալ մեր սեփական ուժերով, ինչպիսի՞ն է հաջողության մեր հնարավորությունը: Երբ յոթ հրեա երդմնեցուցիչները փորձեցին դևերին վռնդել դիվահար մարդուց՝ Հիսուսի և Պողոսի անուններն օգտագործելով որպես ինչ-որ մոգական բանաձև, դիվահարը հաղթեց նրանց, և նրանք դուրս փախան մերկ ու ծեծված (Գործք առաքելոց 19.13-16): Այսպիսով, սատանային դիմադրելու համար մեզ հարկավոր է հնազանդվել Աստծուն և Նրա կամքին: Փաստորեն հենց այդ կերպ ենք մենք ընդդիմանում սատանային:

Միևնույն ժամանակ մենք չպետք է մտածենք, որ Հակոբոսի թղթի առաջին ընթերցողները նախկինում երբեք չէին հնազանդվել Աստծուն: Հակոբոսն, անկասկած, գրում է հավատավոր մարդկանց: Այդ պատճառով հարկավոր է մտորել ամեն օր Աստծուն հնազանդվելու և *ամեն անգամ* սատանային դիմակայելու մասին, երբ նա գայթակղում է մեզ:

Կարդացե՛ք Հակոբոս 4.8-10-ը: Ի՞նչ հրահանգներ է տալիս Հակոբոսը, և ինչպե՞ս են դրանք փոխկապակցված: Դրանք ինչպե՞ս են կապված Աստծուն հնազանդվելու հետ: _____

_____

_____

_____

Այս համարներում հնչած ուղղվելու կոչը գագաթնակետն է այն ամենի, ինչի մասին խոսում էր հեղինակը՝ սկսած Հակոբոս 3.13-ից: Այս շաբաթ մեր ուսումնասիրած հատվածում ցույց է տրված հակադրու-

թյունը երկնային իմաստության և դիվական իմաստության, ինչպես նաև հպարտ մարդկանց, ովքեր իրենց մեծարում են՝ սատանայի նման (տե՛ս Եսայիա 14.12-14-ը) և հեզ մարդկանց միջև, ովքեր հնազանդվում են Աստծուն և խոնարհվում: Այստեղ նաև մեղադրանք է հնչում՝ Աստծո հետ կնքված ուխտին անհավատարիմ լինելու հետ կապված (Հակոբոս 4.4), և կրկնվում է մեղադրանքը՝ կապված երկերեսանիության հետ (Հակոբոս 4.8, համեմատե՛ք 1.8-ի հետ): Այդ պատճառով Աստծուն հնազանդվելու կոչը դուրս է գալիս բարոյապես տեղեկացնելու սահմաններից. դա ապաշխարելու կոչ է՝ մեղավորներին, նույն կոչն էր անում նաև Քրիստոսը (Ղուկաս 5.32):

Ինչպե՞ս կարող է մարդն ապաշխարել: Դրա համար Հակոբոսն առաջարկում է հաջորդական քայլեր (հիմնված Սաղմոս 24.3-6-ի վրա). (1) մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ, (2) մաքրեցե՛ք ձեռքերը և ուղղեցե՛ք սրտերը (այսինքն՝ արարքներն ու մտքերը), (3) զղջացե՛ք, լացեք ու տրտմե՛ք ձեր թերությունների համար՝ գիտակցելով Աստծո շնորհի ձեր մեծագույն կարիքը:

«Խոնարհվեցե՛ք Տիրոջ առջև, և Նա կբարձրացնի ձեզ» (Հակոբոս 4.10): Ի՞նչ է նշանակում սա: Մենք ինչպե՞ս ենք խոնարհություն սովորում: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել դրսևորել նույնպիսի խոնարհություն, ինչպիսին ցուցաբերեց Հիսուսը:

Ուրբաթ **նոյեմբերի 21**

Հետագա ուսումնասիրության համար

«Շատ մարդիկ, ձգտելով հասնել աշխարհային չափանիշներին, հառաչում են հոգսերի բեռան տակ: Նրանք ընտրել են ծառայությունը աշխարհին, իրենց վրա են վերցրել նրա դժվարությունները, ընդունել են նրա սովորույթները: Այդ պատճառով նրանց բնավորությունը փչացած է, և կյանքը բեռ է նրանց համար: Իրենց հավակնություններն ու աշխարհային ցանկությունները բավարարելու համար մարդիկ խղճի դեմ են գնում և իրենց վրա մեղքի լրացուցիչ բեռ են վերցնում: Մշտական անհանգստությունը հյուծում է կենսական ուժերը: Մեր Տերը ցանկանում է, որ նրանք իրենցից դեն նետեն ստրկության լուծը... Նա հրամայում է նաև փնտրել Աստծո արքայությունն ու Նրա արդարությունը և խոստանում է, որ այս կյանքի համար ամեն անհրաժեշտը կմիացվի դրան» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 330):

Հարցեր քննարկման համար

1. Մտորեցե՛ք իմաստության երկու տեսակների մասին, որոնց մասին խոսվել է երկուշաբթի օրվա դասում, և գրի՛ առեք ձեր եզրահանգումները: Այժմ մտաբերե՛ք, թե ինչ կարևոր որոշումներ եք ընդունել կամ կարևոր գործողություններ եք կատարել այս շաբաթ: Ի՞նչ իմաստությամբ եք դուք ղեկավարվել:
2. Ինչպես ուսումնասիրեցինք միաշաբթի օրը, Աստված խոստացել էր Իսրայելին, որ Իր օրենքներին հնազանդվելու արդյունքում շրջակա ժողովուրդները կհիանան նրանցով՝ որպես իմաստուն և խելացի մարդիկ: Բայց դա հպարտության չհասցրե՞ց իսրայելացիներին: Իհարկե՛, դա հակասում է երկնային իմաստությանը, որը տանում է դեպի խոնարհություն: Ի՞նչ տեղի ունեցավ նրանց հետ, և մենք ինչպե՞ս կարող ենք սովորել խուսափել նրանց սխալներից: Ինչպե՞ս կարող էր սրբարանի ծառայության ճիշտ ըմբռնումը նրանց համար դառնալ լավագույն պաշտպանությունը՝ հպարտության դեմ: Ինչո՞ւ պետք է Գողգոթայի խաչը հուսալի պաշտպանություն ծառայի մեզ համար՝ հպարտության դեմ:
3. Եվս մեկ անգամ կարդացե՛ք վերը բերված մեջբերումը՝ Էլեն Ուայթից: Ե՞ւ աշխարհային չափանիշներ են ցանկալի մեզ համար: Կարելի՞ է ասել, որ այդ չափանիշները միշտ սխալ են: Մենք հաճախ կարդում ենք մարդկանց մասին, ովքեր, ըստ աշխարհային չափանիշների, ամեն բան ունեն, սակայն միևնույն ժամանակ նրանց կյանքը կործանվում է: Դա ի՞նչ պետք է ասի մեզ շատ բաների խաբուսիկության մասին, որոնք մեզ առաջարկում է աշխարհը: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել ընդդիմանալ աշխարհիկ գայթակղություններին և օգնել մեր երիտասարդությանը (որը հաճախ հեշտորեն գայթակղվում է աշխարհի կեղծ խոստումներով)՝ չընկնել այդ ծուղակը:
4. Խորհեցե՛ք խոնարհության մասին: Ինչո՞ւ է այն այդքան կարևոր քրիստոնյայի կյանքում: Ինչո՞ւ է հպարտությունը մահացու յուրաքանչյուր մարդու հոգու համար, ով ցանկանում է հետևել Հիսուսին:

ԴԱՍ 9

Նոյեմբերի 22-28

ՄԵԿ ՕՐԵՆՍԴԻՐ ՈՒ ԴԱՏԱՎՈՐ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Յակոբոս 4.11-17, Գործք առաքելոց 17.11, Եբրայեցիս 4.15,16, Ղուկաս 12.13-21, Ժողովող 2.15-19, Տիտոս 2.14:

Հիշելու համարը.

«Մեկն է օրենսդիրը և դատավորը, որ կարող է փրկել և կորցնել. դու ո՞վ ես, որ ուրիշին դատում ես» (Յակոբոս 4.12):

Աստծո օրենքի կամ մարդկային օրենքի հանդեպ մեր վերաբերմունքն ազդում է շրջապատողների և անգամ Իր՝ Աստծո հանդեպ մեր վերաբերմունքի վրա: Դուք նկատե՞լ եք, որ երբեմն հարուստներն ու նշանավորները իրենց պահում են այնպես, ասես վեր են օրենքից: Անգամ որոշ մարդիկ, ովքեր մասնակցել են օրենքները ստեղծելուն կամ հետևում են դրանց կատարմանը, կարող են այդ օրենքները հնարավորինս կազմել՝ համապատասխան իրենց անձնական շահի: Իսկ հասարակական օրենքների հանդեպ ոչ հարգալից վերաբերմունքը կարող է անհարգալից վերաբերմունքի պատճառ դառնալ մարդկանց հանդեպ, քանի որ օրենքները կարգավորում են միմյանց հանդեպ մեր հարաբերությունները:

Միևնույն ժամանակ օրենքին խստապահանջ ու ոչ ճկուն վերաբերվող մարդիկ կարող են բարդություններ ունենալ անձնական փոխհարաբերություններում նույնպես: Առավել խորը մակարդակում օրենքի հանդեպ մեր տեսակետը կախված է օրենսդիրների իմաստության և նրանց օրենքների ազնվության հանդեպ մեր հարգանքի աստիճանից:

Այս շաբաթվա դասն սկսվում է օրենքի համառոտ ուսումնասիրությունից: Հետո մենք կխոսենք ամբարտավանության և անկախության դրսևորումների մասին. համաձայն Յակոբոսի նախազգուշացման՝ դրանք մեղք են, Աստծո օրենքի խախտում: Փաստորեն Յակոբոսի թղթում մեղքի հանդեպ վերաբերմունքը մեզ ներկայացված է մի փոքր այլ տեսանկյունից:

Դատապարտո՞ւմ, թե՞ խորաթափանցություն

«Իրար մի՛ բամբասեք, եղբայրնե՛ր. իր եղբորը բամբասողը կամ իր եղբորը դատողը օրենքն է բամբասում և օրենքն է դատում. արդ՝ եթե օրենքը դատում ես, էլ օրենքի կատարող չես, այլ՝ դատավոր» (Հակոբոս 4.11): Ծրջապատողներին դատապարտելն ինչո՞ւ է հավասարեցվում օրենքը դատապարտելուն: _____

_____

_____

_____

11-րդ համարի առաջին դարձվածքը թարգմանվում է «դեմ խոսել» և կարող է խոսքի հետ կապված մի քանի մեղք ներառել, այնպիսիք, ինչպիսիք բամբասանքը, սուտ վկայությունն ու չարախոսությունը (տե՛ս Ղևտացոց 19.15-18-ը): Թեև Հակոբոսն այստեղ խոսում է ավելի մեղմ, քան երրորդ գլխում, սակայն եղբոր կամ քրոջ դեմ խոսքային հարձակումները շատ ավելի լուրջ են թվում, քանի որ այդ հարձակումները կասկածի տակ են դնում բուն օրենքը: Զբաղեցնելով դատավորի տեղը՝ մենք դրանով իսկ անտեսում ենք մեր թուլությունները (տե՛ս Մատթեոս 7.1-3-ը) և կենտրոնանում ենք մեկ այլ մարդու մեղքերի վրա, ինչպես, եթե ինքներս օրենքից վեր կանգնած լինեինք: Այդպիսի մոտեցումը նույնպես հնարավորություն չի տալիս մերձավորին սիրելու սեփական անձիդ պես (Ղևտացոց 19.18): Այդպիսով, մենք չենք պահում օրենքը:

Միևնույն ժամանակ, թեև մենք չպետք է դատենք ուրիշներին, մենք պետք է հոգևոր խորաթափանցություն սովորենք:

Բերված համարների հիման վրա որոշե՛ք այն ոլորտները, որտեղ անհրաժեշտ է դիմել հոգևոր խորաթափանցությանը. Գործք առաքելոց 17.11, Ա Կորնթացիս 6.1-5, Բ Կորնթացիս 13.5, Փիլիպեցիս 1.9, Ա Հովհաննես 4.1, Գաղատացիս 6.1: _____

_____

_____

_____

Մենք պետք է Աստծո Խոսքի հետ համեմատենք այն, ինչ սովորեցնում և քարոզում են մարդիկ: Մենք պետք է նաև հնարավորու-

թյան սահմաններում եկեղեցու անդամներին դրդենք՝ կարգավորելու միմյանց հետ ունեցած տարաձայնությունները՝ առանց դատարան դիմելու, որտեղ դատավորները չեն կարող ղեկավարվել Աստծո Խոսքով: Ամենագլխավորը՝ մենք պետք է քննենք ինքներս մեզ, ձգտենք առողջ փոխհարաբերությունների՝ վերլուծելով, թե այն, ինչի վրա մենք կանգ ենք առնում, վսեմացնո՞ւմ, բարելավո՞ւմ է մեզ, թե վնաս է հասցնում մեր քրիստոնեական փորձառությանը:

Այնքա՜ն հեշտ է քննադատել ուրիշներին, հատկապես՝ երբ նրանք անում են այն, ինչ մեզ դուր չի գալիս: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել հասկանալ, թե մենք չե՞նք հատել հոգևոր ճանաչողությունը և ուրիշներին դատապարտելը տարանջատող գիծը:

Երկուշաբթի **նոյեմբերի 24**

Օրենդիրը Դատավոր է

Հին Կտակարանի բոլոր օրենքները բխում են Հիսուսից: Երբեմն դրանք անվանում են Մովսեսի օրենքներ, քանի որ տրվել էին նրա միջոցով (Բ Մնացորդաց 33.8, Նեեմիա 10.29), բայց հենց Հիսուսը իսրայելացիներին անցկացրեց անապատով և Սինա լեռան վրա տվեց Տասը պատվիրանները (տե՛ս Ա Կորնթացիս 10.1-4,9): Լեռան քարոզում Հիսուսը լուսաբանեց և ընդլայնեց օրենքը: Նա է Բանը, որ «մարմին եղավ» (Հովհաննես 1.14), և մենք կդատվենք հենց Նրա Խոսքով (Հովհաննես 12.48):

«Մեկն է օրենսդիրը և դատավորը, որ կարող է փրկել և կորցնել. դու ո՞վ ես, որ ուրիշին դատում ես» (Հակոբոս 4.12): Հետևյալ տեքստերն ի՞նչ են ասում Հիսուսի՝ որպես մեր Դատավորի մասին: Եսայիա 33.22, 11.1-5, Եբրայեցիս 4.15,16, Հայտնություն 19.11-16: _____

_____

_____

_____

_____

Միայն նա, ով շատ լավ տեղյակ է օրենքին, իրավունք ունի դատելու՝ խախտվե՞լ է օրենքը, թե՞ ոչ: Իրավաբանները երկար տարիներ սովորում են՝ նախքան քննություններ հանձնելը, որոնք վկայում են նրանց պատրաստ լինելու մասին՝ անցնելու իրավագիտական պրակտիկայի:

Հիսուսի ժամանակվա դպիրները (նրանցից շատերը փարիսեցիներ էին) նույնպես ուսումնասիրում էին ոչ միայն Մովսեսի օրենքները, այլ նաև ավանդույթները: Այն փաստը, որ Հիսուսը չէր համաձայնում այդ ավանդույթներից շատերի հետ, լուրջ հակամարտության հասցրեց հոգևոր առաջնորդների հետ: Բայց Նա, Ով տվել էր այդ օրենքները, ուներ և ունի եզակի իրավասություն՝ բացատրելու դրանց նշանակությունը և որոշելու՝ խախտվե՞լ են դրանք, թե՞ ոչ: Այնպես որ, երբ Նա կրկին գա, Նրա հատուցումը Իր հետ կլինի, «որ ամեն մեկին հատուցի ինչպես իր գործը կլինի» (Հայտնություն 22.12): Ավելին, ընդունելով մեր մարդկային էությունը, ապրելով անմեղ կյանքով, մահանալով մեր փոխարեն և հարություն առնելով, հաղթանակ տանելով մեղքի և մահվան դեմ՝ Հիսուսը կարող է մեզ փրկել մեղքից:

«Ողջ դատաստանն Աստված հանձնարարել է Որդուն, որովհետև անվիճելի է, որ Նա Աստված է, որ հայտնվել է մարմնով: Աստված սահմանել է, որ տառապյալների Առաջնորդը, լինելով մարդկային մարմնում, դատի ողջ աշխարհը: Նա, Ով եկավ երկնային արքունիքից՝ փրկելու մարդուն հավիտենական մահից... Ով համաձայնեց կանգնել երկրային դատաստանի առջև և ամոթալի մահ տարավ խաչի վրա, միայն Նա կարող է դատավճիռ կայացնել պարգևի կամ պատժի մասին» (Է. Ուայթ, Մարանաթա, 341): Որպես Օրենսդիր և Փրկիչ՝ Քրիստոսը եզակի իրավասություն ունի՝ լինելու մեր դատավորը:

Մենք կստանանք կա՛մ պատիժ, կա՛մ պարգև: Ո՞րն է պարգև ստանալու մեր միակ հույսը:

Երեքշաբթի **նոյեմբերի 25**

Ծրագրված է նախօրոք

Կարդացե՛ք Հակոբոս 4.13-ը: (Համեմատե՛ք Ղուկաս 12.13-21-ի հետ): Մենք ինչպե՞ս կարող ենք հավասարակշռել ապագայի խելամիտ ծրագրումը՝ ամեն օր Քրիստոսի մոտալուտ գալստյան սպասումով ապրելու անհրաժեշտության հետ: Մենք ինչպե՞ս կարող ենք խուսափել «մեծ շտեմարաններ կառուցելու» գայթակղությունից:_____

_____

_____

_____

_____

Մեկ տարվա և անգամ ավելի երկար ժամանակի ծրագրեր կառուցելը կարող է միանգամայն խելամիտ թվալ: Սովորաբար բիզնեսում կան մոտակա և հեռանկարային ծրագրեր: Առանձին մարդիկ և ընտանիքներ պետք է գումար խնայեն ապագայի համար, որպեսզի իրականացնեն չնախատեսված ծախսերը: Մյուս կողմից, մենք նաև հավատում ենք, որ Հիսուսը շուտով կգա, և մեր ողջ երկրային ունեցվածքը կոչնչացվի կրակով (տե՛ս Բ Պետրոս 3.10-12):

Պարտադիր չէ, որ այս երկու մոտեցումները հակասության մեջ լինեն: Ինչ-որ մեկն ասել է. «Ծրագրե՛ք այնպես, ասես Քրիստոսը չի գալու դեռ շատ տարիներ, բայց ամեն օր ապրե՛ք այնպես, ասես Նա գալու է վաղը»: Որոշ չափով սա լավ է, թեև երկարաժամկետ ծրագրումը կարող է դժվարացնել մեկ օրվա հանդեպ լուրջ վերաբերմունքը: Հիսուսի ունկնդիրներից շատերը (և, անկասկած, այսօրվա քրիստոնյաներից շատերը) կարող էին համարել, որ հարուստ մարդը, որ որոշել էր ավելի մեծ ամբարներ կառուցել, հաջողակ էր, որովհետև Աստված օրհնել էր նրան: Բայց Հիսուսը մեզ բացահայտում է նրա մտքերը. «Ո՛վ անձն, շատ բարիքներ ունես շատ տարիների համար ամբարված. հանգստացի՛ր, կե՛ր, խմի՛ր, զվարճացի՛ր» (Ղուկաս 12.19): Մի խոսքով, նրա գլխավոր հոգսը *իր համար* գանձեր ժողովելն էր:

Ամենագլխավորը՝ չափազանց որոշակի ծրագրեր կազմելու փոխարեն՝ ասացե՛ք. «Եթե Տերը կամենա և ապրենք, այս բանը կամ այն բանը կանենք» (Հակոբոս 4.15): Դա ավելին է նշանակում, քան պարզապես «D.V.» (Deo volente, լատ.՝ Եթե դա Աստծո կամքը լինի) ավելացնելը՝ հետագա ծրագրերի մասին նախադասությունների վերջում: Սա նշանակում է, որ մենք պետք է մեր բոլոր ծրագրերը ենթարկեցնենք Աստծուն: Մենք կարող ենք աղոթել. «Աստվա՛ծ իմ, ես կամենում եմ իմանալ Քո կամքը: Եթե մեր ծրագրերը հաճո չեն Քեզ, խնդրո՛ւմ եմ, ինձ ցո՛ւյց տուր դա»: Այն ժամանակ, եթե մենք ուշադիր ենք մնում և պատրաստ ենք ուղղելու մեր ծրագրերը կամ անգամ առհասարակ փոխելու դրանք, Աստված մեզ ցույց կտա՝ ճի՞շտ են դրանք:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Հակոբոս 4.13-ը: Թեև կարող է թվալ, որ հիշատակված մարդիկ դատապարտելի ոչինչ չեն ասել, հստակ խնդիր գոյություն ունի՝ ոչ թե այն, որ նրանք ցանկանում են ինչ-որ բան անել, այլ դրա հանդեպ նրանց վերաբերմունքը: Մենք ինչպե՞ս կարող ենք այնքան զգուշավոր լինել, որ անգամ ենթագիտակցական մակարդակում նման վերաբերմունք չդրսևորենք:

Շոգի

Կարդացե՛ք Հակոբոս 4.14-ը: Ի՞նչ կարևոր միտք է ընդգծված համարում: _____

_____

_____

Կյանքն անկայուն է: Յուրաքանչյուր ներշնչումը պարգև է: Հակոբոս 4.14-ում շատ հազվադեպ հունարեն բառ է օգտագործվում՝ *աթմիս*, որը թարգմանվում է *շոգի* կամ *մշուշ*: Ինչպես և եբրայերեն *հեվել* բառը (*շնչառություն, գոլորշի, դատարկություն, ունայնություն*), որը 38 անգամ հանդիպում է Ժողովող գրքում և հաճախ թարգմանվում է *ունայնություն*, այն ընդգծում է կյանքի անցողիկ բնույթը: Ո՞վ չի զգացել, հատկապես տարիքի հետ, թե որքան արագ ու թռուցիկ է անցնում կյանքը: Խոր ծերության տարիքում հռչակավոր ավետարանիչ Բիլի Գրեմն ասել է. «Ես չգիտեի, որ կյանքն այդքան արագ է անցնում»:

Այլ խոսքերով՝ մահը միշտ անխուսափելի է: Մեզ ամենքիս նրանից բաժանում է միայն սրտի մի բաբախյունը: Մեզանից ցանկացածը ամեն պահի ամենատարբեր պատճառներով կարող է մի ակնթարթում մահանալ: Որքա՜ն իրավացի է Հակոբոսը, երբ ասում է. «Դուք, որ չգիտեք վաղվա օրը» (4.14) (ներառյալ մահը):

«Այստեղ կարիք չկա խոսելու կարճ ու անորոշ կյանքի մասին: Սակայն մի սոսկալի վտանգ գոյություն ունի՝ վտանգ, որը բավարար չի ըմբռնվում. մարդիկ չեն շտապում հնազանդվել Աստծո Սուրբ Հոգու աղերսող կոչին և ընտրում են մեղքի մեջ թաղված կյանքը» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 32):

Կյանքն ինքին ոչ միայն կարճ է, նաև կարող է բոլորովին բավականություն չբերել:

Կարդացե՛ք Ժողովող 2.15-19, 4.4, 5.10, 9.11,12-ը: Սողոմոնի լուրն ինչպե՞ս է ընդգծում Հակոբոսի միտքը: _____

_____

_____

Մենք այնքա՜ն անարդարություն, այնքա՜ն դժբախտություն, այնքա՜ն անիմաստ բաներ ենք տեսնում այս կյանքում: Զարմանալի չէ, որ ամենքս ծարավի ենք՝ Հիսուսում մեզ տրված հավիտենական կյանքի խոստմանը: Առանց դրա մենք միայն շոգի ենք, որ անհետանում և մեկընդմիշտ մոռացվում է:

Ամփոփենք. այս աշխարհում ի՞նչն է պահում մեզ իր ճանկերում: Ինչպե՞ս կարող ենք մշտապես հիշել, որ նրա մեջ եղած ամեն բան որքա՛ն անցողիկ է:

Հինգշաբթի **նոյեմբերի 27**

Հասկանալ ու բարին անել

Կարդացե՛ք Հակոբոս 4.15-17-ը՝ նախորդ համարների համատեքստում: Ի՞նչ կարևոր միտք է ընդգծում առաքյալը: _____

_____

_____

Հակոբոսն այստեղ խոսում է ինքնագոհության մասին: Այդպիսի դիրքորոշումը նա փաստորեն անվանում է պարծենկոտություն և ասվող խոսքերը հավասարեցնում է սնապարծությանը, որը «չարիք է»: Այդ պատճառով քրիստոնյայի համար արտակարգ կարևոր է ճիշտ դիրքորոշում ունենալը:

Կարդացե՛ք 17-րդ համարը: Աստվածաշունչը մեղքը սահմանում է որպես (1) վատ արարքներ, (2) բարի գործերի բացակայություն:

Առաջին սահմանումը տվել է Հովհաննեսը. «Մեղքն է անօրենությունը» (Ա Հովհաննես 3.4), բայց հունարեն *անոմիա* բառն ավելի շուտ ցույց է տալիս օրենքի հատուկ խախտումները, քան սովորական անօրեն վարքը (տե՛ս Հռոմեացիս 4.7, Տիտոս 2.14, Եբրայեցիս 10.17): Երկրորդ սահմանումը տրված է Հակոբոս 4.17-ում. «Արդ, ով որ բարին գիտենա և չանի, նրա համար մեղք է»: Այդ պատճառով մենք չպետք է պարզապես ընդդիմանանք վատ վարվելու գայթակղությանը: Մենք կոչված ենք «լույսի որդիներ» լինելու (Եփեսացիս 5.8): «Այսպես լուսավորի ձեր լույսը [*մեր*] մարդկանց առջև, որ ձեր [*մեր*] բարի գործերը տեսնեն և փառավորեն ձեր [*մեր*] Հորը, որ երկնքում է» (Մատթեոս 5.16, ընդգծված ձեռնարկի հեղինակի կողմից):

Իհարկե՛, ինչ-որ մեկը կարող է հեշտորեն հիասթափվել, որովհետև, ի վերջո, ո՞վ է միշտ, ամեն օր գործում հնարավոր առավելագույն բարիքը: Բայց հարցը դա չէ: Անգամ Հիսուսի կյանքը ակտիվության անընդմեջ շրջան չէ: Ժամանակ առ ժամանակ Նա հեռանում էր, որպեսզի աղոթի կամ պարզապես հանգստանա (Ղուկաս 5.16, Մարկոս 6.31): Ամենագլխավորը՝ Իր բոլոր գործերում Նա փնտրում էր Աստծո կամքը (Հովհաննես 5.30): Հիսուսն Աստծո կամքի կատարումը

անգամ համեմատում է սնունդ ընդունելու հետ. «Իմ կերակուրն այն է, որ Ինձ Ուղարկողի կամքն անեմ և Նրա գործը կատարեմ» (Հովհաննես 4.34): Սահման կա մեկ անգամ ընդունվող սննդի համար, նույն ձևով սահման կա նաև, թե որքան կարող ենք անել մենք: Այդ պատճառով Հիսուսն ասում է. «Ուրիշ է սերմողը, և ուրիշ է հնձողը», բայց նրանք «իրար հետ կուրախանանան» (համարներ 36-38): Աշխատելով Տիրոջ համար՝ մենք դրդված կլինենք ավելի ու ավելի շատ աղոթել մեծ ցանկության համար, որ դառնանք առավելագույնս օգտակար:

Աղոթքն ինչպե՞ս է օգնում մեզ՝ մահանալու մեր «ես»-ի համար և պատրաստակամ լինել՝ հնազանդվելու Աստծո կամքին: Ինպիսին էլ լինեն մեր ծրագրերը, մենք ինչպե՞ս կարող ենք սովորել՝ հնազանդեցնել դրանք Տիրոջը:

Ուրբաթ **նոյեմբերի 28**

Հետագա ուսումնասիրության համար

Ժամանակի արժեքավորության մասին կարդացե՛ք Է. Ուայթի «Քրիստոսի առակները» գրքի «Տաղանդներ» գլխում (342-346), և շաբաթօրյա դպրոցի դասի ժամանակ կիսվե՛ք ձեր տպավորություններով:

«Թող այլևս ձեզանից ոչ ոք չմեծարվի ճշմարտության դեմ՝ հայտարարելով, թե այդ հոգին (ճանաչել շրջապատողների չար դրդապատճառները) մեղավորների հանդեպ ճիշտ վերաբերմունքի և ճշմարտությունը պաշտպանելու արդյունք է: Այդպիսի իմաստությունը շատ երկրպագուներ ունի, սակայն այն շատ խաբուսիկ ու վնասակար է: Այն չի բխում ի վերուստ, այլ չվերածնված սրտի պտուղ է: Դրա հեղինակն ինքը սատանան է: Թող ոչ մեկը, ով մեղադրում է մյուսներին, իրեն՝ ճանաչելու ընդունակություն չվերագրի, որովհետև, այդպես վարվելով, նա արդարության զգեստ է հագցնում սատանային բնորոշ գծերին» (Է. Ուայթի մեկնությունները, ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հատոր 7, 936, 937):

«Նա, ով ինչ-որ բանում մեղավոր է, հակված է նույնի մեջ կասկածել նաև մյուսներին: Դատապարտելով նրանց՝ նա ջանում է թաքցնել սեփական սրտի արատավորությունը: Մեղանչելով՝ մարդիկ ճանաչեցին մեղքը, և հենց որ մեր նախածնողները գործեցին առաջին մեղքը, նույն պահին նրանք սկսեցին մեղադրել միմյանց: Այսօր էլ դա

հատուկ է մարդկային էությանը, որ ենթարկված չէ Քրիստոսի շնորհին» (Է. Ուայթ, Քրիստոսի լեռան քարոզը, 126):

Հարցեր քննարկման համար

1. Եվս մեկ անգամ կարդացե՛ք վերը բերված Է. Ուայթի երկրորդ խոսքը: Մենք ինչպե՞ս կարող ենք մեզ պաշտպանել նման բանից՝ շրջապատողներին դատապարտելուց և մեղադրելուց՝ փորձելով մեզ ավելի լավը զգալ և հարթել մեր սեփական թերությունները:
2. Խորհեցե՛ք կյանքի արագընթացության փաստի մասին: Ի՞նչ պետք է ասի դա մեզ մեր գերակայությունների մասին: Թեև հարաբերականության հատուկ տեսությունը մեզ ասում է այն մասին, որ ժամանակն ինքը փոխվում է՝ կախված հաշվարկման համակարգում մեր շարժման արագությունից, անվիճելի է մի բան. անկախ այն բանից, թե որքան արագ կամ դանդաղ է ընթանում ժամանակը, անցած ցանկացած վայրկյան անհետանում է ընդմիշտ: Այս սթափեցնող միտքն ինչպե՞ս պետք է ազդի՝ ժամանակի հանդեպ մեր վերաբերմունքի վրա:
3. Մենք ինչպե՞ս պետք է վարվենք այն մարդկանց հետ, ում մեղքերի հանդեպ չի կարելի աչք փակել, և միևնույն ժամանակ մենք ինչպե՞ս կարող ենք չընկնել թակարդը, որի մասին մեզ նախազգուշացնում է Հակոբոսը:

ԴԱՍ 10

ԼԱՅԵ՛Ք ԵՎ Ո՛ՂԲ ԱՐԵՔ

Նոյեմբերի 29 – դեկտեմբերի 5

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Յակոբոս 5.1-6, Սաղմոս 73.3-19, Ա Թագավորաց 25.2-11, Ղևտացոց 19.13, Ղուկաս 16.19-31, Մատթեոս 5.39:

Հիշելու համարը.

«Որովհետև որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ կլինի և ձեր սիրտը» (Մատթեոս 6.21):

«Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր» հեռուստաշոուի համաշխարհային ճանաչումը պայմանավորված է շատ մարդկանց՝ արագ հարստանալու երազանքով:

Բայց հարստությունն այն չէ, ինչ շատերը պատկերացնում են: Հետազոտությունները ցույց են տալիս, որ եկամտի մեծացմանը հետևում է փոքրացող հատուցումը. մարդկանց թույլ տալով ապրել առավել հարմարավետ՝ մեծ հարստությունը չի ավելացնում երջանկությունը: Նշանակալի փոխհարաբերությունները, աշխատանքից բավարարվածությունն ու նպատակաուղղված կյանքը սովորաբար ավելի շատ են նպաստում մարդու երջանկությանը, քան հարստությունը: Ամեն լավագույնը՝ սիրալիր խոսքերը, ժպիտը, ունկնդրելու պատրաստակամությունը, բարությունը, ընդունված լինելը, հարգանքը, կարեկից հպումը, իսկական բարեկամությունը՝ այս ամենը պարգև է:

Աստված տալիս է անգամ ավելի թանկարժեք պարգևներ՝ հավատ, հույս, իմաստություն, համբերություն, սեր, բավականություն և շատ այլ օրհնություններ: Դրանք բոլորը գալիս են մեր կյանքում Նրա Հոգու ներկայության շնորհիվ: Հեգնանքն այն է, որ, թեև շատ քրիստոնյաներ համաձայնում են այս կարծիքին, նրանց առօրյա կյանքում գերիշխում է եսասիրությունը: Ինչպես մենք կտեսնենք այս շաբաթ, ագահությունն արատ է, որը տանում է սոսկալի հետևանքների:

Արդարադատությունը կկատարվի՛

Հակոբոսի թղթի հինգերորդ գլուխն սկսվում է այսպիսի անսպասելի խոսքերով. «Աղե հիմա, ո՛վ հարուստներ, լացե՛ք և ո՛ղբ արեք ձեր թշվառությունների վրա, որ պիտի գան ձեզ վրա» (Հակոբոս 5.1): Անկասկած, դա պետք է գրավի ընթերցողների ուշադրությունը:

Հակոբոս 1.10,11-ում հեղինակը հարուստներին հիշեցրեց հարստության անցողիկ լինելու մասին: Այստեղ՝ հինգերորդ գլխում, նա այնպես է դիմում իրենց հարստությունից համառորեն կառչած մարդկանց. «Լացե՛ք և ո՛ղբ արեք», ասես վերահաս դատաստանն արդեն սկսել է թափվել: Այդպիսի վառ նկարագրությունը կդիտվի այս շաբաթ մեր ուսումնասիրելիք ողջ տեքստի ընթացքում՝ հիշեցնելով աստվածային հատուցման մասին՝ այն արատավոր անչափավորության համար, որը բնորոշ է՝ Քրիստոսի վերադարձին անմիջականորեն նախորդող ժամանակահատվածին (տե՛ս Ղուկաս 17.27-29, Բ Տիմոթեոս 3.1,2, Հայտնություն 18.3,7-ը): Նման վերաբերմունքը ներթափանցել է նաև վերջին օրերի Աստծո եկեղեցի (Հայտնություն 3.17): Հետաքրքիր է նշել, որ *թշվառություն* թարգմանված հունարեն բառը ծագում է այն նույն արմատից, որն օգտագործվում է Հայտնություն 3.17-ում Լաոդիկեի նկարագրության համար (թշվառ):

Աշխարհում այնքա՜ն անարդարություն կա, հատկապես՝ տնտեսական: Երբեմն դժվար է հասկանալ, թե ինչու են որոշ մարդիկ հարստանում՝ շահագործելով աղքատներին, և ինչու է նրանց ամեն բան հաջողվում: Կարդացե՛ք Սաղմոս 73.3-19-ը: Այստեղ ի՞նչ հույս է տրված այս հավերժական խնդրի վերաբերյալ: _____

_____

_____

_____

Հինկտակարանյան մարգարեների գրքերում մենք հանդիպում ենք հարցերի՝ արդարության և այն խոստման մասին, որ Աստված ամեն բան իր տեղը կդնի: Սակայն հույսի այդ հաստատ, կայուն զգացումը, թվում է, չէր թեթևացնում աստվածային միջամտությանն սպասելու դժվարին ժամանակահատվածը: Օրինակ՝ ծառայություն կատարելով՝ Աստծո ժողովրդի մեջ լայնորեն տարածված ուրացության ժամանակ, երբ սեփական հպարտությամբ արբեցած Բաբելոնը պարծենում

էր սեփական հզորությամբ ու բարգավաճմամբ, Ամբակում մարգարեն դառնությամբ հարցեր էր տալիս Աստծուն (տե՛ս Ամբակում 1.2-4,13,14-ը): Աստծո հակիրճ պատասխանն այն է, որ հարկավոր է ապավինել Իրեն և մի փոքր էլ սպասել (Ամբակում 2.2-4): Մարգարեն հենց այդպես էլ վարվեց (տե՛ս Ամբակում 3.17,18):

Ո՞ր անարդարությունն է դառնում ձեր զայրույթի ու վրդովմունքի պատճառը: (Իսկ որքա՜ն բան է տեղի ունենում, որ դուք չեք էլ ենթադրում: Թեև մենք պետք է անենք ամեն հնարավորը, որ մեղմենք անարդարությունը, ինչպե՞ս կարող ենք սովորել ապավինել խոստմանը, որ իր ժամանակին կկատարվի Աստծո արդարադատությունը:

Երկուշաբթի դեկտեմբերի 1

Երբ հարստությունն անօգուտ է դառնում

Կարդացե՛ք Հակոբոս 5.2,3-ը: Ի՞նչ նախազգուշացում է հաղորդում Հակոբոսը: Թեև առաքյալը բավականին ազդեցիկ բառեր է օգտագործում, ի՞նչ հարստության մասին է նա խոսում: Ո՞րն է Հակոբոսի հիմնական լուրը:

_____

_____

_____

Փտած հարստությունը, ցեցը կերած հագուստը և անգամ ժանգոտած ոսկին ու արծաթը՝ այս կերպարները սթափեցնում են մեզ, այն դեպքում, երբ մեր մոլորակը շարունակում է պտտվել՝ ավելի ու ավելի արագորեն մոտենալով իր վախճանին:

Աշխարհի տնտեսական վիճակը մշտապես մի ճգնաժամից անցնում է մյուսին, անգամ երբ վրա են հասնում «լավ ժամանակներ», դրանք երկար չեն տևում և միշտ փոխարինվում են անկումով: Տնտեսական կայունության ու հավասարակշռության ցանկացած երևութականություն, որ կարող է առաջարկել համաշխարհին շուկան, հարատև չէ ու նշանակալի չափով երևակայական է: Աղքատների ու հարուստների միջև անհավասարության մեծացմանը զուգընթաց աճում են անբավականությունն ու անկայունությունը: Նույնպիսի իրավիճակ էր, երբ գրում էր Հակոբոսը: Աղքատներն է՛լ ավելի էին հուսահատվում, իսկ հարուստները ավելի ու ավելի քիչ կարեկցանք էին դրսևորում նրանց թշվառ վիճակի հանդեպ:

Խորհեցե՛ք ստորև հիշատակված մարդկանց մասին ու նկարագրե՛ք, թե ինչ ազդեցություն է գործել նրանց վրա հարստությունը (կամ դրա բացակայությունը):

Նաբաղը (Ա Թագավորաց 25.2-11) _____

Եզեկիան (Դ Թագավորաց 20.12-19) _____

Պետրոսը (Գործք առաքելոց 3.1-10) _____

Վաղ թե ուշ երկրային հարստությունը մեզ համար կորցնում է իր գրավչությունը: Մենք իմանում ենք նրա սահմանափակ հնարավորությունների մասին և, հնարավոր է, անգամ դրա մութ կողմերի մասին: Փողն իր որոշակի տեղն է զբաղեցնում մարդու կյանքում, խնդիրն այն է, որ մարդիկ դրան *սխալ* տեղ են հատկացնում:

Հակոբոսն ասում է, որ հարստությունը «վկա կլինի նրանց դեմ», ովքեր սխալ են օգտագործում այն (Հակոբոս 5.3): Թեև նա այդ նախազգուշացումն արտահայտում է վերջին ժամանակի համատեքստում, գլխավոր միտքը պետք է պարզ լինի. կարևոր է, թե ինչպես ենք մենք օգտագործում մեր փողը: Մսերն ուտող կրակի պատկերը պետք է մեզ դրդի լուրջ որոշումներ ընդունելու մեր փողերի վերաբերյալ: Մենք կուտակում ենք հարստությո՞ւն, որն ի վերջո կայրվի, թե՞ մեզ համար գանձեր ենք կուտակում երկնքում: (տե՛ս Ղուկաս 12.33, 34-ը):

Խորհեցե՛ք փողի հանդեպ ձեր վերաբերմունքի և ձեր փոխհարաբերությունների վրա դրա ազդեցության մասին: Ի՞նչ է ասում այն՝ ձեր կողմից միջոցների օգտագործման մասին:

Երեքշաբթի դեկտեմբերի 2

Աղքատների աղաղակները

Կարդալով Հակոբոսի թուղթը՝ մենք կարող ենք նկատել, որ այստեղ հիշատակված են հարուստ մարդկանց մի քանի տարատեսակներ: Այստեղ մտնում են իրենց գործերի բուռն ընթացքի մեջ խորասուզված հարուստ առևտրականները (Հակոբոս 1.11), հարուստ մարդիկ, ովքեր դատական կարգով պաշտպանում են իրենց *ներդրումները* (Հակոբոս 2.6), և հողատերերը, ովքեր պահում են իրենց աշխատողների վարձատրությունը (Հակոբոս 5.4): Այս համարները հարուստներին նկարագրում են բացասական լույսի ներքո՝ նրանց անցյալ վարքի հիման վրա, նրանց զանցանքները ներկայում և ապագա պատիժը:

Նրանք «գանձեր են դիզել» (Հակոբոս 5.3) գլխավորապես աղքատների հաշվին:

«Ահա՛ այն մշակների վարձքը, որ ձեր արտերը հնձել են, և դուք զրկել եք, աղաղակում է» (Հակոբոս 5.4): Ի՞նչ կարևոր սկզբունք է դիտվում այս համարներում՝ այն մասին, թե ինչպես ենք մենք վարվում շրջապատողների հետ: _____

_____

_____

_____

Աստվածաշնչյան ժամանակների Իսրայելում հենց որ վճարվում էր աշխատավարձը, շատ աշխատողներ, եթե ոչ մեծամասնությունը, այդ փողն օգտագործում էին սնունդ գնելու և իրենց ընտանիքը կերակրելու համար: Պահված վճարը հաճախ նշանակում էր, որ ընտանիքը քաղցած կմնա: Այդ պատճառով այստեղ Հակոբոսը շատ լուրջ խնդիր է վեր հանում:

Զարմանալի չէ, որ Հակոբոսն այդքան կտրուկ է արտահայտվում նրանց դեմ, ովքեր պահում են՝ իրենց համար աշխատած մարդկանց վճարը: Բավականին վատ բան է, երբ մարդուն խաբեությամբ զրկում ես ինչ-որ բանից, սակայն աղքատից գողանալով հարստություն կուտակելը ոչ թե պարզապես մեղք է աղքատի, այլ հենց Երկնքի դեմ: Բայց, ինչպես գրում է Հակոբոսը, իր ժամանակին այդ խնդիրը կլուծվի:

«Հարստությունը կապված է մեծ պատասխանատվության հետ: Այն մարդիկ, ովքեր հարստություն են ձեռք բերել անազնիվ գործարքների, այրիներին կամ որբերին շահագործելու միջոցով կամ էլ միջոցները կուտակելով ու կարիքավորների կարիքներն անտեսելու ճանապարհով, ի վերջո իրենց վրա կհրավիրեն արդարացի հատուցումը, որ նկարագրված է ոգեշնչված առաքյալի կողմից. «Աղե՛ հիմա, ո՛վ հարուստներ, լացե՛ք և ո՛ղբ արեք ձեր թշվառությունների համար, որ պիտի գան ձեզ վրա» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 2, 682):

Դուք ինչպե՞ս եք վարվում այլ մարդկանց հետ, երբ խոսքը վերաբերում է փողին: Այդպիսի գործելաոճն ի՞նչ է ասում ձեր քրիստոնյա լինելու և այն մասին, թե որքանով եք դուք արտացոլում Քրիստոսի բնավորությունը:

Գիրացած ու երջանիկ (առայժմ)

«Երկրի վրա փափուկ ապրեցիք և զբոսնեցիք, ձեր սրտերը գիրացրիք ինչպես մորթվելու օրվա համար» (Հակոբոս 5.5, համեմատե՛ք Եզեկիել 16.49, Ամոս 4.1-ի հետ): Ի՞նչն է կապված շքեղության և վայելքների հետ: __

_____

_____

_____

Հին աշխարհում կար հարստության կայուն ծավալի հասկացություն, այսինքն՝ եթե որոշ մարդկանց հարստությունն ավելանում է, նշանակում է՝ ուրիշների հարստությունը նվազում է: Այլ խոսքերով՝ հարուստները կարող են է՛լ ավելի հարստանալ՝ միայն աղքատների ընչազրկության միջոցով: Հարստություն «կուտակելու» հնարավորությունը՝ առանց ուրիշների բարեկեցությանը վնաս հասցնելու, համեմատաբար ժամանակակից գաղափար է: Ոմանք մինչև անգամ պնդում են. հարուստները, է՛լ ավելի հարստանալուն զուգընթաց, կարող են օգնել աղքատներին՝ նույնպես հարստանալ: Մյուս կողմից, հաշվի առնելով զարգացած ու զարգացող երկրների միջև առկա մրցակցությունը՝ արագորեն կրճատվող ռեսուրսների համար, կապիտալի կուտակման սահմանափակումներն առավել հրամայական պահանջ են: Այդ պատճառով այսօր շարունակում է արդիական մնալ բարեկեցության անհավասարության խնդիրը:

Անհավասարության մասին Հիսուսի ամենահիշռակավոր պատմություններից մեկը հարուստի և Ղազարոսի մասին առակն է (տե՛ս Ղուկաս 16.19-31): Հիսուսի ժամանակներում մարդկանց մեծամասնությունը երջանիկ էր՝ մեկի փոխարեն երկու հագուստ ունենալու համար, ինչպես նաև հաջողություն էին համարում տարվա մեջ մեկ անգամ խնջույք կազմակերպելը: Բայց առակի հարուստը «շատ ազնիվ ծիրանի և բեհեզ էր հագնում» (ամենաթանկարժեք հագուստը) «և ամեն օր փառավոր զվարճություն էր անում» (համար 19): Աղքատ Ղազարոսը, ով ընկած էր հարուստի դռան մոտ, ստիպված էր փշուրներ աղերսել նրա սեղանից:

Ի տարբերություն համընդհանուր տարածում գտած կարծիքի՝ առակի գլխավոր նյութը ներկայիս կյանքն է, ոչ թե անդրշիրիմյան կյանքը: Հարուստին ու Ղազարոսին բաժանող անդունդը խորհրդա-

նշում է այն փաստը, որ մարդու մահից հետո նրա հավիտենական ճակատագիրը վճռված է: Այդ պատճառով այս կյանքում մարդկանց հանդեպ մեր վերաբերմունքը (ինչպես նկարագրված է՝ «Մովսեսը և մարգարեները», համարներ 29, 31) արտակարգ կարևոր է: Կյանքում այնպիսի ապագա չկա, որտեղ մենք կարողանանք ուղղել այն, ինչ մեզ չի հաջողվել անել այս կյանքում. «Եթե մեկն ասի, թե՝ սիրում եմ Աստծուն, և իր եղբորն ատի, նա ստախոս է. որովհետև նա, որ իր տեսած եղբորը չի սիրում, Աստծուն, որ չի տեսել, ինչպե՞ս կարող է սիրել» (Ա Հովհաննես 4.20):

Ձեր ո՞ր սխալ արարքները կարելի է ուղղել դեռևս, բայց ավելի ուշ հնարավոր չի լինի ուղղել:

Հինգշաբթի դեկտեմբերի 4

Մեղադրել զոհին

Երբ մարդը տհաճ արարք է գործում, նրա բնական արձագանքը պատասխանատվությունից խուսափելն է: Մարդիկ հաճախ այդպես էլ վարվում են՝ պատասխանատվությունը փոխադրելով մեկ այլ մարդու վրա՝ ներառյալ այն մարդու, ում հետ վատ են վարվել: Մարդասպաններն արդարացնում են իրենց՝ հիմնվելով ինքնապաշտպանության կամ համապատասխան դաստիարակության բացակայության վրա: Բռնաբարողները մեղադրում են իրենց զոհերին, որ վերջիններս իրենց գայթակղեցրել են: Նահատակ քրիստոնյաների մահվան մեղավորները նրանց մեղադրում են հերետիկոսության մեջ: Հիսուսը նախազգուշացրել է աշակերտներին. «Եվ ժամանակ էլ կգա, որ ամեն, ով որ սպանի ձեզ, կկարծի, թե Աստծուն պաշտոն է մատուցում» (Հովհաննես 16.2): Համաձայն առկա տվյալների՝ կարելի է ենթադրել, որ Հակոբոսը նույնպես սպանվել է իր հավատի համար:

Վերն ասված ամեն բանի լույսի ներքո Հակոբոս 5.6 համարը է՛լ ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում:

> **«Դատապարտեցիք, սպանեցիք արդարին, նա հակառակ չի կենում»: Դուք քանի՞ անգամ եք մեղադրել ուրիշներին, իսկ ավելի ուշ իմացել, որ ինքներդ էիք սխալ: Ուշադրություն դարձրեք համարի վերջին դարձվածքի վրա: Սա նշանակո՞ւմ է, որ մենք չպետք է դիմակայենք մեր հանդեպ վատ վերաբերմունքին: Մյուս կողմից, դուք որքա՞ն վեճեր եք վերապրել, որոնցից կարելի էր խուսափել, եթե դուք**

չընդդիմանայիք: Ի՞նչ նկատի ունի Հիսուսը՝ ասելով. «Ով ապտակ տա քո աջ երեսին, մյուսն էլ նրան դարձրու» (Մատթեոս 5.39): Գործնականում մենք ինչպե՞ս պետք է հետևենք այս հրահանգին: _____

_____

_____

_____

Իր Թղթում Հակոբոսը շատ է գրել հարուստների ու աղքատների մասին: Մեզ հարկավոր է հիշել նրա նախազգուշացումները, թեև առաքյալը հարուստներին չէր դատապարտում այն պատճառով, որ նրանք հարուստ էին: Աստծո համար նշանակություն ունի նրանց *վերաբերմունքը և արարքները:* Մյուս կողմից՝ մարդու տնտեսական աղքատության փաստն ինքնին սեր չի ներշնչում նրան՝ Աստծո հանդեպ: «Արքայությունը կժառանգեն» «հոգով աղքատները» և «հավատով հարուստները (Մատթեոս 5.3, Հակոբոս 2.5): Այս ներքին հատկանիշները կարող են ոչ մի կապ չունենալ մեր անձնական տնտեսական հանգամանքների հետ, սակայն կարող են և ունենալ: «Հարուստները և հարստացածները» (Հայտնություն 3.17) կարող են հոգով առավել կարիքավոր լինել, քան իրենք կարծում են: Աստված պահպանում էր հրեաներին, որպեսզի նրանք, տիրանալով ավետյաց երկրին ու բարգավաճելով այնտեղ, չմոռանան, որ իրենց ողջ բարիքը ելնում է Նրանից, ներառյալ՝ «հարստություն ստանալու համար ուժը» (Երկրորդ Օրինաց 8.11-18):

Ուրբաթ դեկտեմբերի 5

Հեպագա ուսումնասիրության համար

«Փողը մեծ արժեք է ներկայացնում, քանի որ դրա օգնությամբ կարելի է շատ բարիք գործել: Աստծո զավակների ձեռքերում դա սնունդ է քաղցածների համար, ըմպելիք՝ ծարավների և հագուստ՝ մերկերի համար: Դրա մեջ է պաշտպանությունը հալածյալների և միջոցները՝ հիվանդներին օգնելու համար: Բայց փողն ինքնին ավելի արժեք չունի, քան ավազը, եթե այն օգտագործվում է ոչ առօրյա կենսական կարիքների ապահովման, ուրիշների օրհնության և Աստծո գործի առաջընթացի համար:

Հարստություն կուտակելը, լինելով ինքնանպատակ, ոչ միայն պարզապես անօգուտ է, դա իսկական անեծք է: Մեր կյանքում կու-

տակելը որոգայթ է հոգու համար, որը շեղում է մեզ կապվածությունից ու սիրուց `դեպի երկնային գանձը...

Ով հասկանում է, որ իր փողերը պարգև են Աստծուց, նա խնայողաբար կօգտագործի դրանք՝ իր պարտականությունը համարելով դրանք խնայելը, որպեսզի հետագայում ինքը հնարավորություն ունենա տալու» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 351, 352):

Հարցեր քննարկման համար

1. Խորհեցե՛ք այս խոսքերի մասին. «Հարուստը աղքատներին կտիրի, և փոխ առնողը ծառա կլինի փոխ տվողին» (Առակաց 22.7): «Շատ ընտանիքներ աղքատ են ապրում, որովհետև իրենց փողը ծախսում են անմիջապես, հենց որ դրանք ստանում են... Երբ ինչ-որ մեկը պարտապան է դառնում, նա հայտնվում է սատանայական ուռկանում, որ դրել է թշնամին...» (Է. Ուայթ, Քրիստոնեական տուն, 392): Օգնել աղքատներին, որ նրանք ազատվեն պարտքերից կամ խուսափեն դրանցից, արդյո՞ք «աղքատներին ավետարանելու» մի մասն է (Ղուկաս 4.18): Բացատրե՛ք ձեր պատասխանը:
2. Մենք ինչպե՞ս կարող ենք հստակ կերպով իմանալ՝ փո՞ղն ծառայում է մեզ, թե՞ մենք ենք ծառայում նրան: Տե՛ս Ղուկաս 16.10-13, Սաղմոս 62.11-ը:
3. Տնտեսական անհավասարությունը գոյություն ունի ամենուր: Որոշ մարդիկ ունեն երկու, երեք, չորս (և անգամ ավելի շատ) շքեղ տներ, այն ժամանակ, երբ ուրիշները ուրախ են մի քանի տախտակ գտնելու, որպեսզի դրանցից ինչ-որ ծածկ պատրաստեն: Իսկ ի՞նչ կարելի է ասել շատ գեր մարդկանց մասին, ովքեր անվերջ սնունդ են կլանում, այն ժամանակ, երբ ողջ աշխարհում ամեն օր բազում երեխաներ մահանում են քաղցից: Ոմանք պնդում են. վերցնելով հարուստներից՝ մենք կարող ենք ավելի շատ տալ չքավորներին: Ուրիշները համարում են, որ հարուստները, է՛լ ավելի հարստանալով, կարող են օգնել աղքատներին՝ դուրս պրծնելու աղքատությունից: Մենք՝ որպես քրիստոնյաներ, ի՞նչ ենք անում՝ մեղմացնելու ծայրահեղ աղքատության հիմնախնդիրը: Մենք ի՞նչ պետք է անենք և ի՞նչ անելու հարկ չկա այս ուղղությամբ:

ԴԱՍ 11 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՆՁՔԻՆ

դեկտեմբերի 6-12

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Յակոբոս 5.7-12, Հռոմեացիս 13.11, Ա Կորնթացիս 3.13, Ղուկաս 7.39-50, Կողոսացիս 4.6:

Հիշելու համարը.

«Երկայնամի՛տ եղեք դուք էլ, հաստատեցե՛ք ձեր սրտերը, որ Տիրոջ գալուստը մոտեցել է» (Յակոբոս 5.8):

Յունահռոմեական ժամանակներում (ինչպես և որոշ վայրերում մինչև հիմա) որևէ բարձրաստիճան անձի ժամանումը ակտիվության ալիք էր առաջացնում: Փողոցները մաքրում էին, ցուցափեղկերը՝ լվանում, ծաղիկներ էին տնկում և ուժեղացնում անվտանգության միջոցները: Բոլոր ջանքերն ուղղված էին նրան, որ այն վայրը, ուր պետք է այցելեր բարձրաստիճան անձը, անթերի տեսք ունենար:

Նոր Կտակարանում Քրիստոսի գալստյան համատեքստում, այդ թվում՝ Յակոբոս 5.7-ում օգտագործվող *պարուսիա* բառը հատուկ եզրույթ է, որը նշանակում է արքայի կամ մեկ այլ բարձրաստիճան անձի ժամանումը: Եթե երկրային կառավարիչների ժամանմանն այդքան հանդիսավոր նախապատրաստություններ էին նախորդում, մի՞թե մենք էլ չպետք է անենք մեր կողմից ամեն հնարավորը, որպեսզի նախապատրաստենք մեր սրտերը մեր Տիրոջ և Փրկչի գալստյանը:

Բայց ինչպե՞ս մենք կարող ենք նախապատրաստվել, եթե չգիտենք «այն օրվա և ժամի համար» (Մատթեոս 24.36): Ի՞նչ է նշանակում «երկայնամիտ լինել» և «ամրացնել» մեր սրտերը (Յակոբոս 5.7): Թեև հինգերորդ գլխի՝ այս շաբաթվա ուսումնասիրվող մասի համատեքստը վերաբերում է ժամանակի վերջին, հիմնական լուրը չափազանց արդիական է բոլոր ժամանակների հավատավորների համար: Աստծո ժողովրդի պատմությունը և անգամ մեր սեփական կյանքն այսօր լեցուն են փորձություններով ու տառապանքներով, որոնք մեզ հիշեցնում են հավատի մեջ ամուր կանգնելու մասին՝ հին ժամանակների մարգարեների նման:

Միաշաբթի դեկտեմբերի 7

«Անձրևի» սպասմամբ

Հողագործների բարեկեցությունն ուղղակիորեն կախված է եղանակային պայմաններից: Եթե չափազանց չոր է կամ չափազանց խոնավ, չափազանց ցուրտ է կամ շոգ, դա անբարենպաստ ազդեցություն կունենա բերքի վրա: Առավել չորային երկրներում, ինչպես Իսրայելը, անվտանգության գործակիցն ավելի ցածր է, քան այլ տեղանքներում, այդ պատճառով հարկավոր ժամանակ առատ անձրևի նշանակությունը հնարավոր չէ գերագնահատել: Անկախ այն բանից՝ բերքը հասունանում է փոքրիկ ընտանեկան ագարակո՞ւմ, թե՞ ընդարձակ դաշտում, նրա վերջնական արժեքն ուղղակիորեն կախված է անձրևից:

Առաջին անձրևը, որ այդ երկրներում սովորաբար տեղում է հոկտեմբեր-նոյեմբերին, խոնավեցնում է հողը և այն նախապատրաստում է ցանքի ու աճի համար: Վերջին անձրևը, որը լինում է մարտին կամ ապրիլին, օգնում է բերքին՝ վերջնականապես հասունանալու բերքահավաքի համար:

Կարդացե՛ք Հակոբոս 5.7-ը: Համեմատե՛ք Երկրորդ Օրինաց 11.14, Երեմիա 5.24, 14.22, Հովել 2.23-ի հետ: Ի՞նչ են ցույց տալիս անձրևի մասին բերված հինկտակարանյան համարները: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է Հակոբոսն այս պատկերն օգտագործում Տիրոջ գալստյան համատեքստում: Տե՛ս նաև Օվսե 6.1-3, Հովել 2.28,29: _____

«Օգտագործելով առաջին և վերջին անձրևի պատկերը, որն արևելյան երկրներում տեղում է ցանքի և հունձքի ժամանակ, հրեա մարգարեները կանխասում էին Աստծո եկեղեցու վրա չափազանց մեծ չափով հոգևոր շնորհի հեղումը: Հոգու հեղումը առաքյալների օրերին՝ վաղ կամ առաջին անձրևի հեղումն է, և դրա արդյունքները փառավոր էին... Բայց երկրային հունձքի ավարտին ավելի մոտ խոստացված է հոգևոր օրհնության առանձնահատուկ հեղում, որպեսզի եկեղեցին նախապատրաստի Մարդի Որդու գալստյանը: Հոգու այս հեղումը նմանեցվում է վերջին անձրևի տեղալուն, և քրիստոնյաները հենց այս լրացուցիչ ուժի մասին հունձքի իրենց խնդրանքները պետք է բարձրացնեն Տիրոջը «հետին անձրևի ժամանակ» (Զաքարիա 10.1) [Հակոբ թագավորի թարգմանություն, *ծան. փորձագետի*]» (Է. Ուայթ, Մեր Հայրը հոգում է, 212):

Հիսուսը բերքը հարաբերակցում է ժամանակի վերջի հետ (Մատթեոս 13.39): Մարկոս 4.26-29-ում ներկայացված է մի պատկեր, որը շատ նման է Հակոբոս 5.7-ին: Հողագործն *սպասում է*, թե երբ կհասունանա ցորենը. «առաջ խոտը, հետո հասկը, և նրանից հետո լցված ցորեն հասկի մեջ: Բայց երբ պտուղը կտա, շուտով կուղարկի մանգաղը, որովհետև հունձքը հասել է» (համարներ 28,29): Միայն բերքահավաքի ժամանակ կարելի է տեսնել, թե որտեղ է ցորենը, որտեղ՝ որոմը (Մատթեոս 13.28-30, համեմատե՛ք Մաղաքիա 3.17,18-ի հետ):

Մենք կարողանում ենք ցորենը տարբերել որոմից միայն հունձքի ժամանակ: Այս փաստը ի՞նչ է ասում մեզ այն մասին, թե մենք ինչպես պետք է դրսևորենք մեր հավատը հիմա, այսինքն՝ նախքան հունձքը:

Երկուշաբթի դեկտեմբերի 8

Որքա՞ն մոտ է վերահաս գալուստը

Հակոբոս 5.8-ում հեղինակը պնդում է, որ Քրիստոսի գալուստը «մոտեցել է»: Բայց մենք ինչպե՞ս կարող ենք հասկանալ այդ խոստումը՝ գրեթե երկու հազար տարի անց:

Հիսուսը խոսում էր գալիք արքայության մասին (Մատթեոս 4.17, 10.7) և այն պատկերում էր առակներում (Մատթեոս 24.33), որպեսզի անծանոթ երկնային իրողությունները մատուցի հասկանալի լեզվով: Այս համարների ուշադիր ուսումնասիրությունը բացահայտում է, որ արքայությունն ունի երկու տեսանկյուն. ներկա հոգևոր իրողությունը և փառավոր գալիք իրողությունը: Բոլոր առաքյալներն իրենց հույսը կենտրոնացնում էին Հիսուսի մոտալուտ գալստյան վրա (Հռոմեացիս 13.11, Եբրայեցիս 10.25, Հակոբոս 5.9), բայց նրանք երբեք պարզորոշ չէին ասում, թե դա երբ կլինի: Մեզ նման, նրանք ցանկանում էին իմանալ երկրորդ գալստյան ժամանակը, բայց Հիսուսը բացատրեց, որ պարտադիր չէ, որ նրանք իմանան այդ տեղեկատվությունը (Գործք առաքելոց 1.6,7): Ի վերջո, որքանո՞վ նախանձախնդրորեն նրանք Ավետարանով կկիսվեին աշխարհի հետ, եթե իմանային, որ այդ աշխատանքը դեռ ավարտված չի լինի՝ անգամ 2000 տարի անց:

Ի՞նչ նկատի ունի Հակոբոսը, երբ ասում է. «Հաստատեցե՛ք ձեր սրտերը» (Հակոբոս 5.8): Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է ակնկալվող պտուղն անվանված «պատ-

վական» (հունարեն, «*թիմիոս*», համար 7): Տե՛ս Ա Թեսաղոնիկեցիս 3.13, Բ Թեսաղոնիկեցիս 3.3, Ա Պետրոս 1.19, Ա Կորնթացիս 3.12: _____

_____

_____

«Հաստատեք» բառը (*ստերիձո*) նշանակում էր «հաստատ կանգնեցնել» կամ «ամրապնդել»: Մեր սիրտը պետք է այնքան նվիրված լինի Տիրոջը, որ ոչ մի դժվարություն չկարողանա սասանել այն: Դրան նպաստում են ճշմարտության մեջ հաստատվելը (Բ Պետրոս 1.12), փորձությանն ընդդիմանալը, հանուն հավատի գայթակղություններ ու տառապանքներ կրելը (Գործք առաքելոց 14.22):

Հոգևոր աճը գործընթաց է, որը միշտ անցնում է հեշտությամբ, բայց «պատվական պտուղ» է բերում: «Քրիստոսի պատվական [*թիմիոս*] արյունով» փրկագնված հավատավորները (Ա Պետրոս 1.19) մեծագույն արժեք են երկնային «Հողագործի» համար: *Թիմիոս* բառն օգտագործվում է նաև նկարագրելու համար թանկարժեք քարերը, որոնք խորհրդանշում են հավատավորներին՝ հաստատված Քրիստոսի՝ Աստծո հոգևոր տաճարի «քարե հիմքի» վրա (Ա Կորնթացիս 3.11,12): Մյուս կողմից՝ Պողոսն անհաստատ հավատավորներին համեմատում է երերուն ծառի հետ, որը վերջին հաշվով Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ կործանվում է կրակով: Մյուս կողմից, անհաստատ հավատավորներին Պողոսը համեմատում է ծառի, խոտի և ծղոտի, այսինքն՝ անցողիկ նյութի հետ, որը վերջին հաշվով կրակով կկործանվի Քրիստոսի գալստյան ժամանակ (Ա Կորնթացիս 3.12-15): Այդ պատճառով կարևոր է միշտ հարց տալ ինքներս մեզ. մենք մեր բոլորն ուժերն ուղղո՞ւմ ենք այն բանին, ինչը գնահատում ենք ամեն բանից առավել, և տալի՞ս ենք Նրան, Ով մեզ համար ամենաթանկարժեքն է:

«Ամեն մեկի գործը պիտի հայտնվի. որ օրը կերևացնի. որովհետև կրակով պիտի հայտնվի, և ամեն մեկի գործը թե ինչպես է, կրակը կփորձի (Ա Կորնթացիս 3.13): Խորհեցե՛ք ձեր կյանքի մասին: Ինչպիսի՞ն են ձեր գործերը:

Երեքշաբթի դեկտեմբերի 9

Բողոքելը, փրփունջն ու աճը

Ե՞րբ տեղի կունենա երկրորդ գալուստը: Ինչո՞ւ ենք մենք *դեռևս* այստեղ: Զարմանալի չէ, որ այսօր՝ 21-րդ դարում, քիչ չեն կաս-

կածողներն ու ծաղրողները: Եկեղեցու պատմության մեջ դա նոր բան չէ: Հրեաների համար ամենամեծ վտանգները բխում էին ոչ թե թշնամիներից, այլ ցեղակիցներից ու իրենց սեփական սրտերից: Սրա նման, Տիրոջ գալուստը մոտենալու հետ «արժե, որ մենք անհամեմատ ավելի շատ վախենանք այն բանից, ինչ ներսում է, քան նրանից, ինչ դրսից է... Ողջունված անհավատությունը, արտահայտված կասկածները, փայփայվող խավարը խրախուսում են չար հրեշտակների ներկայությունը և ճանապարհ են հարթում սատանայի մտադրությունների իրականացման համար» (Է. Ուայթ, Վերջին օրերի իրադարձությունները, 156):

Այս պատճառով Հակոբոս 5.9-ում տրված է նախազգուշացում. «Մի՛ հառաչեք իրար դեմ, եղբայրներ., որ չդատվեք. ահա Դատավորը դռան առջև կանգնած է»: Դուք ե՞րբ եք տրտնջացել կամ բողոքել ուրիշների կամ եկեղեցու դեմ: Հնարավոր է՝ երբեմն դրա համար պատճառներ կան: Դուք ինչպե՞ս եք վարվել այսպիսի իրավիճակում. դրսևորե՞լ եք հեզություն, խոնարհություն ու ներում՝ այնպես, ինչպես ինքներդ եք ներվել Աստծո կողմից (տե՛ս Ղուկաս 7.39-50), թե՞ գործել եք շրջապատող աշխարհի չափանիշներին համապատասխան: Ազնի՛վ եղեք ինքներդ ձեր հանդեպ: _____

_____

_____

_____

Հակոբոսի թղթից ավելի վաղ ընթերցված համարներից կարելի է եզրակացնել, որ այն ժամանակվա հավատավորները լուրջ խնդիրներ ունեին փոխհարաբերությունների մեջ՝ երեսպաշտություն (Հակոբոս 2.1,9), վատ մտքեր (2.4), չարախոսություն (3.10, 4.11), նախանձ (3.14), երկպառակություններ (4.1), բարեկամություն աշխարհի հետ (4.4,13,14): Հակոբոսը մեզ հետևողականորեն ուղղորդում է այս խնդիրների խորանիստ լուծմանը՝ հավատին (Հակոբոս 1.3,6), «սերմանված խոսքին» (Հակոբոս 1.21), «ազատության օրենքին» (Հակոբոս 1.25, 2.12), անաչառությանը և ի վերուստ եկող իմաստությանը (Հակոբոս 3.13,17), շնորհին (Հակոբոս 4.6), ձեռքերի մաքրմանը և սիրտը ուղղելուն (Հակոբոս 4.8): Առաքյալը նաև ընդգծում է. Աստված գործում է մարդու ներսում, և դա կդրսևորվի նրա գործերում (Հակոբոս 2.14-26), օրինակ՝ հոգ տանելով կարիքավորների ու մոռացվածների

մասին (Հակոբոս 1.27), ողորմություն ցուցաբերելով (Հակոբոս 2.13), խաղաղություն, ոչ թե երկպառակություններ ցանելով (Հակոբոս 3.18):

Վերջին հաշվով մենք հաշվետու ենք Աստծուն: Նա, Ում պետք է մենք հաշվետու լինենք, Տերն է ու Դատավորը, Նա յուրաքանչյուրին կհատուցի իր գործերի համաձայն:

Սպասելով Տիրոջ վերադարձին՝ դուք ինչպե՞ս կարող եք ոգեշնչել ու սատարել շրջապատողներին: Ինչո՞ւ է այդ անելը կարևոր:

Չորեքշաբթի դեկտեմբերի 10

Համբերության ու դիմացկունության օրինակներ

Կարդացե՛ք Հակոբոս 5.10,11-ը: Ի՞նչ ընդհանուր բան կա Հոբի ու մարգարեների միջև: Դուք ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է հեղինակը բերել հենց այս օրինակները: Հիշատակված պատմություններից մենք ի՞նչ դաս կարող ենք քաղել անձամբ մեզ համար: _____

_____

_____

_____

_____

Իսրայելի մարգարեները հավատարմորեն քարոզում էին Տիրոջ խոսքը՝ չփոխելով այն և չգնալով փոխզիջման: Եբրայեցիս թուղթը, գովաբանելով մարգարեների հավատարմությունն Աստծո հանդեպ, այսպիսի տեսարան է պատկերում. նրանք «առյուծների բերաններ խցկեցին (Դանիել), կրակի զորություն անցրին (Սեդրաք, Միսաք և Աբեդնագով), սրի բերանից պրծան (Եղիա և Եղիսե)... կապանքների և բանտերի փորձը առան (Երեմիա և Միքիա), քարկոծվեցին (Հովդիայի որդի Զաքարիա), սղոցվեցին (Եսայիա)... սրով սպանված մեռան (Տե՛ս Գ Թագավորաց 19.10)» (Եբրայեցիս 11.33-37): Իհարկե՛, Հոբի տառապանքները նույնպես քաջ հայտնի են, ինչպես և նրա համբերությունը՝ հակառակ կնոջ խորհուրդներին ու «կարեկից» ընկերների դատապարտությանը: Ի՞նչն է հավատի այս և մյուս հերոսներին տարանջատում Աստծո սովորական հետևորդներից: Հակոբոսը մի քանի հատկանիշներ է թվարկում՝ համբերություն, երկայնամտություն (ամեն բանից վեր) հույս և ապավինում Աստծուն:

Հատկանիշներից մեկը *մակրոթիմիա*-ն է, այսինքն՝ երկայնա-

մտությունը կամ համբերատարությունը: Դա մեր կյանքի ճանապարհին հանդիպող (կամ որոնք մեր գլխին թափում է սատանան) դժվար իրադրություններին և փորձություններին դիմանալու ընդունակությունն է: Մարգարեները *երկայնամտորեն* տարան բոլոր տառապանքները Աստծո Խոսքի համար (Հակոբոս 5.10): *Երկայնամտություն* բառը հաճախ է հանդիպում Նոր Կտակարանում՝ ներառյալ հիշատակումը Աբրահամի մասին, ով իր կյանքի երկար տարիների ընթացքում սպասում էր Աստծո խոստման իրականացմանը՝ իրեն որդի պարգևելու առումով (Եբրայեցիս 6.12): Այս բառը նաև բնութագրում է Հիսուսին, Ով համբերությամբ տարավ բոլոր տառապանքները և խաչի մահը (Բ Պետրոս 3.15):

Իսկ դիմացկունությունը (*հյուպոմոնե*) կենտրոնացած է այդ գործընթացի վերջնական նպատակակետի վրա՝ կանխավայելելով դրա ավարտը: Հոբը ներայացված է որպես մարդ, ով ունի այդ որակը: Չնայելով իր բոլոր տառապանքներին՝ նա միշտ ակնկալում էր, որ կարդարացվի (Հոբ 14.13-15, 19.23-27):

Դուք ինչի՞ դեմ եք պայքարում հիմա: Աղոթո՞ւմ եք այն մասին, ինչ դեռևս տեղի չի ունեցել: Դուք հաճա՞խ եք անհուսալիություն զգում: Խորհեցե՛ք մի քանի աստվածաշնչյան հերոսների փորձությունների մասին, պատկերացրե՛ք, թե նրանք երբեմն որքան անօգնական էին զգում իրենց: Դուք ի՞նչ կարող եք սովորել նրանց տառապանքներից, ինչը կօգներ ձեզ՝ անցնել սեփական փորձությունների միջով:

Հինգշաբթի դեկտեմբերի 11

Թափանցիկ, ինչպես արևի լույսը

Կարդացե՛ք Հակոբոս 5.12-ը: Մեկնիչները տարակուսած են, թե ինչու է Հակոբոսն այդպիսի մեծ խնդիր դարձնում այն, որ մարդիկ երդվում են: Անգամ եթե հեղինակի նպատակը լիներ ամեն նմանատիպ խոսքն արգելելը, ինչո՞ւ է նա տվյալ հրամանի նշանակալիությունն ընդգծում «և ամեն բանից առաջ» բառերով, ինչպես եթե դա ամենակարևորը լիներ այն ամենից, ինչի մասին նա խոսել է այս գլխում և անգամ ողջ Թղթում: Մի՞թե դա իսկապես այդքան կարևոր հարց է: Մենք պետք է հիշենք այն մասին, ինչ իմացել ենք Թղթի ուսումնասիրության ժամանակ.Հակոբոսին դուր չի գալիս մակերեսային հավատը

և կրոնական ձևը՝ չնայած նրա մասին բացասական կարծիքներին, որ մենք երբեմն լսում ենք: Հակոբոսն այնքան խոր է կողմնորոշված դեպի Ավետարանը, որ մեզ համար սահմանում է չափանիշներ, որոնք չափազանց բարձր են՝ առանց Աստծո ներող ու ամրապնդող շնորհի ձեռք բերելու համար: Մեր խոսքերը բացահայտում են, թե ինչ կա մեր սրտում. «Որովհետև սրտի ավելացածից կխոսի բերանը» (Մատեթոս 12.34): Հակոբոսի աստվածաբանությունը ներծծված է Հիսուսի մտածողությամբ, Ով հրամայում է. «Բայց ես ասում եմ ձեզ. Բնավ երդում մի՛ անիր, ո՛չ երկնքով, որովհետև նա աթոռ է Աստծո. և ո՛չ երկրով՝ որովհետև պատվանդան է նրա ոտների, և ո՛չ Երուսաղեմով՝ որ քաղաք է մեծ Թագավորի» (Մատթեոս 5.34,35): Ակներևաբար, որոշ մարդիկ անգամ երդվում էին իրենց սեփական գլխով, որպեսզի հաստատեն իրենց խոսքերի արժանահավատությունը (համար 36): Բայց Հիսուսն ասաց, որ այդ ամենը չարիք է. «Բայց ձեր խոսքը լինի, այոն՝ այո, և ոչը՝ ոչ. և սրանից ավելին չարից է» (Մատթեոս 5.37):

Ամեն բան պատկանում է Աստծուն, ներառյալ մեր գլխի յուրաքանչյուր մազը (անգամ եթե դրանք այդքան էլ շատ չեն), այդ պատճառով «մենք ոչինչ չենք կարող տալ՝ որպես գրավական այն բանի, որ մեր խոսքը կկատարվի, քանի որ մենք չունենք ոչինչ մերը... Քրիստոնյայի ցանկացած արարք պետք է թափանցիկ լինի, ինչպես արևի լույսը: Ճշմարտությունը Աստծուց է, իսկ սուտը իր բոլոր ձևերով բխում է սատանայից» (Է. Ուայթ, Հիսուսի լեռան քարոզը, 66, 68):

Իհարկե՛, Քրիստոսը չէր արգելում երդումը դատարանում, քանի որ, երբ քահանայապետը երդվեցրեց Նրան, Նա չհրաժարվեց պատասխանից և անգամ չդատապարտեց բուն գործընթացը՝ չնայած ընդունված դատավարությունից մի ամբողջ շարք շեղումներին (Մատթևոս 26.63,64): Երբ մենք ասում ենք ճշմարտությունը, անհրաժեշտ է հիշել. առաջինն ու ամենագլխավորն է՝ մեզ հազվադեպ է հայտնի լինում *ողջ* ճշմարտությունը՝ անգամ հենց մեր մասին, այդ պատճառով մենք պետք է խոնարհություն դրսևորենք: Երկրորդ՝ երբ մենք ասում ենք ճշմարտությունը, այն միշտ պետք է ասել սիրով՝ ունկնդիրներին խրատելու համար:

Կարդացե՛ք Եփեսացիս 4.15,29 և Կողոսացիս 4.6-ը: Աղոթքով խորհեցե՛ք այս համարների մեծազոր լուրի մասին: Խորհեցե՛ք, թե որքանով այլ (և լավագույն) կլիներ մեր կյանքը, եթե դուք, Աստծո ողորմությամբ, խստորեն հետևեիք այդ հրահանգներին:

Ուրբաթ **դեկտեմբերի 12**

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Մարգարեներ և թագավորներ» գրքից կարդացե՛ք «Իսրայելից մինչև Քորեբ» (155-166), «Ի՞նչ ես անում այստեղ» (167-176), «Եղիայի հոգով ու զորությամբ» (177-189) գլուխները:

«Համբերությամբ սպասել ու հավատալ, երբ ամեն բան մռայլ է թվում՝ ահա այն դասը, որ պետք է սովորեն Աստծո գործի ղեկավարները: Երկինքը նրանց չի լքի աղետի օրը: Ոչինչ չի թվում այնքան անհաղթելի, որքան հոգին, որ գիտակցում է իր ոչնչությունն ու ապավինում է Աստծուն...

Փորձությունները կգան, բայց դու առա՛ջ գնա: Դա կամրապնդի քո հավատը և քեզ կնախապատրաստի ծառայությանը: Սուրբ Գրքի պատմությունները գրված են ոչ թե պարզապես այն բանի համար, որ մենք կարդանք ու հիանանք, այլ որպեսզի այն նույն հավատը, որ գործում էր Աստծո ծառաների մեջ հին ժամանակներում, կարողանա գործել մեր մեջ» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 174, 175):

Հարցեր քննարկման համար

1. Մենք ամենքս գիտենք ցորենի և որոմների մասին առակը, որոնք միասին աճում են մինչև հունձքի ժամանակը (Մատթեոս 13.24-30): Սա ի՞նչ է նշանակում եկեղեցական կարգապահության եզրույթներով: Ո՞րն է առակի նշանակությունը՝ մեր շարքերում բացահայտ ապստամբության կամ ուրացության քննարկման համատեքստում: Մենք պետք է պարզապես նստենք և ոչինչ չանե՞նք՝ ենթադրելով, որ այդ խնդիրը կլուծվի Տիրոջ գալստյան ժամանակ: Իհարկե՝ ո՛չ: Քրիստոսի առակի և վաղ եկեղեցում կարգապահության օրինակների (օրինակ՝ Կորնթոսի համայնքում, Գաղատիայում) լույսի ներքո մենք ինչպե՞ս պետք է վարվենք «որոմների» հետ, հատկապես՝ նրանց, ում միակ նպատակն է խեղդել «ցորենին»:
2. Մեզ ամենքիս գայթակղություններ ու փորձություններ են պատահում: Աստվածաշնչից ու Էլեն Ուայթի գրքերից ո՞ր խոստումներն են ձեզ համար որպես մխիթարություն ծառայել և օգնել հաստատ

մնալու հավատքի մեջ: Ո՞ր աստվածաշնչյան կերպարներն են ձեզ համար հատուկ նշանակալի եղել դժվարությունների ժամանակ:

3. Հակոբոսը մեզ խորհուրդ է տալիս. «Մի՛ հառաչեք իրար դեմ, եղբայրնե՛ր» (5.9): Բայց չէ՞ որ մարդկանց, անգամ քրիստոնյանե-րի գործողությունները կարող են անհանգստացնել ու գրգռել մեզ: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել սիրել, ներել, համբերել ու վեր կանգնել շատ կենսական «մանրուքներից», որոնք կարող են մեզ հուսահատության մեջ նետել, դարձնել դյուրագրգիռ ու վատ վկաներ:

ԴԱՍ 12 ԱՂՈԹՔԸ, ԱՊԱՔԻՆՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

դեկտեմբերի 13-19

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հակոբոս 5.13-20, Ա Հովհաննես 5.14, Ա Կորնթացիս 15.54, Եբրայեցիս 12.12,13, Հովհաննես 8.43-45, Առակաց 10.12:

Հիշելու համարը.

«Իրար խոստովանեցե՛ք ձեր հանցանքները, և իրար համար աղոթք արեք, որ բժշկվեք. շատ զորավոր է արդարի աղոթքը ներգործելով» (Հակոբոս 5.16):

Արդկանց հմայում է ամեն գերբնականն ու մոգականը: Հաճախ նրանց հրապուրում է տեսարժանությունը, նրանք դրդողը հետաքրքրասիրությունն է: Այդ պատճառով երբ Հիսուսին խնդրում էին հրաշք գործել՝ պարզապես հանուն զվարճության (Ղուկաս 23.8,9), Իր մեսիականությունը հաստատելու (Մատթեոս 12.38-41) կամ անգամ Իր սեփական կարիքների համար (Մատթեոս 4.2-4), նա հրաժարվում էր: Հոգին, որով Հիսուսը սովորեցնում էր իշխանություն ունեցողի նման և ապաքինման հրաշքներ էր գործում, սոսկ զորություն չէ, որը կարելի է օգտագործել. հակառակը, մենք պետք է գործիք լինենք Նրա ձեռքերում: Աստված ուրախությամբ կբժշկեր ամեն հիվանդի, բայց Նա շահագրգռված է ավելի հուսալի, անանց ապաքինմամբ:

Հենց այս համատեքստում մենք կդիտարկենք որոշ կարևոր հարցեր. ինչպես պետք է հասկանալ Հակոբոսի թղթի խոսքերը հիվանդների ապաքինման մասին, կա՞ արդյոք փոխադարձ կապ ապաքինման ու ներման միջև, որ պարգևվում է աղոթքին ի պատասխան: Եղիան ներկայացված է որպես աղոթքի կարևոր օրինակ՝ ուրացության ժամանակ: Ի՞նչ կարող ենք սովորել մենք նրա՝ աղոթքի կյանքից և հրեաներին դեպի Աստծուն ու դեպի ճշմարիտ երկրպագությանը բերելու ուղղությամբ կատարած աշխատանքից:

Կարևոր քրիստոնեական գործիքներ

Կարդացե՛ք Հակոբոս 5.13-ը: Ի՞նչ հետաքրքիր համադրություն է անում առաքյալը: Մենք ինչպե՞ս ենք կիրառում այս ցուցումները մեր փորձառությունների մեջ:_____

_____

_____

Խոսելով տարբեր վիճակների (տառապանքի և ուրախության) մասին՝ Հակոբոսը դրանք կապում է աղոթքի և փառաբանության հետ. աղոթեցե՛ք, երբ տառապում եք, փառաբանեցե՛ք, երբ ուրախ եք: Սակայն այս երկու գործողությունները շատ չեն տարբերվում միմյանցից, քանի որ աստվածաշնչյան շատ փառաբանական սաղմոսներ նաև աղոթքներ են: Հակոբոսը նույնպես իր Թուղթն սկսում է՝ համոզելով ընթերցողներին. «Բոլորովին ուրախություն համարեցեք, եղբայրներս, երբ որ կերպ-կերպ փորձանքների մեջ ընկնեք՝ գիտենալով, որ ձեր հավատքի փորձառությունը համբերություն է գործում» (Հակոբոս 1.2,3): Աղոթքի ժամանակն ու փառաբանության ժամանակը կարող են ավելի ուժեղ միահյուսված լինել, քան մենք սովորաբար կարծում ենք:

«Նեղություն է քաշում» արտահայտությունը Հակոբոս 5.13-ում ծագում է այն նույն արմատից, ինչ և Հակոբոս 5.10-ի բառը, որտեղ խոսվում էր մարգարեների տառապանքների մասին: Այն նշանակում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր տառապանքներ, «առաջին հերթին և ավելի շատ՝ պատերազմի վտանգների և դժվարությունների պատճառով» (Ceslas Spicq, Theological Lexicon of the New Testament, vol. 2, 239), ինչպես նաև՝ հոգնեցուցիչ ֆիզիկական աշխատանքի և թանկ արժեցող ջանքերի պատճառով: Այդ բառն օգտագործվում է նաև Բ Տիմոթեոս 2.9 և 4.5-ում՝ նկարագրելու համար առաքյալների դժվարին աշխատանքը, որը չի կարող կանգնեցվել ոչ մի դժվարությամբ և տառապանքով» (Theological Lexicon of the New Testament, vol. 2, 240): Որպես քրիստոնյաներ՝ մենք բնազդաբար դիմում ենք Աստծուն, երբ վրա են հասնում դժվարությունները: Աղոթքը հատկապես կարևոր է դժվար ժամանակներում, բայց երգեցողությունը կամ երաժշտական գործիքով հոգևոր երաժշտության կատարումը (օգտագործված է *պսալլետո* բառը) նույնպես օգնում է:

«Երգեցողությունը երկրպագության գործողություն է նույն չափով, որքան և աղոթքը: Շատ երգեր, ըստ էության, աղոթք են» (Է. Ուայթ, «Դաստիարակություն», 168): Մեզանից շատերին ճնշվածության կամ միայնության պահերին ոգևորել են մտաբերված օրհներգի բառերը: Մեր մեջ կան նեղություն քաշողներ և քաջալերանքի կարիք ունեցողներ. աղոթքով ու երգեցողությամբ հագեցած մեր այցելությունը կուրախացնի նրանց: «Ուրախացողների հետ ուրախացե՛ք, և լացողների հետ լացե՛ք» (Հռոմեացիս 12.15): Դա կարող է մեզ էլ քաջալերել այնպես, ինչպես ուրիշ ոչինչ:

Սաղմոսների գիրքը աղոթքների ու երգերի գանձարան է, որոնք ընդունակ են ոգևորել, քաջալերել ու ուղղորդել, երբ մենք չգիտենք, թե ում դիմենք օգնության համար:

Մենք ամենքս գիտենք, որ տառապանքները կարող են մեզ մոտեցնել Տիրոջը, մեզ աղոթքի դրդել: Ի՞նչ հոգևոր վտանգներ են սպառնում հավատավորին, երբ նրա կյանքում ամեն բան լավ է: Ինչո՞ւ հենց այդ ժամանակ այդքան կարևոր է փառաբանությունը: Ինչի՞ մասին է այն անդադար հիշեցնում մեզ:

Երկուշաբթի դեկտեմբերի15

Աղոթք հիվանդների համար

Կարդացե՛ք Հակոբոս 5.14,15-ը: Ի՞նչ կարևոր տարրեր է ներկայացնում Հակոբոսը հիվանդների օծության վերաբերյալ, և ի՞նչ նշանակալի հոգևոր բաղադրիչ է բովանդակվում այս համարներում: _____

_____

_____

Այն փաստը, որ հիվանդ մարդը եկեղեցու երեցներին հրավիրում է յուղով օծելու իրեն «Տիրոջ անունով» և աղոթելու, մեկ մարդու հոգևոր ցանկությունն է արտահայտում և համընդհանուր համոզմունքը, որ ապաքինման համար անհրաժեշտ է աստվածային միջամտությունը (Մարկոս 6.13): Մեղքերի ներման հիշատակությունը վկայում է, որ Աստված կրոնական ծեսի միջոցով ֆիզիկապես չի վերականգնում մարդուն, ով միևնույն ժամանակ չի ցանկանում հոգևոր ապաքինում: «Այն հիվանդներին, ովքեր ցանկանում են, որ աղոթեն իրենց առողջության վերականգնման համար, պետք է բացատրել, որ Աստծո

Օրենքի խախտումը՝ ինչպես ֆիզիկապես, այնպել էլ հոգևորապես, մեղք է, և Աստծո ներումն ստանալու համար հարկավոր է խոստովանել և թողնել մեղքը» (Է. Ուայթ, Ապաքինման ծառայություն, 228):

Աստվածային միջամտության խնդրանքը և եկեղեցու երեցներին դիմելը ենթադրում է, որ հիվանդությունը զրկում է գործունակությունից և, հնարավոր է, ծեսը հարկավոր է կատարել անհապաղ՝ կապված եկեղեցական կանոնավոր հավաքի հետ: Այստեղ, երբ խոսքը վերաբերում է հիվանդներին, երկու տարբեր հունարեն բառ է օգտագործվում՝ *աստենեո* 14-րդ համարում (այն օգտագործվում է նաև Տաբիթայի դեպքում, ով «հվանդացավ և մեռավ»՝ Գործք առաքելոց 9.37), երկրորդը՝ *կամնո* 15-րդ համարում, այն վերաբերում է հիմնականում հիվանդներին, բայց նաև՝ մահացողներին: Տվյալ համատեքստում խոսքը վերաբերում է ֆիզիկապես հյուծված կամ կյանքից հեռացող մարդուն: Հրաշալի ապաքինումը կարող է իրականանալ՝ ի պատասխան «հավատքի աղոթքի», որը ենթադրում է հնազանդություն Աստծո կամքին, ինչպիսին էլ որ այն լինի (Ա Հովհաննես 5.14), այսինքն՝ տեղի կունենա ապաքինումը, թե ո՛չ: Սակայն հիշատակումն այն մասին, որ Տերը «վեր կկացնի» (հունարեն *էգեյրո*՝ բարձրացնել, հարություն տալ) հիվանդին (համեմատե՛ք Հակոբոս 5.20-ում «կփրկի մահից» արտահայտության հետ) անսխալ կերպով մատնացույց է անում հարությունը՝ որպես միակ լիակատար ապաքինում, երբ «այս ապականացուն անապականությունը կհագնի, և այս մահկանացուն՝ անմահությունը» (Ա Կորնթացիս 15.54):

Մեզանից շատերը յուղով օծման դեպքեր գիտեն, կամ էլ իրենք են մասնակցել այդ արարողությանը, երբ հիվանդները չեն ապաքինվել, այլ մահացել են: Ինչո՞ւ է այդ դեպքում այս համարներում ենթադրվող հարությունը մեր միակ երաշխիքը:

Երեքշաբթի դեկտեմբերի 16

Հոգու ապաքինումը

Հոգու ապաքինումն է՛լ ավելի կարևոր է, քան մարմնի ապաքինումը: Ի վերջո, մեր նպատակն այն չէ, որ մարդկանց է՛լ ավելի առողջ մեղավորներ դարձնենք, այլ այն, որ նրանց ցույց տանք հավիտենական կյանքը Հիսուսի մեջ: Այդ պատճառով էլ հնարավոր է, որ այս շաբաթվա մեր ուսումնասիրելիք հատվածում բացարձակ հղում է

կատարվում ապաքինմանը, որը հեռու է 13-15-րդ համարներում նկարագրված հիպնոսային իրավիճակներից: Այն բառը, որ այստեղ նշանակում է ապաքինում (հաօմայ), կարող է վերաբերել ապաքինմանը, որը դուրս է գալիս ֆիզիկական հիվանդությունների սահմաններից (տե՛ս, օրինակ, Մատթեոս 13.15-ը): 15-րդ համարում արդեն ակնարկելով ապաքինման առավել լայն ըմբռնումը՝ Հակոբոսը կապակցում է հիվանդությունն ու մեղքը: Սա չի նշանակում, որ ցանկացած հիվանդություն կարելի է կապել որոշակի մեղքի հետ, բայց հիվանդությունն ու մեղքը այն բանի արդյունքն են, որ մենք ամենքս մեղավորներ ենք:

Կարդացե՛ք Մարկոս 2.1-12-ը (համեմատե՛ք Եբրայեցիս 12.12,13, Ա Պետրոս 2.24,25-ի հետ): Ի՞նչ ապաքինման մասին է խոսվում այս հատվածներում,և ո՞րն է ապաքինման հիմքը: _____

_____

_____

Հիսուսի հաղեպ հավատն ապաքինում է բերում հոգևոր թուլություններից և մեղքից: Որոշակի իմաստով յուրաքանչյուր ապաքինում, որ կատարվում էր Հիսուսի միջոցով, առակ էր, որի նպատակն էր՝ մարդկանց ուշադրությունը հրավիրել իրենց առավել խորը կարիքի՝ փրկության վրա: Մարկոս 2-րդ գլխում նկարագրված դեպքի անդամալույծին առաջին հերթին անհանգստացնում էր հոգևոր ապաքինումը, այդ պատճառով Հիսուսն անմիջապես հավաստիացրեց նրան մեղքերի ներման մասին: «Նա ոչ այնքան ֆիզիկական ապաքինում էր ցանկանում, որքան ազատագրում մեղքի բեռից: Եթե տեսներ Հիսուսին և հավաստիացում ստանար ներման ու Երկնքի հետ հաշտության մասին, նա պատրաստ էր մահանալ կամ ապրել՝ համաձայն Աստծո կամքի» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 267): Այն ժամանակ, երբ Աստծո բժիշկներն այսօր պետք է բոլոր մատչելի բուժամիջոցները կիրառեն հիվանդության բուժման համար, անհրաժեշտ է նաև ջանքեր գործադրել՝ մարդուն ապաքինելու ամբողջությամբ՝ ոչ միայն ժամանակավոր կյանքի, այլ նաև հավերժության համար:

Ապաքինումն իրենից ներկայացնում է փոխհարաբերությունների ապաքինում, այդ պատճառով առաքյալը կոչ է անում մեզ. «Իրար խոստովանեցե՛ք ձեր հանցանքները» (Հակոբոս 5.16)՝ նկատի ունենալով նրանց, ում հետ մենք սխալ ենք վարվել (Մատթեոս 18.15,21,22): Այսինքն՝ եթե դուք նեղացրել եք ինչ-որ մեկին կամ ինչ-որ մեկի հետ վատ եք վարվել, նրանց խոստովանե՛ք դա: Այդ ժամանակ ձեզ վրա

կհանգչի Աստծո օրհնությունը, որովհետև սեփական մեղքն ընդունելը ներառում է սեփական «ես»-ի մահը, միայն այդ մահվան միջոցով Քրիստոսը կարող է բնակվել ձեր մեջ:

Չորեքշաբթի դեկտեմբերի17

Աղոթքի օրինակներ

Կարդացե՛ք Հակոբոս 5.17,18-ը: Աղոթքի մասին ի՞նչ դաս կարող ենք քաղել մենք Եղիայի օրինակից: Դա ինչպե՞ս է կապված ապաքինման, ներման ու վերականգնման հետ: _____

_____

_____

_____

Բերված համարները պատկերում են Հակոբոս 5.16-ում տրված հավաստիացումը. «Շատ զորավոր է արդարի աղոթքը ներգործելով»: Եղիան «արդար» մարդ էր, նա անգամ վերցվեց երկինք, սակայն նա գերմարդ չէր: Նա այն նույն զգացմունքներն ուներ, նույն ապրումները, ինչ և մենք: Այն փաստը, որ Աստված լսում էր նրա աղոթքները, վկայում է այն մասին, որ մեր աղոթները նույնպես կլսվեն: Հակոբոսն ասում է, որ Եղիան «ջերմեռանդ աղոթեց» (անգլերեն տարբերակում՝ «նախանձախնդրորեն աղոթեց»), որպեսզի անձրև չգա (մանրամասն, որ հիշատակված չէ Հին Կտակարանում): Ակնհայտորեն նա խնդրում էր Երկրորդ Օրինաց 11.13-17-ում գրի առնված խոստման իրականացման մասին (Հակոբոս 5.18-ում հղում կա այդ համարներին):

Համաձայն մարգարեության,որ գրի է առնված Երկրորդ Օրինաց գրքում, Իսրայելի երկրպագությունը Բահաղին՝ որոտի ու կայծակի աստծուն, չէր կարող անհետևանք անցնել: Թեև մեզ հայտնի չէ, թե որքան ժամանակ է աղոթել Եղիան՝ նախքան պատասխան ստանալը, նրա խնդրանքները հիմնված էին Աստծո Խոսքի մանրակրկիտ ուսումնասիրության և դրա մասին մտորումների վրա՝ այդ ժամանակվա իրադարձությունների լույսի ներքո: Հնարավոր է՝ իր աղոթքում նա մեջբերում էր Երկրորդ Օրինաց գրքի մարգարեությունը, ինչպես և Դանիելն էր աղոթում Երուսաղեմի մասին (տե՛ս Դանիել 9.2,3-ը): Մեր աղոթքները նույնպես առավել արդյունավետ կդառնան, եթե դրանց նախորդեն մտորումները հանգամանքների մասին՝ Աստծո Խոսքի լույսի ներքո:

Երեքուկես տարվա երաշտի ժամանակահատվածը (դրա մասին հիշատակված է նաև Ղուկաս 4.25-ում) փորձության կարևոր ժամանակ է Սուրբ Գրքում (Հիսուսի ծառայության կես յոթնյակ կամ երեքուկես տարի մարգարեական ժամանակահատվածը (տե՛ս Դանիել 9.27-ը), ինչպես նաև՝ ժամանակ, ժամանակներ և կես ժամանակ ժամանակահատվածը ուրացությունն է քրիստոնեության մեջ (Դանիել 7.25, Հայտնություն 12.14): Այդ ժամանակահատվածի վերջում Աստված օգտագործեց Եղիային, որպեսզի սկսի վերածննդի ու վերափոխման աշխատանքը, որ դրդի հրեա ժողովրդին՝ գիտակցելու սեփական ուրացության խորությունը: Այդ աշխատանքը համարվում էր նախակերպարային ծառայություն ինչպես Հովհաննես Մկրտչի համար, որ նա պետք է կատարեր առաջին դարի Իսրայելի համար, այլ նաև ծառայություն, որ Աստված այսօր վստահել է մնացորդ եկեղեցուն, որպեսզի մարդկանց նախապատրաստի Քրիստոսի երկրորդ գալստյանը (տե՛ս Մաղաքիա 4.5,6, Մատթեոս 11.13,14):

Որպես եկեղեցի՝ մենք ձգտում ենք վերածննդի ու վերափոխման: Բայց այն պետք է սկսվի մեր կյանքում, հենց մեր մեջ՝ ամենօրյա մակարդակում: Ձեր կյանքի ուղղվածությունը, և ձեր վերջնական ճակատագիրը վճռող ի՞նչ որոշումներ կարող եք միայն ընդունել դուք:

Հինգշաբթի դեկտեմբերի18

Վերականգնումն ու ներումը

Աստծո Հոգին աշխատում էր Եղիայի միջոցով, որպեսզի վերականգնի Իսրայելի և Աստծո փոխհարաբերությունները: Բայց Եղիայի ծառայության մեծ մասն անցնում էր Կարմեղոս լեռան վրա: Դա միայն սկի՛զբն էր: Նա իր աշխատանքը կատարում էր փոքրիկ բնակավայրերում ու տներում և հոգևոր առաջնորդներին սովորեցնում էր մարգարեական դպրոցներում, թե ինչպես աշխատել վերածննդի ու բարեփոխման գործում:

Կարդացե՛ք Հակոբոս 5.19,20-ը: Այստեղ նկարագրված աշխատանքն ինչպե՞ս է համեմատելի այն աշխատանքի հետ, որ կատարում էին Եղիան, Հովհաննես Մկրտիչը և ուրիշներ: Տե՛ս Ղուկաս 1.16,17, Գործք առաքելոց 3.19-ը:

Մենք հաճախ մոռանում ենք, թե ինչպես տարիներով Եղիան նրբորեն ու համբերատար կերպով իրականացնում էր իր ծառայությունը: Հովհաննես Մկրտչի աշխատանքը նաև այն էր, որ մարդկանց կանչի դեպի ճշմարտություն, որպեսզի մարդկանց վերադարձնի ճշմարտությանը, նրանց մեջ արթնացնի ապաշխարելու և մկրտվելու ցանկություն: Հիսուսը նման խոսքերով արտահայտեց նաև Իր ծառայությունը. մարդկանց ուղղորդել մոլորությունից դեպի ճշմարտություն (տե՛ս Հովհաննես 8.43-45-ը):

Հակոբոս 5.19,20-ում նկարագրված երևակայական իրավիճակում հունարեն բնագրում օգտագործվում է պայմանական մի կառույց, որից հետևում է՝ պարտադիր չէ, որ ուրացությունը տեղի ունենա, սակայն հնարավոր է: Ճշմարտությունից խուսափելը նշանակում է հեռանալ ոչ միայն ուսմունքից, այլ նաև կենսակերպից, որովհետև շատ հաճախ առաջինը տանում է երկրորդին: Մենք սկսում ենք կասկածի ենթարկել մեր հավատը, ինչը հանգեցնում է երկիմաստության վարքի մեջ, և վերջին հաշվով տանում է ուրացության: «Մեղավորին իր մոլորության ճանապարհից դարձնողը մի հոգի կփրկի մահից» (Հակոբոս 5.20): Այսպիսով, Հակոբոսը եկեղեցու իր եղբայրներին կոչ է անում կատարել Եղիայի աշխատանքին նման աշխատանք՝ մարդկանց վերադարձնել Աստծո մոտ:

Այս աշխատանքը բավականին համբերություն, կարեկցանք, քնքշություն և խոնարհություն է պահանջում: «Եղբայրնե՛ր, եթե մեկը հանկարծ բռնվի մի հանցանքով, դուք, որ հոգևոր եք, այնպիսիին հաստատե՛ք հեզության հոգով, զգուշացի՛ր քո անձին, որ դու էլ չփորձվես» (Գաղատացիս 6.1): Եղիայի աշխատանքը՝ սրտերը դեպի Աստված ու Նրա ժողովուրդը դարձնելն է, և ոչ թե դրանք հետ դարձնելը: Հաճախ մարդը գիտակցում է իր մեղքը և կարիք չունի, որ մատնացույց անեն այն: Նա ավելի շատ կարիք ունի ներման, որ Հիսուսը հայտնեց ու պարգևեց Իր մահով: Հոգիների փրկությունը մահից հնարավոր է միայն մեղքերը «ծածկելու» միջոցով, մեր կյանքում Ավետարանն ընդունելով և ողորմության գործիքներ դառնալու պատրաստակամությամբ (Առակաց 10.12):

Խորհեցե՛ք այն մարդու մասին, ով իսկապես վատ է վարվել և գիտի այդ մասին: Դուք ի՞նչ կարող եք անել կամ ասել՝ օգնելու համար, որ այդ մարդը վերադառնա Տիրոջը:

Ուրբաթ դեկտեմբերի19

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Ապաքինման ծառայություն» գրքից կարդացե՛ք «Աղոթք հիվանդների համար» (225-233) գլուխը, «Մեծ պայքար» գրքից՝ «Սատանայի որոգայթները» (518-523) գլուխները:

«Քրիստոսը մեզ խնդրում է մեկ ամբողջություն դառնալ Իր հետ՝ հանուն մարդկության փրկության: «Ձրի առել եք, - ասում է Նա, - ձրի տվեք» (Մատթեոս 10.8): Մեղքը մեծագույն չարիքն է բոլոր չարիքներից, և մենք պետք է խղճանք մեղավորին ու օգնենք նրան: Շատ մոլորյալներ գիտակցում են իրենց ամոթն ու անմտությունը: Նրանք քաջալերության խոսքերի են ծարավի: Նրանց աչքերի առջև միայն իրենց սխալներն ու մոլորություններն են, նրանք հուսահատության եզրին են: Մենք չպետք է անտեսենք այդ հոգիներին:

Հավատի ու խրախուսանքի խոսքե՛ր ասացեք, որոնք ապաքինող բալասան կլինեն վիրավոր ու խորտակված սրտերի համար» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 504):

Հարցեր քննարկման համար

1. Մտաբերե՛ք այն ժամանակը, երբ դուք իսկապես սխալներ եք գործել՝ սեփական մեղքով ցավ պատճառելով ձեզ, շրջապատողներին ու Տիրոջը: Որքանո՞վ էր կարևոր ձեզ համար՝ ձեր կողքին ունենալ մարդիկ, ովքեր, չքաջալերելով ձեր գործողությունները, փորձել են սատարել ու քաջալերել ձեզ: Ի՞նչ եք ավելի լավ մտապահել այդ փորձառություններից, և այդ հիշողություններն ինչպե՞ս են օգնում ձեզ՝ նույն կերպ վերաբերվելու սխալվողների հանդեպ:
2. Աղոթքով ուշադիր կարդացե՛ք Հակոբոս 5.16-ը: Այս համարում ի՞նչ կարևոր հոգևոր դասեր են բովանդակվում մեզ համար: Ի՞նչ են ասում այդ դասերը աղոթքի զորության և մեր հոգևոր կյանքում նրա կարևորության մասին: Թեև աղոթքը կարող է և պետք է միանգամայն անձնական ապրում լինի, դասարանում խոսեցե՛ք այն մասին, թե ինչ է անում աղոթքը ձեզ համար, ինչպես եք աղոթքների պատասխաններ ստանում և ինչպես եք սովորել վստահել Աստծուն, երբ աղոթքին ցանկալի պատասխան չենք ստանում: Դուք ի՞նչ կասեիք «արդյունավետ, պոռթկուն աղոթքի» ամենակարևոր գործնական օգուտի մասին:

ԴԱՍ 13

դեկտեմբերի 20-26

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Եբրայեցիս 4.2, Սաղմոս 130.3,4, Ղուկաս 15.11-32, Հռոմեացիս 3.24-26, Եբրայեցիս 10.1-4, Հայտնություն 14.12:

Հիշելու համարը.

«Հեռվից է երևացել ինձ Տերը, թե՝ Հավիտենական սիրով սիրել եմ քեզ, դրա համար քաշեցի քեզ իմ ողորմությունով» (Երեմիա 31.3):

Ուսումնասիրելով Հակոբոսի թուղթը՝ մենք Ավետարանի հետ կապված մի շարք հարցեր քննարկեցինք և որոշ համեմատություններ անցկացրեցինք այլ աստվածաշնչյան հեղինակների հետ: Միշտ չէ, որ հեշտ է հստակ պարզել, թե Հակոբոսի խոսքերն ինչպես են համապատասխանում Սուրբ Գրքի մյուս մասերին, հատկապես Ավետարանին, սակայն, ինչպես մենք տեսանք, համապատասխանում են: Եվ դա շատ կարևոր է, որովհետև Ավետարանը մեզ՝ վերջին օրերում ապրողներիս տրված՝ «հավիտենական Ավետարանը... ամեն ազգի և ցեղի և լեզվի և ժողովրդի» (Հայտնություն 14.6) քարոզելու հանձնարարության հիմքն է:

Այս վերջին շաբաթվա ընթացքում մենք կկենտրոնանանք «հավիտենական Ավետարանի» հիմնարար հարցերի վրա՝ հավատով փրկության, ուսմունք, որ շարադրված է ողջ Աստվածաշնչում, ներառյալ Հակոբոսի թուղթը:

Անչափ կարևոր է հիշել, որ Աստվածաշունչը չի հակասում ինքն իրեն, հատկապես այնպիսի հիմնարար հարցում, ինչպիսին փրկությունն է: Եռամսյակն ավարտելով Ավետարանի (Բարի լուրի) դիտարկումով՝ մենք կարող ենք տեսնել, թե ինչպես է Հակոբոսի թուղթը համապատասխանում Աստծո՝ փրկագնման այդ ընդարձակ ծրագրին:

Ավետարանը Հին Կտակարանում

«Որովհետև մենք էլ ենք ավետիքն առել, ինչպես և նրանք, բայց նրանց օգուտ չբերեց ավետիքի քարոզության խոսքը, որովհետև չխառնվեց հավատի հետ լսողների մեջ» (Եբրայեցիս 4.2):

Այս համարում մի ապշեցուցիչ միտք կա: Նախ, Ավետարանը ոչ թե պարզապես «Բարի լուր» է, այլ Հին Կտարականում քարոզված Բարի լուրը: Երկրորդ, հինկտակարանյան ժամանակներում Ավետարանը քարոզվում էր նույն կերպ, ինչ և նորկտակարանյան ժամանակներում: Ոչ մի ակնարկ չկա՝ բուն լուրի մեջ որևէ տարբերության մասին: Այդ պատճառով խնդիրը ոչ թե խոսքն էր, այլ այն, թե ինչպես էին այն լսում: Այսօր նույնպես տարբեր մարդիկ տարբեր կերպ են լսում միևնույն ավետարանյան լուրը: Որքա՜ն կարևոր է լիովին վստահել Խոսքի ուսմունքին, որպեսզի Ավետարանի քարոզի ժամանակ մենք այն ճիշտ լսենք:

Կարդացե՛ք բերված համարները և ամփոփե՛ք դրանցից յուրաքանչյուրի մեջ բովանդակվող ավետարանի լուրը:

Ծննդոց 3.15 _____

Ելից 19.4-6 _____

Սաղմոս 130.3,4 _____

Եսայիա 53.4-11 _____

Երեմիա 31.31-34 _____

Դուք նկատեցի՞ք ընդհանուր գիծը: Աստված միջամտում է, որպեսզի փրկի մեզ. նա ներում է մեր մեղքերը և մեր մեջ «թշնամանք» է դնում մեղքի հանդեպ, որպեսզի մենք կարողանանք «ցանկանալ և լսել» (Եսայիա 1.19): Մեկը (Հիսուսը) մահացավ շատերի համար, տարավ նրանց (մեր) անօրենությունները և արդարացնում է անարժաններին: Նոր Կտակարանը Հնից տարբերվում է նրանով, որ Օրենքը գրված է սրտերում, և մեղքերն արդեն չեն հիշվում (Եբրայեցիս 8.10-12): Մի խոսքով, ներումն ու նոր ծնունդը յուրօրինակ փաթեթ է. արդարացումն ու սրբագործումը իրենցից ներկայացնում են մեղքի հիմնախնդրի լուծումը: Բերված համարները կարելի է լրացնել բազում ուրիշ համարներով, որովհետև ողջ Աստվածաշնչով անցնում է այսպիսի մի լուր. չնայած մեր մեղքին՝ Աստված սիրում է մեզ և արել է ամեն հնարավորը, որպեսզի մեզ փրկի մեղքից:

Ինչպե՞ս կարող ենք մենք՝ օրենքը պահելու կարևորությանը հավատացող մարդիկս, մեզ պաշտպանել այն սխալ պատկերացումից, թե օրենքը պահելն ադրարացնում է մեզ: Ինչո՞ւ միշտ չէ, որ դա հեշտ է:

Երկուշաբթի դեկտեմբերի 22

Մարմին դարձած Ավետարանը

Որոշ մարդկանց համար դժվար է Ավետարանը տեսնել Ավետարաններում: Հիսուսի ուսմունքը կարող է օրինամոլություն թվալ, սակայն միայն այն դեպքում, եթե մենք չենք լսում պատմության մնացած մասը: Հիսուսի ժամանակներում Իսրայելի բնակիչների մեծամասնությունը իրեն համարում էր Աստծո հավատարիմ հետևորդը: Նրանք աջակցում էին տաճարի ծառայությանը՝ վճարելով պահանջվող հարկը և բերելով նշանակված զոհաբերությունները: Նրանք ձեռնպահ էին մնում անմաքուր սնունդ ընդունելուց, կատարում էին թլփատության ծեսը, պահում էին նշանակված օրերն ու շաբաթը և առհասարակ ջանում էին պահել օրենքը, ինչպես իրենց սովորեցրել էին կրոնական առաջնորդները: Բայց եկավ Հովհաննեսը՝ կոչ անելով ապաշխարության և մկրտության: Ավելին, Հիսուսը խոսում էր նոր ծնունդի անհրաժեշտության մասին (Հովհաննես 3.3,5) և ընդգծեց. «Եթե չավելանա ձեր արդարությունն ավելի, քան դպիրներինը և փարիսեցիներինը, բնավ չեք մտնի երկնքի արքայությունը» (Մատթեոս 5.20): Այլ խոսքերով, Հիսուսն ասում է. «Ձեզ հարկավոր է այն, ինչ դուք չունեք: Ձեր գործերը ձեզ չեն փրկի»:

Կարդացե՛ք Ղուկաս 15.11-32-ը: Այս առակներն ինչպե՞ս են ներկայացնում Ավետարանը: _____

_____

_____

Բերված առաջին առակում պատմվում է այն մասին, որ որդին կորսված է, բայց չի գիտակցում դա: Ժամանակի ընթացքում նա սկսում է նորովի վերաբերվել հոր սիրուն և վերադառնալու ուժգին ցանկություն է ապրում: Նրա հպարտությունն անցել էր: Հուսալով, որ իրեն կընդունեն որպես ծառա՝ նա ապշում է, թե ինչպիսի պատիվներով ու մեծահոգությամբ է ընդունում իրեն հայրը: Փոխհարաբերությունները ոչ թե պարզապես վերականգնված են, դրանք վերափոխված են: Ակնկալիքների նույնպիսի անհամապատասխանություն մենք գտնում

ենք երկրորդ առակում: Աստված չնայեց «արդար» փարիսեցուն, իսկ «մեղավոր» մաքսավորին ոչ միայն ընդունեց, այլև արդարացրեց, ներեց ու ազատեց մեղքից:

Երկու պատմություններն էլ օգնում են մեզ՝ առավել հստակ տեսնելու Աստծուն՝ որպես ամբարիշտներին արդարացնող Հոր: Հիսուսը խոսում է խաղողի որթից քամված հյութի մասին. «Սա է իմ արյունը նոր ուխտի, որ թափվում է շատերի համար՝ մեղքերի թողության համար»: Նա տառապում է որպես ճշմարիտ Զատկի Գառ՝ Իր վրա ընդունելով մահը, որ մենք պետք է ընդունեինք (Մատթեոս 26.28., համեմատե՛ք Մարկոս 10.45-ի հետ): Այդպիսով, փրկությունը մեզ տրված է անվճար, որովհետև Հիսուսը վճարել է դրա լրիվ գինը:

Ի՞նչ հույս է ծնում ձեր մեջ բերված առակներից յուրաքանչյուրը: Այս առակների կերպարներից որի՞ մեջ եք դուք ձեզ ճանաչում: Ձեր պատասխանն ի՞նչ է ասում այն մասին, թե ինչ փոփոխություններ պետք է տեղի ունենան ձեր հոգևոր կյանքում:

Երեքշաբթի դեկտեմբերի 23

Ավետարանները Պողոսի թղթերում

Իր շատ հայրենակիցների նման, Պողոսն էլ իրեն հոգևորապես բարեհաջող մարդ էր համարում: Բայց հետագայում նա տեսավ Հիսուսին՝ «Աստծո Որդուն, որ ինձ սիրեց և իր անձը ինձ համար մատնեց» (Գաղատացիս 2.20): Անսպասելիորեն նա գիտակցեց, որ ինքը ոչ թե փրկված է, այլ կործանված, ոչ թե Աստծո ծառա է, այլ Նրա թշնամին, ոչ թե արդար է, այլ մեղավորներից առաջինը: Ծածկոցը, որ նրա աչքերից չէր հանվել Հին Կտակարանի ընթերցանության ժամանակ, այժմ ընկավ: Անձամբ իրեն և Սուրբ Գրքի միջոցով տրված Աստծո հայտնության շնորհիվ նրա սիրտը վերափոխվեց, և կյանքը փոխվեց առհավետ: Մենք չենք հասկանա Պողոսի Ուղերձները, քանի դեռ չգիտենք այս կարևոր գործոնները:

Այս համատեքստում կարդացե՛ք Բ Կորնթացիս 3.14-16-ը, իսկ հետո՝ 2-6 համարները: Ո՞ր կարևոր քայլերն է շեշտում Պողոսը: _____

_____

_____

_____

Հին Կտակարանի նշանակությունը պարզ է դառնում միայն այն ժամանակ, «երբ դեպի Տերը կդառնան» (համար 16): Հիսուսը փրկության ուղին է: Ամեն բան սկսվում և ավարտվում է Նրանում: Հրեաների, այդ թվում և Պողոսի համար՝ նախքան նրա դարձի գալը, ովքեր ապավինում էին իրենց հնազանդությանը, Հին Կտակարանի ծառայությունը մահվան ծառայություն էր: Ինչո՞ւ: «Որովհետև ամենքը մեղանչեցին» (Հռոմեացիս 3.23), ներառյալ հրեա ժողովուրդը, այնպես որ պատվիրանները կարող էին միայն դատապարտել նրանց (Բ Կորնթացիս 3.7): Բայց, ի տարբերություն նրանց, Կորնթոսի հավատավորներն իրենցից ներկայացնում էին «Քրիստոսի թուղթը. գրված ոչ թե թանաքով, այլ կենդանի Աստծո Հոգով. ոչ թե քարեղեն տախտակների վրա, այլ սրտի մարմնեղեն տախտակների վրա» (համար 3):

Կարդացե՛ք Հռոմեացիս 1.16,17, 3.24-26-ը: Պողոսն ինչպե՞ս է բնորոշում Ավետարանը: Մենք ի՞նչ ենք ձեռք բերում Քրիստոսի հանդեպ հավատի միջոցով: _____

_____

_____

Ավետարանն «Աստծո զորությունն է՝ ի փրկություն ամեն հավատացյալի»: Արդարությունը հիմնված է ոչ թե այն բանի վրա, ինչ մենք անում ենք, այլ նրա վրա, ինչ արել է մեզ համար Քրիստոսը, և ինչին մենք ապավինում ենք հավատով: Այդ հավատն աճում է «հավատից հավատի մեջ» (Հռոմեացիս 1.17): Պողոսի այս միտքը հետագայում բացահայտվում է Հռոմեացիս թղթում, որի կենտրոնը երրորդ գլխի ավարտն է: Քրիստոսի միջոցով մենք ունենք փրկագնում (Աստված փրկագնել է մեզ՝ վճարելով մեր մեղքերի համար), արդարացում (մենք ազատվել ենք մեղավորությունից և մաքրված ենք շնորհով) և ներում (Աստված ընդունում է մեզ և «մոռանում է» մեր անցյալ մեղքերը): Զարմանալի է, բայց Քրիստոսի զոհի միջոցով Աստված ապացուցում է Իր արդարությունը՝ այն մեղավորներին արդարացնելու հարցում, ում հավատը կենտրոնացած է Հիսուսի վրա:

Չ որեքշաբթի **դեկտեմբերի 24**

«Նոր» ուխտ

Եբրայեցիս թուղթը նոր ուխտն անվանում է «ավելի լավը», քան հինն էր (Եբրայեցիս 8.1,2,6): Տրամաբանական հարց է ծագում՝ ինչո՞ւ

Աստված հաստատեց հին ուխտը, եթե այն կատարյալ չէր: Սակայն խնդիրը ոչ թե ուխտն էր, այլ մարդկանց արձագանքը դրան:

Կարդացե՛ք Եբրայեցիս 7.19, 8.9, 10.1-4-ը: Հին Կտակարանի հետ կապված ի՞նչ խնդիրներ են հիշատակված այս համարներում: _____

_____

_____

Մարդիկ «չմնացին այն ուխտի մեջ» (Եբրայեցիս 8.9), այլ անհնազանդություն և խռովարար հոգի դրսևորեցին: Այս փաստը, այն բանի հետ մեկտեղ, որ Հին Կտակարանում բերվող զոհի կենդանիները երբեք չէին կարողանա ոչնչացնել մեղքերը (Եբրայեցիս 10.4), նշանակում էր, որ մեղքի հիմնախնդիրը մնաց: Միայն «մեկ անգամ Հիսուս Քրիստոսի մարմնի պատարագով» մեղքը կարող էր քավվել, նաև այն մեղքերը, որոնք կատարվել էին առաջին ուխտի ժամանակ (Եբրայեցիս 10.10, 9.15): «(Որովհետև օրենքը ոչինչ կատարյալ չարեց) և ներս է մտնում մի ազնվագույն հույս, որով մոտենում ենք Աստծուն» (Եբրայեցիս 7.19)՝ նոր ուխտի խոստումների միջոցով:

Որոշ իմաստով Նոր ուխտը ամենևին էլ նոր չէ, որովհետև, սկսած Եդեմում՝ սերունդի մասին տրված խոստումից, որը կջախջախի օձի գլուխը, փրկության ծրագիրը միշտ կառուցվել է Քրիստոսի մահվան վրա՝ «Աշխարհի սկզբից ի վեր մորթված Գառի» (Հայտնություն 13.8, տե՛ս նաև Երեմիա 32.40, Եբրայեցիս 13.20,21, Հովհաննես 13.34-ը):

«Ծնորհի ուխտը նոր ճշմարտություն չէ, որովհետև այն գոյություն ուներ Աստծո մտքում հավիտյան: Ահա թե ինչու է այն անվանված հավիտենական ուխտ» (Է. Ուայթ, Հավատը, որով ես ապրում եմ, 77):

Մյուս կողմից, ինչպես մենք տեսնում ենք Պողոսի օրինակով, երբ մենք դիմում ենք Տիրոջը, ինչ-որ առանձնահատուկ բան է տեղի ունենում: Հավիտենական ուխտի համատեքստում Աստված խոստացել է. «Իմ երկյուղը կդնեմ նրանց սրտերում, որ ինձանից չհեռանան» (Երեմիա 32.40): Առանց հավատի կենդանիների զոհաբերությունը նմանվում էր մեղքերի դիմաց վճարի: Բայց Հիսուսի հայեցողությունը, Ով «խաչը հանձն առավ, ամոթն արհամարհելով», և «Իր դեմ եղած այսպիսի հակառակություն քաշեց մեղավորներից» (Եբրայեցիս 12.2, 3), բացահայտում է մեղքի անչափելի գինն ու բարի լուրն այն մասին, որ Նա վճարել է այդ գինը՝ «հավիտենական ուխտի արյունով» (13.20): «Նոր» ուխտը վերափոխում է ամեն բանի մեր տեսլականը, օրինակ՝ միմյանց սիրելու պատվիրանի: Այն այնքան էլ նոր չէ (Ղևտացոց 19.18),

բացառությամբ այն բանի, որ մենք պետք է ոչ թե պարզապես սիրենք մեր մերձավորին՝ «քո անձի պես», այլև «ինչպես ես [Հիսուսը] սիրեցի ձեզ» (Հովհաննես 13.34):

Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել մեզ շրջապատողներին սիրել այնպես, ինչպես Հիսուսը սիրեց մեզ:

Հինգշաբթի դեկտեմբերի 25

Ավետարանի գագաթնակետը

«Բայց յոթերորդ հրեշտակի օրերում երբ որ փողը փչի, Աստծո խորհուրդն էլ կկատարվի, ինչպես ավետարանեց իր ծառա մարգարեներին» (Հայտնություն 7.10):

Կարևոր է շեշտել, որ Հայտնություն 10.7-ը Հայտնություն գրքի երկու համարներից մեկն է (երկրորդը գրված է Հայտնություն 14.6-ում), որը որոշակիորեն մատնացույց է անում Ավետարանի քարոզը (հունարեն բառը, որը թարգմանված է «ավետարանում էր»՝ *եունգելիձո*, բառացի նշանակում է «բարի լուր հռչակել»): Յոթերորդ օրվա ադվենտիստների համար այս երկու գլուխները հատուկ նշանակություն ունեն, որովհետև նրանցում նկարագրված է մեր կանչվածությունն ու հանձնարարությունը: Աստված առանձնահատուկ կերպով հանձնարարել է մեզ, ինչպես մարդկանց ոչ մի այլ խմբի, հռչակել «հավիտենական Ավետարանը»:

Ինչպես մենք տեսանք, Ծննդոց գրքից մինչև Հայտնություն գիրքը Ավետարանը մնում է նույնը: Նույն օրենքը, նույն ուխտը: Հիսուսը, Պողոսն ու Հակոբոսը հաստատում են, որ այդ նույն Ավետարանին էր հավատում Աբրահամը (Հովհաննես 8.56, Հռոմեացիս 4.13, Հակոբոս 2.21-23): Ոմանց համար դժվար է համաձայնել այդ պնդմանը միայն այն պատճառով, որ նրանք Ավետարանը բնորոշում են առավել նեղ, քան սահմանում է Սուրբ Գիրքը: Սակայն Աբրահամի հնազանդ հավատը դրսևորվել է՝ Հիսուսի զոհը նախատեսված լինելու շնորհիվ: Փրկվելու համար մեզ պետք չէ հավատը հավասարակշռել գործերով: Բավական է միայն հավատը, բայց այն չպետք է լոկ մտավոր բնույթ ունենա, ինչպես սատանայինը, կամ ինքնավստահ լինի՝ պահանջելով Աստծո խոստումների կատարումը՝ չկատարելով փրկության պայմանները. հավատը պետք է լինի գործող:

Ինչո՞ւ Հայտնություն 12.17-ում և Հայտնություն 14.12-ում պատվիրանները պահելու, վկայության և Հիսուսի հա-

վատի մասին հիշատակումները առանձնահատուկ նշանակություն ունեն հավիտենական Ավետարանի համատեքստում: _____

_____

_____

Ժամանակի վերջում վճռորոշ հարցը հետևյալը կլինի. ո՞ւմ ենք մենք երկրպագում և հնազանդվում: Աստծո՞ւն՝ «երկինքը և երկիրը և ծովը և ջրերի աղբյուրները ստեղծողին» (Հայտնություն 14.7), թե՞ գազանին և նրա պատկերին: Հնազանդությունը պատվիրաններին (ներառյալ շաբաթ օրվա մասին պատվիրանը) Հիսուսի հավատի միջոցով տարբերում է նրանց, ովքեր հավատարիմ կմնան մինչև վերջ: Ճշմարիտ կրոնը հավատ ու հնազանդություն է պահանջում:

«Չնայելով ծաղրին ու հալածանքներին՝ մշտապես հռչակվում էր վկայությունն Աստծո հավիտենական Օրենքի և մարդու սրբազան պարտքի մասին՝ պատվել արարման շաբաթը:

Այդ ճշմարտությունները, ինչպես դրանք ներկայացված են Հայտնություն գրքի 14-րդ գլխում՝ «հավիտենական Ավետարանի» կապակցությամբ, կլինեն Քրիստոսի եկեղեցու տարբերիչ գծերը Նրա գալստյան ժամանակ: Որովհետև եռակի լուրի հռչակման հետևանքով կհայտարարվի. «Այստեղ են Աստծո պատվիրանները և Հիսուսի հավատը պահողները»» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 453, 454):

Ուրբաթ դեկտեմբերի 26

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Վերջին օրերի իրադարձությունները» գրքից կարդացե՛ք «Բարձրաձայն աղաղակ» գլուխը (198-202):

«Մենք պետք է ձգտենք դեպի բարձրագույն չափանիշը, առաջ գնանք և օգտվենք մեր բարձր առավելություններից: Մենք պետք է խոնարհաբար քայլենք Աստծո հետ, չհպարտանանք և չպարծենանք կատարյալ բնավորությամբ, այլ պարզ հավատով ապավինենք Աստծո Խոսքի յուրաքանչյուր խոստմանը, որովհետև դրանք տրված են հնազանդներին, և ոչ թե Աստծո Օրենքը խախտողներին: Մենք պետք է պարզապես հավատանք Աստծո վկայությանը և լիովին կախված լինենք Նրանից, այդ ժամանակ ինքնափառաբանման կամ հպարտության ամեն հնարավորություն կվերացվի: Մենք իսկապես կփրկվենք հավատով, բայց ոչ թե պասիվ, այլ սիրով գործող և հոգին

մաքրող հավատով: Քրիստոսի ձեռքը կարող է հասնել մեղավորներից վատթարագույնին և նրան հետ դարձնել անօրենությունից դեպի հնազանդություն, բայց ոչ մի քրիստոնեություն այնքան բարձր չէ, որ վեր բարձրանա Աստծո սրբազան Օրենքի պահանջներից: Այդ դեպքում Քրիստոսը չէր կարողանա օգնել, դա չէր համապատասխանի Նրա ուսմունքին և Նրա օրինակին, որովհետև Նա ասում է. «Ես Իմ Հոր պատվիրանները պահեցի և կենում եմ Նրա սիրո մեջ»: Եվ Քրիստոսի բոլոր հետևորդները հնազանդություն կդրսևորեն Աստծո սրբազան օրենքին» (Է. Ուայթ, Ժամանակի նշանները, մարտի 31,1890 թ.):

Հարցեր քննարկման համար

1. Խոսեցե՛ք տարբեր ավետարանների շեշտերի մասին Հիսուսի, Հակոբոսի և Պողոսի ուսմունքների մեջ՝ ներառյալ նրանց նմանություններն ու տարբերությունները: Համատեղելով դրանք և տեսնելով ողջ պատկերը՝ ինչպե՞ս կարող ենք պաշտպանվել օրինամոլությունից, ինչպես նաև «էժանագին շնորհից»:
2. Հիասթափություն ապրելով մեր հոգևոր վիճակից՝ ի՞նչ խոստումների կարող ենք դիմել՝ վերագտնելու մեր հոգու առույգությունը: Ինչո՞ւ անգամ ամենամռայլ ժամանակներում մենք երբեք չպետք է հանձնվենք: Ինչո՞ւ Քրիստոսի խոստումները արդարության վերաբերյալ, որոնք պարգև են անարժան մեղավորների համար, հանդիսանում են բանալի, որը մեզ պաշտպանում է հիասթափությունից:
3. Երեք հրեշտակների լուրը շատ սերտորեն արարումը կապում է փրկագնման և փրկության հետ: Այդ նույնը մենք տեսնում ենք Հովհաննես 1.1-14-ում: Ինչո՞ւ են այս երկու թեմաներն այդքան սերտորեն կապակցված: Դրանց սերտ կապն ինչպե՞ս է օգնում բացատրելու, թե ինչու է շաբաթն Աստծո Օրենքի այդքան կարևոր բաղադրիչը: Այդ սերտ կապն ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալու շաբաթի կանոնագույն դերը վերջին օրերի եզրափակիչ հակամարտության մեջ:

ՆՈՐՈՒՅԹ

Սեր և օրենք

Այս աշխատությունն իր մեջ ներառում է Աստվածաշնչի գրեթե բոլոր այն տեքստերի վերլուծությունը, որոնք այս կամ այն կերպ առնչվում են Արարչի հանդեպ սիրո և Նրա պատվիրանները պահելու հետ:
Ընդհանուր գծերով լուսաբանվում են նաև մեր երկրի կրոնական կյանքում տեղի ունեցող վերջին զարգացումներն ու հեռանկարները բիբլիական մարգարեությունների լույսի ներքո:
Նախատեսված է Սուրբ Գրքի հետազոտողների, եկեղեցական սպասավորների և շարքային ուսումնասեր քրիստոնյաների համար:



ՆՈՐՈՒՅԹ

Ընտանեկան կյանքի ձեռնարկ

Իմաստությամբ և սիրով ամրապնդված ընտանիքը կարող է դիմագրավել մեր օրերի կենսական փոթորիկներին: Հասարակության մեջ շատ կարծրատիպեր են ձևավորվել, որոնք թույլ չեն տալիս ընտանիքին զարգանալու և աճելու: Դա կարող է լինել փոխադարձ բռնությունը, թյուրըմբռնողությունը և պարզապես հիմնարար սկզբունքների չիմացությունը:
Իսկ ահա ընտանեկան երջանկությանը նպաստող ճիշտ սկզբունքների իմացությունը և կյանքում դրանք կիրառելը շատ ու շատ խնդիրներից կազատագրի ընտանիքը:

ՆՈՐՈՒՅԹ

Երևակայության սահմաններից անդին

Այս գրքում մենք կհետազոտենք Տիեզերքի և մեր մոլորակի վրա կյանքի որոշ հիրաշքներ: Բայց, որ ավելի կարևոր է. մենք կհետազոտենք մեր սեփական գոյության հիրաշքը: Մարդկության պատմության առաջին իսկ օրերից մարդիկ փորձել են գտնել կյանքի ամենագլխավոր հարցերի պատասխանները: Ինչո՞ւ ենք մենք այստեղ: Ո՞ւր ենք մենք գնում: Մեզ հետ ի՞նչ է լինելու մահից հետո:
Սկսե՛ք այս ճանապարհորդությունը՝ ձեռք բերելու համար ոչ միայն կյանքի հիրաշքները, այլ նաև ինչ-որ առավել զարմանահրաշ մի բան՝ սեր՝ երևակայության սահմաններից դուրս:

ՆՈՐՈՒՅԹ

Մեծ հակամարտություն

«Մեծ պայքարի» տեսիլքը էլեն Ուայթին տրվել է 1858 թ. գարնանը ԱՄՆ-ի Օհայո նահանգում՝ Լովետս Գրովում: Դրա հետ կապած շատ բան նա տեսել էր ավելի քան 11 տարի առաջ, սակայն այս անգամ նրան հանձնարարվեց գրի առնել այդ ամենը, չնայած սատանան պետք է մեծ ջանքեր գործադրեր՝ խոչընդոտելու դրան: Որոշ մաս՝ հատկապես 30-րդ գլուխը, հրատարակվել է 1847 թ.՝ «Փոքր հոտ», 1851 թ.՝ «Քրիստոնեական փորձառություններ և տեսիլքներ», և 1854 թ.՝ «Հավելված» գրքույկներում: Այդ ամենը ներշնչվել է Սուրբ Հոգու կողմից, գրի առնվել փխրուն, սակայն աստվածավախ կնոջ կողմից, և առաջին անգամ տպագրվել 1858 թվականին:

Ծաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2014 թվականի չորրորդ եռամսյակ

ՀԱԿՈԲՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ

Քլինթոն Վոլեն

Գլխավոր խմբագիր՝ Պավել Սարգսյան
Թարգմանությունը և համակարգչային շարվածքը՝ Մերինե Աթոյան
Վերստուգող՝ Ալվարդ Մադոյան
Գրական խմբագիր՝ Գեղեցիկ Մարտիրոսյան
Համակարգչային ձևավորող՝ Կորյուն Կակոյան